



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ
(1998-2000)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ (1998-2000)

Հայաստանի առաջատար ՁԼՄ-ների դիտարկումը Երեւանի մամուլի ակումբն իրականացրել է երկու տարվա ընթացքում (1998-2000), «Լրատվամիջոցները անցումային շրջանում» ծրագրի շրջանակներում, Եվրոպական ժողովրդավարական նախաձեռնության աջակցությամբ:

Դիտարկման նպատակը եղել է՝ ստացված տվյալների վերլուծության միջոցով որոշել.

- տպագիր եւ էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից թեմաների ընդգրկումն ու դրանց հանդեպ ուշադրությունը որքանով են արտացոլում այդ թեմաների իրական հրատապությունը, եւ որքանով են դրանք համապատասխանում լսարանի պահանջարկին,

- ՁԼՄ-ների ուշադրության աստիճանն այս կամ այն քաղաքական գործչի կամ խմբավորման նկատմամբ, ինչպես նաեւ կոնկրետ լրատվամիջոցի վրա որեւէ քաղաքական գործչի կամ խմբավորման ազդեցության աստիճանը:

Սույն դիտարկումն արժեքավոր է եղել առաջին հերթին այն պատճառով, որ Հայաստանի անկախացումից ի վեր առաջին անգամ հայկական ՁԼՄ-ները դիտարկվել են ոչ թե ժամանակ առ ժամանակ՝ քաղաքական քարոզարշավների ընթացքում, այլ տեւականորեն՝ երկու տարի շարունակ: Հետագուտված ՁԼՄ-ների ցանկը դիտարկման ամբողջ ընթացքում փոփոխվել է՝ կապված դրանց ազդեցիկության եւ ժողովրդականության փոփոխությունների, նոր լրատվամիջոցների երեւան գալու եւ հների անհետանալու հետ:

Հետագոտության արդյունքների հիման վրա յուրաքանչյուր երկու ամիսը մեկ պատրաստվել են միջանկյալ հաշվետվություններ, իսկ յուրաքանչյուր տարեսկզբին՝ տարեկան հաշվետվություններ, որոնցում ներկայացվել են դիտարկման օբյեկտների քանակական եւ որակական վերլուծությունները: Բոլոր հաշվետվությունները հրապարակվել են 1996-ի սեպտեմբերից մինչեւ 2000 թվականի մայիսը տպագիր տարբերակով լույս տեսնող «Երեւանի մամուլի ակումբ» Տեղեկագրում (հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով): Բացի այդ, դիտարկման արդյունքները մամուլի ասուլիսների, «կլոր սեղանների», սեմինարների, դասընթացների եւ այլ միջոցառումների ընթացքում ներկայացվել են լրագրողական հանրության լայն քննարկմանը, լուսաբանվել են հայկական եւ արտասահմանյան լրատվամիջոցներով, դարձել հիմք՝ լրագրության ոլորտի մի շարք ուսումնասիրությունների համար: Դիտարկման նյութերը հաճախակի օգտագործել են ասպիրանտներն ու ուսանողները: Հայ պետական եւ քաղաքական գործիչները նույնպես բավական շահագրգիռ կերպով հետեւել են իրենց վարկանիշային ցուցանիշներին եւ ըստ այդմ՝ ձգտել շտկել իրենց հարաբերությունները մամուլի հետ:

Ստորեւ ներկայացված է բանաքաղ՝ ԵՄԱ երկամյա ուսումնասիրության նյութերից: Դիտարկման արդյունքների բոլոր նյութերին, ինչպես նաեւ քանակական տվյալներ պարունակող աղյուսակներին կարող եք ծանոթանալ Երեւանի մամուլի ակումբում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԼՍՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1 սեպտեմբերի - 31 հոկտեմբերի, 1998

Սեպտեմբեր-հոկտեմբերի դիտարկման արդյունքները վկայում են, որ հայկական լրատվամիջոցների մեծ մասը գրեթե միաբան են եղել հիմնական թեմաների ընտրության հարցում:

Այդ թեմաներից մեկը կոնյակի գործարանի սեփականաշնորհման հարցի առնչությամբ Աժ արտահերթ նստաշրջան չիրավիրելու համար նախագահի պաշտոնանկության հարցն էր: Այս թեմային անմիջականորեն առնչվում են նաև մի շարք ձեռնարկություններ, այդ թվում նաև կոնյակի գործարանը սեփականաշնորհվող օբյեկտների ցուցակից հանելու օրենսդրական նախաձեռնությունը: Տարբեր ՁԼՍ-ների մոտեցումներն այդ առիթով էապես տարբերվում են: «Հայաստանի Հանրապետութիւնը» եւ «Ռեսպուբլիկա Արմենիան» այս հարցերի քննարկումը դիտարկում էին որպես նախընտրական արշավի սկիզբ, որպես մի շարք քաղաքական գործիչների կողմից ինքնագովազդի նպատակով շահարկում: «Հայք» շաբաթաթերթը պաշտպանում էր Աժ «Հանրապետություն» խմբակցության հայտարարության մեջ արտահայտված տեսակետը (այսինքն հավաստում էր այն պնդումը, թե նախագահը խախտել է սահմանադրությունը): Հիմնականում նման տեսակետ ուներ նաև «Առավոտ»-ը՝ ընդ որում պահպանելով յուրահատուկ հեզմական տոնը: Մյուս ՁԼՍ-ներն աշխատում էին հարցը լուսաբանել լրատվական տեսանկյունից (էլեկտրոնային ՁԼՍ-ներ), կամ էլ տարբեր կարծիքներ արտացոլել (տպագիր ՁԼՍ-ներ): Համեմատաբար քիչ է այս թեմային անդրադարձել «Երկիրը»:

Լայնորեն են լուսաբանվել նաև նոր Ընտրական օրենսգրքի քննարկումները: Ընդ որում, պաշտոնական ՁԼՍ-ներն այս պարագայում ավելի քիչ վերլուծական հրապարակումներ ունեին, քան կուսակցականներն ու անկախները: Ընտրական օրենսգրքի առնչությամբ կարծիքների բազմազանությունն ամենաշատ արտացոլել են «Ազգն» ու «Երկիրը»:

ՌԴ տնտեսական ճգնաժամին անդրադարձել են գրեթե բոլորը: Գիշտ է, «Հայքը» խնդիրն արծարծել է հիմնականում մեկ անգամ, իսկ «Հայաստանի Հանրապետութիւնը» զգալիորեն զիջում էր մյուս օրաթերթերին: Էլեկտրոնային լրատվամիջոցների դիտարկվող ծրագրերը (բացի «Տեսադաշտից») սահմանափակվել են տեղեկատվական նյութերով: Ինքնուրույն վերլուծությունների եւ Հայաստանում իրադրության հետ զուգահեռներ անցկացնելու փորձեր են արել «Ռեսպուբլիկա Արմենիա», «Ազգ», «Առավոտ» եւ «Իրավունք» թերթերը: Վերջինս, ընդ որում, համաձայն չէր կառավարության ներկայացուցիչների այն պնդմանը, որ ռուսական ճգնաժամը էապես չի ազդի Հայաստանի վրա:

ՏՐԱՍԵԿԱ ծրագիրը եւ Հայաստանի պատվիրակության մասնակցությունը Բաքվի համաժողովին նույնպես լուսաբանվել են բոլոր ՁԼՍ-ներում, բայց՝ խիստ տարբեր: «Հայաստանի Հանրապետութիւնը» զուտ պաշտոնական տեսանկյունից, «Ռեսպուբլիկա Արմենիան», ՀԱՀ-ի ՀԱՌ-ի տեղեկատվական-վերլուծական ծրագրերը թեման ներկայացրել են մանրամասնորեն եւ տնտեսական տեսանկյունից, «Ազգը»՝ բազմազան, «Հայքն» ու «Առավոտը» հայկական իշխանությունների գործունեությունն այս բնագավառում լուսաբանել են քննադատական-հեզմական առումով: «Երկիրն» ու «Հայոց աշխարհը» թեմային ավելի քիչ ուշադրություն են դարձրել, քան մյուսները:

Ուշադրության կենտրոնում է եղել նաև պետության եւ ՁԼՍ-ների փոխհարաբերության խնդիրը: Հիմնական առիթը Աժ-ի հակասություններն էին ՀԱՀ-ի ղեկավարության եւ «Հայաստանի Հանրապետութեան» աշխատակիցների հետ: Վերջիններս համաձայն չէին գլխավոր խմբագրին փոխելու որոշմանը: Դիտարկվող թերթերը հիմնականում ջանում էին մասնագիտական համերաշխություն դրսեւորել, բայց ընդհանուր առմամբ չէին

կարողանում ձեռնպահ մնալ այս կամ այն լրագրողների կամ խմբերի դեմ սուբյեկտիվ հարձակումներից:

Նախագահի մամուլի քարտուղար Կասյա Աբգարյանի շուրջ սեպտեմբերի սկզբին ծագած աղմուկը հասարակական-քաղաքական կյանքի խոշորագույն իրադարձությունների հետ նույն շարքում դասեց նրա նշանակման ու աշխատանքի թեման: Արդյունքում մի շարք լրատվամիջոցներում Աբգարյանը հիշատակումների քանակով եւ խոսքին տրված տեղի առումով առաջ անցավ իր շեֆից՝ ԶԶ Նախագահից: Ընդ որում, լրատվամիջոցները բաժանվել են երկու խմբի. «Երկիրը», «Առավոտը», «Հայոց աշխարհը», «Գոլոս Արմենիին» ջանում էին հնարավորինս շատ խոցել մամուլի քարտուղարին եւ վարկաբեկել նրան: Հետաքրքիր է, որ այս հարցում «ընդհանուր լեզու» էին գտել ամենատարբեր քաղաքական ուղղվածության թերթերը: Մյուսները բարոյական կամ այլ նկատառումներով չմիացան այս արշավին, այդուհանդերձ բավականին մանրամասնորեն էին լուսաբանում Աբգարյանի գործունեությունը: Պետք է նշել, որ հենց Կասյա Աբգարյանը թողեց խոսնակի պաշտոնը, մնալով միայն նախագահի խորհրդական, հարձակումները դադարեցին, եւ մամուլի ուշադրությունը նրա հանդեպ զգալիորեն նվազեց:

Քաղաքական գործիչների հիշատակումների եւ նրանց խոսքին տրամադրված թերթային մակերեսի ու եթերային ժամանակի առումով դիտարկվող լրատվամիջոցները դարձյալ կարելի է երկու խմբի բաժանել: Առաջինն ավանդականն է. «Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերը, «Հայլուր» հեռուստածրագիրը եւ «Լուրեր» ռադիոծրագիրը հատուկ ուշադրություն էին դարձնում նախագահին, վարչապետին եւ խորհրդարանի ղեկավարին: Մյուս թերթերն ու ծրագրերը տարբեր չափով հեռացել են ուշադրության կենտրոնում գտնվող քաղաքական գործիչների այս ավանդական եռյակից:

Հետաքրքիր է նաեւ, որ երկու թերթ՝ «Առավոտն» ու «Իրավունքը», որոնց դժվար է նույն քաղաքական կողմնորոշման համարել, պարբերաբար եւ ծավալուն անդրադառնում են ԶԶԸ առաջնորդ Վանո Սիրադեղյանի կարծիքներին: Վերջինս այս հրատարակությունների միջոցով իր կարծիքն է հայտնում հայ հասարակությանը հուզող գրեթե բոլոր հիմնական խնդիրների շուրջ:

Հիշատակման է արժանի նաեւ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ֆենոմենը, որը հետեւողականորեն խուսափում է մամուլի ու հանրության հետ շփումներից, սակայն լրատվամիջոցների մեծ մասում առաջատար տեղեր է գրավում հիշատակումների առումով:

Սեպտեմբեր-հոկտեմբերին ընդհանուր առմամբ աճել է քաղաքական գործիչների նշանային (դրական եւ հատկապես բացասական) հիշատակումների քանակը: Դիտարկող խումբը ենթադրում էր, որ խորհրդարանական ընտրությունների մոտենալու եւ քաղաքական պայքարի սրացմանը համընթաց այդ երեւույթը կշարունակվի: Միաժամանակ, նշանային հիշատակումները մամուլում եւ եթերում առայժմ հայտնվում են մեջբերումների, այս կամ այն քաղաքական գործչին հղումների հետեւանքով: Լրագրողներն իրենք, բացի «Գոլոս Արմենիի»-ից, խուսափում են ուղղակի դրական կամ բացասական հիշատակումներից:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետություն»-օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ԶԶ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6500 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար, որից 6-ը՝ 2 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ), եւ 1 համար՝ 2,5 տպ. մամուլ (A2 չափի 6 էջ):

«Հայաստանի Հանրապետություն» սեպտեմբեր-հոկտեմբերին էլ հավատարիմ է մնացել իր թեմատիկ հակումներին: Ամենաշատ տեղ տրամադրվել է զովագր/հայտարարու-

թյուններին՝ 17,02%, մշակույթ/պատմությանը՝ 13,42%, միջազգային կյանքին՝ 11,63%, տնտեսությանը՝ 10,58%: Նախորդ երկու ամիսների համեմատությամբ միայն տնտեսությանն ու միջազգային կյանքն են տեղերը փոխել:

Նախորդ հաշվետվություններում դիտարկող խումբը նշել էր, որ հայկական լրատվամիջոցներում թեմատիկ բաշխումը շատ անգամ խմբագրի եւ աշխատակիցների լրագրողական անձնական հակումների արտացոլումն էր լինում: Հոկտեմբերի կեսերին փոխվեց «ՀՀ»-ի խմբագիրը եւ ստեղծագործական կազմի զգալի մասը: Սակայն, ամենայն հավանականությամբ, կես ամսվա ընթացքում թերթի ուղղությունը չէր կարող խիստ փոփոխվել: Հավանաբար պատկերը կփոխվի արդեն նոյեմբեր-դեկտեմբերի արդյունքներով:

Որպես պաշտոնաթերթ՝ «ՀՀ»-ն շատ է օգտվում պաշտոնական աղբյուրներից, հատկապես զանազան մամուլի ծառայությունների տրամադրած նյութերից, որոնք, որպես կանոն, տպագրում է ամբողջ ծավալով:

Եթե արտասահմանյան թղթակիցներ չունեցող թերթի համար միանգամայն բնական է, որ միջազգային կյանքի մասին նյութերի 82,56%-ն այլ աղբյուրներից են, ապա Հայաստանի արտաքին քաղաքականության բաժնում նման ցուցանիշը (նյութերի 72,11%-ը այլ աղբյուրներից է) ավելի դժվար է բացատրել:

Քաղաքական գործիչների շարքում հիշատակումների առումով դարձյալ առաջատար են ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ 256 (այդ թվում՝ 1 դրական, 3 բացասական), վարչապետ Արմեն Դարբինյանը՝ 154 (այդ թվում՝ 4 դրական), խորհրդարանի խոսնակ Խոսրով Հարությունյանը՝ 121 (այդ թվում՝ 1 բացասական): Աժ աշնանային նստաշրջանի սկսվելու հետ Խ.Հարությունյանի հիշատակումներն ավելի հաճախակի են դարձել, եւ նրա ու Դարբինյանի միջեւ խզումը փոքրացել է (նախորդ երկամսյակում համապատասխանաբար եղել է 58 եւ 121): ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը հիշատակվել է 49 անգամ (բոլորը՝ չեզոք):

Նույն պաշտոնական քառյակն է առջեւում նաեւ քաղաքական գործիչների տեսակետներին ու խոսքին տրված տարածքի առումով. Արմեն Դարբինյան՝ 4.411,70 քառ.սմ, Ռոբերտ Քոչարյան՝ 3.920,74 քառ.սմ, Խոսրով Հարությունյան՝ 3.046,29 քառ.սմ, Վարդան Օսկանյան՝ 2.481,44 քառ.սմ:

Սեպտեմբեր-հոկտեմբերի սուր թեմաները՝ ՀՀ նախագահի հնարավոր պաշտոնանկությունը՝ Սահմանադրությունը խախտելու (որոշ քաղաքական գործիչների կարծիքով) պատճառով, եւ մի շարք ձեռնարկությունները սեփականաշնորհման ցուցակներից հանելու մասին պահանջը, «ՀՀ»-ն լուսաբանել է հիմնականում այն տեսանկյունից, թե սրանք քաղաքական խաղեր են՝ խորհրդարանական ընտրությունների նախաշեմին:

Թերթը մանրակրկիտ քննարկել է պետություն-մամուլ փոխհարաբերությունների հարցը: Ընդ որում, մինչեւ գլխավոր խմբագրի փոփոխությունը այդ թեմայով հիմնականում պրորբլեմային նյութեր էին հրապարակվում, իսկ փոփոխությունից հետո (հոկտեմբերի 15-ից) «ՀՀ»-ն, ցավոք սրտի, ներքաշվեց նախկին եւ նոր խմբագիրների կողմնակիցների միջեւ փոխադարձ վիրավորանքների մեջ:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա»-օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար:

Դիտարկման նախորդ երկամսյակում արդեն նկատվել էր, որ մեծացել է միջազգային կյանքի մասին նյութերի ծավալը, ինչի հետեւանքով այդ թեման առաջին տեղում հայտնվեց՝ 13,61%-ը: Ընդ որում, թեմայի բոլոր ենթաբաժիններում, բացառությամբ միջազգային կազմակերպությունների մասին բաժնի, գերակշռում են սեփական նյութերը: Ինչպես

եւ նախորդ անգամ, ամենից շատ լուսաբանվել է Ռուսաստանը՝ 4,67%: ՌԴ տնտեսական ու քաղաքական իրադրության մասին վերլուծություններ ու մեկնաբանություններ կային գրեթե յուրաքանչյուր համարում: Ֆինանսական ճգնաժամը, որին հետեւեց նաեւ ՊԿՓ-ի կործանումը, հայկական պետական արժեթղթերի շուկայում իրադրության մասին խոսակցության առիթ դարձավ: Ադրբեջանի նկատմամբ ուշադրության աճը (2,44%) նախ եւ առաջ կապված է նախագահական ընտրությունների եւ նավթի թեմայի հետ, որն արժարժվել էր «ՌԱ»-ի սեպտեմբերյան 5 համարներում:

«ՌԱ»-ում ավանդաբար առաջին տեղում գտնվող տնտեսական թեման այս անգամ երկրորդն է՝ 11,53%: Դիտարկման չորս ամիսների ընթացքում շարունակում է պակասել գովազդ/հայտարարությունների ծավալը (10,60%), մայիս-օգոստոսի երկրորդ-երրորդ տեղից այս թեման իջել է չորրորդ տեղը: Երրորդ տեղ է բարձրացել մշակույթ/պատմությունը՝ 10,83% (հատկապես լայնորեն է լուսաբանվել Հայաստանում հոկտեմբերի վերջին տեղի ունեցած միջազգային ջազ-փառատոնը):

Այդուհանդերձ զգալիորեն ավելացել է սեփական նյութերի ծավալը. դրանք գերակշռում են գրեթե բոլոր թեմաներում, բացառությամբ արտաքին քաղաքականության, պատահար/զվարճալիքի եւ արդեն հիշատակված միջազգային կազմակերպությունների թեմաների:

Սեպտեմբերի կեսին սկսված եւ բավականին աշխույժ ընթացող խորհրդարանական նստաշրջանի լուսաբանումը ԱԺ/օրենսդրություն թեմայի ցուցանիշը վերադարձրեց գրեթե նույն մակարդակին, ինչ մայիս-հունիսին էր (4,14%): Արդեն առաջին սեպտեմբերյան համարում «ՌԱ»-ն այս նստաշրջանը բնութագրեց որպես «միջկուսակցական նախընտրական պայքարի» սկիզբ, ինչպես նաեւ որպես «առանձին պատգամավորների կողմից անձնական գովազդի» միջոց (*«ՌԱ», #164, 1 սեպտեմբերի, 1998*):

Սեպտեմբեր-հոկտեմբերին թերթը բազմիցս անդրադարձել է լրատվամիջոցների թեմային (2,36%): Հասարակության մեջ մամուլի դերի մասին խոսվել է նոր-նոր նախագահի մամուլի խոսնակ նշանակված Կասյա Աբգարյանի հետ ծավալուն հարցազրույցում: «Մամուլի ակումբ» նոր խորագրով տպագրվել են երկխոսություններ գործընկերների հետ՝ հայկական լրատվամիջոցների խնդիրների մասին, լայնորեն լուսաբանվել են սեպտեմբերի վերջին Հայաստանում տեղի ունեցած ՌԴ, ԱՊՀ եւ Մերձբալթյան երկրների մամուլի օրերը, արտատպել են այն հոդվածները, որոնցում մեր երկրում եղած լրագրողները վերադարձից հետո պատմել են իրենց տպավորությունների մասին: Իսկ այս շրջանի համար հրատապ՝ մամուլ-պետություն փոխհարաբերության հարցում «ՌԱ»-ն մեկնաբանություններից ձեռնպահ է մնացել:

«ՌԱ»-ի էջերում լայնորեն արտացոլվել է նաեւ մյուս առանցքային թեման՝ տարածաշրջանային համագործակցությունը (3,68%): ՏՐԱՍԵԿԱ ծրագրի միջազգային համաժողովին Բաքու մեկնած վարչապետին ուղեկցող իրենց հատուկ թղթակցի նյութերից բացի տպագրվել են նաեւ Արմեն Դարբինյանի ելույթը Բաքվի գագաթաժողովում, նյութեր հենց Սետաքսի ճանապարհի մասին, վերլուծվել են այդ ծրագրին Հայաստանի մասնակցության դրական ու բացասական կողմերը եւ այլն:

Քաղաքական գործիչների հիշատակումների եւ նրանց կարծիքներին տրված տեղի առումով առաջատարը նույն քառյակն է, ինչ եւ դիտարկման նախորդ շրջաններում: Ռոբերտ Քոչարյանը հիշատակվել է 198 անգամ եւ ստացել 4.262,58 քառ.սմ, Արմեն Դարբինյանը՝ 113 անգամ, սակայն նրա կարծիքներին ու խոսքին տրված տարածքը՝ 1.934,23 քառ.սմ, ավելի քիչ է, քան Խոսրով Հարությունյանինը (2.404,05 քառ.սմ՝ 76 հիշատակումների պարագայում): Առաջատար քառյակը եզրափակում է Վարդան Օսկանյանը՝ 43 հիշատակում եւ 1.551,34 քառ.սմ:

Դրական հիշատակում են ստացել ընդամենը 5 քաղաքական գործիչ. Դարբինյանը՝ 3 անգամ, 1-ական անգամ՝ Քոչարյանը, Հարությունյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին 1-ինը եւ նախկին վարչապետ Հրանտ Բազրատյանը: Բացասական են հիշատակվել դարձյալ հինգ քաղաքական գործիչներ. 1-ական անգամ՝ Հրանտ Բազրատյանը եւ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովհաննես Իգիթյանը, 2-ական անգամ՝ «ժողովրդավարական հայրենիք» կուսակցության առաջնորդ Էդուարդ

Եզորյանը եւ Ռոբերտ Քոչարյանը, 3 անգամ՝ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ընդ որում, դիտարկման ողջ ընթացքում նախկին եւ ներկա նախագահները բացասական համատեքստում հիշատակվում են առաջին անգամ: Տեր-Պետրոսյանի հասցեին քննադատությունը առնչվել է նրա ղեկավարության շրջանին, իսկ Ռոբերտ Քոչարյանի հասցեին բացասական հիշատակումները հնչել են ընդդիմության ներկայացուցիչների խոսքերում:

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ»-օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար:

Ինչպես եւ նախորդ երկամսյակում, թերթն ամենաշատ մակերես տրամադրել է միջազգային կյանքին՝ 16,21%, երկրորդ տեղում է սպորտը՝ 12,12%, իսկ երրորդում՝ մշակույթ/պատմությունը՝ 11,94%: Ավանդաբար «Ազգը» դիտարկված մյուս բոլոր հրատարակություններից ավելի շատ է ուշադրություն դարձնում լրատվամիջոցների խնդիրներին՝ 3,65%:

Քաղաքական գործիչներից «Ազգում» ամենաշատ հիշատակվել են Ռոբերտ Քոչարյանը՝ 168 անգամ (այդ թվում՝ 5 դրական, 13 բացասական): Նրան հաջորդում են Արմեն Դարբինյանը՝ 76 անգամ (այդ թվում՝ 1 դրական, 3 բացասական), Խոսրով Հարությունյանը եւ Վարդան Օսկանյանը՝ 32-ական անգամ (Հարությունյանը 3 բացասական հիշատակում ունի, իսկ Օսկանյանի բոլոր հիշատակումները չեզոք են): Լեւոն Տեր-Պետրոսյանի 28 հիշատակումներից 6-ը բացասական են, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի 25 հիշատակումներից 3-ը դրական են, 4ը՝ բացասական:

Կարծիքներին տրամադրված մակերեսի առումով առաջին տեղում է ՀՀ նախագահին առընթեր քաղաքական խորհրդի քարտուղար, «Սահմանադրական իրավունք» միության նախագահ Հրանտ Խաչատրյանը (1.940,50 քառ.սմ): Երկրորդ տեղում է նախագահի խորհրդական Կասյա Աբգարյանը (1.780,25 քառ.սմ), իսկ երրորդ տեղում ինքը Քոչարյանն է (1.769,30 քառ.սմ): Ինչպես երեւում է, թերթը հատուկ ուշադրություն է դարձնում նախագահական պալատում հնչող կարծիքներին, որտեղ դիտարկված ժամանակամիջոցում բավականին հաճախ են մամուլի ասուլիսներ ու ճեպագրույցներ կազմակերպվել:

Թերթը մանրամասն լուսաբանել է հայ հանրությանը սեպտեմբեր-հոկտեմբերին հատկապես հուզած խնդիրները. նախագահի պաշտոնանկության շուրջ քննարկումները, սեփականաշնորհվող օբյեկտների ցուցակից մի քանիսը հանելու հարցը, ՏՐԱՍԵԿԱ ծրագիրը, պետություն-մամուլ փոխհարաբերությունները, ընտրական օրենսգիրքը: Ընդ որում, «Ազգը», որպես կանոն, ջանում է տեղ տալ տարբեր դիրքորոշումներին:

Միջազգային կյանք բաժնում թերթն առաջին անգամ այսքան տեղ է հատկացնում Ռուսաստանին (3,30%), դա կապված էր ՌԴ-ում տնտեսական ճգնաժամի եւ Հայաստանի վրա դրա ազդեցության լուսաբանման հետ:

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր»-օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ ՀՀԴ Գերագույն մարմին: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Հոկտեմբերի 6-ից գինը դարձել է 50 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար:

Այս թերթում էլ, ինչպես եւ առաջ, առաջին տեղում է միջազգային կյանքի թեման՝ 21,50%: Ավելին, այս ծավալն աճել է. հուլիս-օգոստոսին 15,19% էր: Երկրորդ տեղում մշակույթ/պատմությունն է (12,28%), երրորդում՝ ներքին քաղաքականությունը (9,56%):

Ինչպես եւ «Ազգում», «Երկիր»-ում էլ է աճել Ռուսաստանին նվիրված նյութերի ծավալը (4,42%), սակայն, ի տարբերություն «Ազգի», այստեղ գրեթե զուգահեռներ չկային ՌԴ-ում տնտեսական ճգնաժամի եւ Հայաստանում իրադրության միջեւ:

«Երկիրը», ավանդույթի համաձայն, բոլոր դիտարկվող լրատվամիջոցներից ամենից շատ է տեղ հատկացրել գիտություն/կրթություն թեմային՝ 5,41%: Միաժամանակ, ի տարբերություն հայ մամուլի մեծ մասի, որը սեպտեմբեր-հոկտեմբերին լայնորեն քննարկում էր ՁԼՄ-ների խնդիրները, թերթը մասամբ հեռու մնաց այս քննարկումներից: Ավելին, լրատվամիջոցներին նվիրված նյութերի ծավալը «Երկիրում» նախորդ երկամսյակի համեմատությամբ կրճատվել է (3,16%-ից իջել է 1,61%-ի):

«Երկիրում» մյուսներից ավելի հաճախ է հիշատակվել Ռոբերտ Քոչարյանը՝ 153 անգամ (այդ թվում՝ 1 դրական, 5 բացասական): Նրան հաջորդում են Արմեն Դարբինյանը՝ 83 (այդ թվում՝ 1 բացասական), Խոսրով Հարությունյանը՝ 50 (այդ թվում՝ 1 դրական, 3 բացասական), Վարդան Օսկանյանը՝ 36 (այդ թվում՝ 1-ական դրական ու բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 30 (այդ թվում՝ 1 դրական, 11 բացասական):

Տեսակետներին տրված տարածքի առումով առաջատար են Վարդան Օսկանյանը (1.890,10 քառ.սմ), Ռոբերտ Քոչարյանը (1.594,55 քառ.սմ), նախագահի խորհրդական Վահան Հովհաննիսյանը (1.566,00 քառ.սմ) եւ Արմեն Դարբինյանը (1.381,50 քառ.սմ):

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ»-օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ թերթի խմբագրական խորհուրդ: Ծավալը՝ 4 տպ. մամուլ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար:

Սեպտեմբեր-հոկտեմբերին թերթում առաջատար էր միջազգային կյանքի թեման՝ 13,28%: Դրան հաջորդում են ներքին քաղաքականությունը՝ 9,97%, գովազդ/հայտարարությունները՝ 8,64%, տնտեսությունը՝ 8,46%, մշակույթ/պատմությունը՝ 8,33%:

«Առավոտը» բավականին կայուն է թեմաների բաշխման առումով եւ այստեղ, դիտարկված նախորդ շրջանների համեմատությամբ, փոփոխություններն անէական են:

Հիշատակումների առումով քաղաքական գործիչների մեջ առաջատարը դարձյալ Ռոբերտ Քոչարյանն է. 310 (այդ թվում՝ 1 դրական, 11 բացասական): Նրան հետեւում են Արմեն Դարբինյանը՝ 134 (այդ թվում՝ 1 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 94 (այդ թվում՝ 1 դրական, 6 բացասական):

«Առավոտը» խիստ ժլատ է դրական հիշատակումների առումով. սեպտեմբեր-հոկտեմբերին բոլորից շատ՝ 2-ական դրական հիշատակում են ստացել ժողովրդական կուսակցության առաջնորդ Կարեն Դեմիրճյանը եւ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարար Սամվել Բաբայանը:

Արմատապես փոխվել է պատկերը քաղաքական գործիչներին տրվող տարածքի առումով: Առաջին տեղում է հուլիս-օգոստոսին 7-րդ տեղում գտնվող Վանո Սիրադեղյանը՝ 1.763,71 քառ.սմ (նախորդ շրջանում՝ 1.101,08 քառ.սմ): Սիրադեղյանին հաջորդող ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մանուկյանը (1.616,59 քառ.սմ) եւ Հովհաննես Իգիթյանը (1.365,00 քառ.սմ) նախորդ շրջանի համեմատությամբ համապատասխանաբար 3 եւ 50 անգամ ավելի շատ տարածք են ստացել:

«Առավոտը» համարժեք տեղ է հատկացրել ՁԼՄ-ների հիմնական մասին հուզող բոլոր թեմաներին: Ընդ որում, թերթը, ինչպես միշտ, բացահայտ հեզմանքի եւ հեղինակային սուբյեկտիվ վերաբերմունքի ոչ սովորական ձևերի է դիմում: Այսպես օրինակ, ի պատասխան այն բանի, որ ՏՐԱՍԵԿԱ ծրագրի համաժողովին մասնակցելու մեկնող վարչապետին միայն պետական լրատվամիջոցների ներկայացուցիչներն են ուղեկցել, թերթը

տպագրել է «Ենթադրական ռեպորտաժ վարչապետ Արմեն Դարբինյանի Բաքու կատարելիք այցի մասին» («Առավոտ», #172, 8 սեպտեմբերի, 1998):

Այդուհանդերձ, թերթն առավելագույնս հետեւողական ու խորն է վերլուծել Հայաստանի տնտեսական մեկուսացման խնդիրը Բաքվի համաժողովի առնչությամբ եւ ընդհանրապես, ինչպես նաեւ ՌԴ տնտեսական ճգնաժամի հետեւանքները Հայաստանի համար:

Նախագահի նախկին խոսնակ Կասյա Աբգարյանի վարկաբեկման արշավին «Առավոտը» տոն էր տալիս՝ որպես հիմնական թիրախ ընտրելով նրա՝ հայերենի վատ իմացությունը: Արդեն Աբգարյանի երրորդ ճեպագրույցից հետո թերթը հայտարարեց, որ «...Երբեք չի խմբագրի խոսնակի արտահայտությունները: Գուցե այսպիսով դրանց եւ իմաստային, եւ ձեւակերպումային թերություններն ակնհայտ լինեն հենց տիկին Կասյայի համար» («Առավոտ», #173, 9 սեպտեմբերի, 1998):

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ»-օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար:

Ըստ թեմաների թերթի մակերեսի բաշխումը նախորդ շրջանի համեմատությամբ առանձնակի փոփոխություն չի կրել: Առաջին տեղում միջազգային կյանքն է՝ 18,09%, երկրորդում՝ ներքին քաղաքականությունը՝ 13,35%, երրորդում՝ սպորտը՝ 12,04%:

Անակրնկալներ չկան եւ քաղաքական գործիչների հիշատակումների ցուցակում: Առաջատար են Ռոբերտ Քոչարյանը՝ 142 (այդ թվում՝ 2 դրական, 9 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 51 (այդ թվում՝ 3 բացասական), Խոսրով Հարությունյանը՝ 32 (այդ թվում՝ 2 բացասական) եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 30 (այդ թվում՝ 8 բացասական):

Մինչդեռ քաղաքական գործիչների կարծիքներին, տեսակետներին տրված տեղի առումով նախորդ շրջանի համեմատությամբ պատկերը էապես փոխվել է: Այստեղ առաջատարը կոմկուսի առաջնորդ Սերգեյ Բադալյանն է՝ 1.774,50 քառ.սմ: Նրան հաջորդում են ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդոյանը՝ 1.582,25 քառ.սմ, Ռոբերտ Քոչարյանը՝ 1.578,50 քառ.սմ, այն ժամանակ դեռեւս էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյանը՝ 1.578,00 քառ.սմ, արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը՝ 1.566,50 քառ.սմ, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը՝ 1.528,50 քառ.սմ եւ Վահան Հովհաննիսյանը՝ 1.490,50 քառ.սմ:

Դիտարկված ժամանակաշրջանում քիչ թե շատ կարելոր ոչ մի թեմա չի վրիպել թերթի ուշադրությունից: Թեեւ նրա ուշադրությունը հավասարաչափ չի բաշխվել, մասնավորապես՝ ՏՐԱՍԵԿԱ ծրագրին Հայաստանի մասնակցությունը բավականին ժլատ է լուսաբանվել:

«ԳՈՂՈՍ ԱՐՄԵՆԻԻ»

Տեղեկանք. «Գողոս Արմենիի»-լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ. Հիմնադիր՝ թերթի աշխատանքային կոլեկտիվ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 26 համար:

«Գողոս Արմենիի»-ում միջազգային կյանքը շարունակում է անվերապահ առաջատար մնալ՝ 27,48%: Այնուհետեւ թերթի մակերեսն ըստ թեմաների բաշխվել է այսպես. ներքին քաղաքականությունը՝ 9,63%, տնտեսությունը՝ 8,50% եւ մշակույթ/պատմությունը՝ 7,29%: Դրանց հաջորդող գովազդ/հայտարարությունների ծավալը շարունակում է նվազել եւ այս անգամ 6,93% է:

Միջազգային կյանք բաժնուն համար մեկ թեման դարձյալ Ռուսաստանն է (7,53%): Ռուսական մամուլից հաճախակի արտատպություններից ու ծաղկաքաղից բացի թերթը այնտեղ ստեղծված իրադրության մասին նաեւ սեփական նյութեր է տպագրել, որոնց մեջ մասնավորապես քննարկվում էր, թե ինչպես այն կանդրադառնա այդ երկրում ապրող հայերի ճակատագրի վրա: Գնաժամը դիտարկվում էր ոչ միայն տնտեսական տեսանկյունից. «Տնտեսական աղետը շատ գործընթացների համար պայթուցիչի դեր կատարեց, բայց նախ եւ առաջ ոչ թե քննադատական (այսինքն՝ իշխանությունների փոփոխության), այլ աշխարհաքաղաքական եւ, հնարավոր է, նաեւ գաղափարախոսական գործընթացների» համար (*«ԳԱ», #100, 5 սեպտեմբերի, 1998*): Ընթերցողներին ներկայացնելով ՌԴ նոր վարչապետին՝ թերթը նշում է, որ Պրիմակովը երբեք առանձնակի համակրանք չի ունեցել մեր երկրի հանդեպ եւ, որոշ տեղեկությունների համաձայն, վերապահությամբ է վերաբերում Ռոբերտ Քոչարյանին, ուստի Անդրկովկասում հնարավոր է շահերի հետաքրքիր բախում տեղի ունենա. «Ռուսաստանի վարչապետը բարեհաճ չէ Ռուսաստանի միակ ռազմավարական դաշնակից երկրի նախագահի հանդեպ, մինչդեռ ավելի քան լավ հարաբերությունների մեջ է Շեւարդնաձեի եւ Ալիևի հետ, որոնց երկրները գրեթե ամեն հարցում հակադրվում են Ռուսաստանին...» (*«ԳԱ», #103, 12 սեպտեմբերի, 1998*): «ԳԱ»-ի էջերում հաճախ են զուգահեռներ անցկացվում Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ՝ ներքին կյանքի առումով, այդ թվում նաեւ երկու աղմկոտ սպանությունների՝ գեներալ Լեւ Ռոխլինի եւ ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի: (*«ԳԱ», #113, 8 հոկտեմբերի, 1998*):

Դիտարկման նախորդ չորս ամիսների համեմատությամբ աճել է հարեւան երկրների՝ Ադրբեջանի (3,05%) եւ Վրաստանի (2,06%) քաղաքական իրադարձությունների լուսաբանման ծավալը: Մասնավորապես՝ թերթը գրել է Ադրբեջանում նախագահական ընտրությունների եւ Ջավախքում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Ընդ որում, այս անգամ, նախորդ շրջանների համեմատ, վրացական թեմայում գերակշռում են խմբագրական նյութերը: Ադրբեջանի մասին սեփական նյութերը դարձյալ ավելի շատ են, քան այլ աղբյուրներինը:

Հայաստանի ներքին քաղաքականությունը նորից «ԳԱ»-ի ուշադրության կենտրոնում է, իսկ Ռոբերտ Քոչարյանը՝ թերթի քննադատական ելույթների հիմնական թիրախը: Նախագահը քննադատվում է նախ եւ առաջ սեփականաշնորհման ոլորտում տարվող քաղաքականության համար: Այդուհանդերձ, ընդդիմադիր պատգամավորների՝ սեփականաշնորհվող օբյեկտների ցուցակը վերանայելու նախաձեռնության անհաջողությունը, ըստ «ԳԱ»-ի, անսպասելի չէր, քանի որ «...նրանք, ովքեր իրենց ընդդիմություն կոչեցին 1996-ից եւ 1998-ի փետրվարից հետո, ընդդիմություն չեն, այլ ընդդիմություն են խաղում... Ուստի խոսքը ոչ թե ազգային արժեքների ճակատագրի, այլ դրանք շահարկելով իշխանության համար պայքարելու հնարավորության մասին էր»: (*«ԳԱ», #114, 10 հոկտեմբերի, 1998*):

Ամառային արձակուրդից հետո աշխատանքը վերսկսած խորհրդարանը (ԱԺ/օրենսդրություն թեմային 3,32% տեղ է հատկացվել), ըստ թերթի՝ «...վստահ գնում է իր գործունեության համահարթեցման ճանապարհով» (*«ԳԱ», #122, 29 հոկտեմբերի, 1998*): Առջեւում ընտրություններն են, եւ նկատի առնելով այն, որ ԱԺ-ի աշխատանքի մեկ օրը հարկատուների վրա 2,6 մլն դրամ է նստում, կարելի է ասել, որ մենք ֆինանսավորում ենք պատգամավորների արդեն սկսված ընտրարշավը, կարծում է թերթը (*«ԳԱ», #122, 29 հոկտեմբերի, 1998*):

Պարբերաբար անդրադառնալով պետություն-մամուլ փոխհարաբերությունների հարցին, այդ թվում նաեւ լրատվամիջոցների համար բյուջեից տրամադրված 80 մլն դրամ գումարին, թերթը հիշեցնում է, որ ժողովրդավարական հասարակության զարգացման համար անհրաժեշտ է պետական աջակցություն ցուցաբերել ՋԼՄ-ներին, հատկապես՝ անկախներին: Սակայն, մինչեւ օրս այդ հարցը չի լուծվել, եւ լրավճարներ է ստանում միայն պաշտոնական մամուլը: Նրան վճարում են «պետության կյանքի մասին տեղեկությունները որակյալ ձեռով քաղցնելու համար»: Իսկ պետական լրատվամիջոցներից՝ ՀԱՀ-ից եւ «Հայաստանի Հանրապետութիւն»-ից ԱԺ-ի դժգոհության պատճառն այն է, որ

«այսօր նրանք կառավարության նվազի տակ են պարուն, իսկ դա խորհրդարանին ամենեւին դուր չի գալիս» («ԳԱ», #116, 15 հոկտեմբերի, 1998): Եւ «ՀՀ»-ն, եւ ՀԱՀ-ն (մասնավորապես՝ դեկավարությունը) արժանացել են «ԳԱ»-ի քննադատությանը:

Բաքվի համաժողովին եւ ՏՐԱՍԵԿԱ ծրագրին Հայաստանի մասնակցությանը թերթը որոշ թերահավատությամբ է վերաբերում:

Քաղաքական գործիչների հիշատակումների քանակն ու բնույթը ցույց են տալիս, որ Ռոբերտ Քոչարյանի հիշատակումների քանակը, ինչպես եւ հուլիս-օգոստոսին, չի փոփոխվել (120), բայց կտրուկ աճել են բացասական հիշատակումները (24): Ներկա նախագահին դարձյալ հաջորդում է նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որի 60 հիշատակումներից 25-ը բացասական են: Արմեն Դարբինյանն ու Վանո Սիրադեղյանն այս անգամ փոխել են տեղերը. համապատասխանաբար՝ 34 հիշատակում (որից 3-ը՝ բացասական) եւ 24 (այդ թվում՝ 9 բացասական): Ընդհանուր առմամբ 84 քաղաքական գործիչներից դրական համատեքստում հիշատակվում են 8-ը, իսկ բացասական՝ 20-ը:

Ամենաշատ տարածք իրենց կարծիքների համար ստացել են Էդվարդ Սանդուխյանը՝ 870,75 քառ.սմ, Վարդան Օսկանյանը՝ 450,59 քառ.սմ եւ Աժ սոցիալական, առողջապահության եւ բնապահպանության հարցերով հանձնաժողովի նախագահ Գեղամ Ղարիբջանյանը՝ 411,30 քառ.սմ (վերջինս՝ ի հաշիվ մեկ հարցազրույցի):

«ՀԱՅՔ»

Տեղեկանք. «Հայք»-շաբաթաթերթ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ Հայոց համագալին շարժում: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A3 չափի 16 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 150 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 9 համար:

Ինչպես եւ նախորդ երկամսյակում, թերթն առավելագույն ուշադրություն է դարձրել ներքին քաղաքականությանը՝ 18,67%: Դրան հաջորդում են պատահարներ/զվարճալիքը՝ 11,22%, մշակույթ/պատմությունը՝ 9,79% եւ միջազգային կյանքը՝ 9,66%:

Քաղաքական գործիչներից առավել հաճախ հիշատակվում է Ռոբերտ Քոչարյանը՝ 117 (այդ թվում՝ 1 դրական, 14 բացասական): Եթե առաջ բոլոր կուսակցական թերթերի մեջ «Հայքն» ամենաանաչառն էր նշանային հիշատակումների առումով, ապա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նա մասամբ փոխել է այդ դիրքորոշումը, գոնե նախագահի հանդեպ: Ռոբերտ Քոչարյանին հաջորդում են Արմեն Դարբինյանը՝ 42 (այդ թվում՝ 5 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 35 (այդ թվում՝ 2 դրական), Խոսրով Հարությունյանը՝ 24 (այդ թվում՝ 4 բացասական): Երկու անսվա ընթացքում թերթում ընդամենը 7 դրական հիշատակում է եղել, ընդ որում 2-ական բաժին են ընկել Լեւոն Տեր-Պետրոսյանին եւ Վանո Սիրադեղյանին, 1-ական՝ Աժ «Հանրապետություն» խմբակցության առաջնորդ Բաբկեն Արարքցյանին, Ռոբերտ Քոչարյանին եւ Վարդան Օսկանյանին: Եւ եթե վերջին երեքն ունեն նաեւ բացասական հիշատակումներ, ապա առաջին երեքը, որ նախկին իշխանություններն են մարմնավորում, միայն դրական:

Քաղաքական գործիչների կարծիքներն ու հայացքներն արտահայտելուն տրված տարածքի առումով առջեւում են Վազգեն Մանուկյանը՝ 952,20 քառ.սմ, Սերգեյ Բադալյանը՝ 667,80 քառ.սմ, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար Ռուլանդ Շառոյանը՝ 612,50 քառ.սմ: Ավելորդ չէ մեկ անգամ եւս ընդգծել, որ այս թվերը շաբաթաթերթերի համար երկամսյա շրջանում շատ քիչ բան են ասում, քանզի ընդհանուր ծավալի փոքրության պատճառով մեկ հարցազրույցը կամ մամուլի ասուլիսը էապես փոխում են պատկերը:

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք»-շաբաթաթերթ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Սովորական ծավալը՝ 3 տպ. մամուլ (A3 չափի 12 էջ): Ամի-

սը երկու անգամ լույս է տեսնում «Իրավունք. հարց ու պատասխան» հատուկ թողարկումը՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը 18.000: Գինը՝ 60 - 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 13 համար:

Սեպտեմբեր-հոկտեմբերին նույնպես թերթը գրավում էր գովազդատուների: Գովազդ/հայտարարություններ բաժինը դարձյալ առաջատար է՝ 28,97%: Դրան հաջորդում են ներքին քաղաքականությունը՝ 18,67%, տնտեսությունը՝ 10,91% եւ մշակույթ/պատմությունը՝ 9,63%:

«Իրավունքն» ավանդաբար բավարարվում է սեփական նյութերով, միայն մշակույթ/պատմություն, Արցախ, տարածաշրջան, պատահար/զվարճալիք եւ միջազգային կյանք բաժիններում են մասամբ (3-16%) այլ աղբյուրների նյութեր օգտագործում:

Հիշատակումների առումով առաջելում են Ռոբերտ Քոչարյանը՝ 105 (այդ թվում՝ 2 դրական, 3 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 60 (այդ թվում՝ 15 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 52 (այդ թվում՝ 1 բացասական), Վանո Սիրադեղյանը՝ 34 (այդ թվում՝ 1 դրական, 1 բացասական): Առաջատար քառյակը նախորդ շրջանի համեմատությամբ փոփոխություն չի կրել, միայն Դարբինյանն ու Սիրադեղյանն են տեղերը փոխել:

Կարծիքներին ու տեսակետներին տրամադրված տարածքի առումով առաջին տեղում է Վանո Սիրադեղյանը՝ 1.545,19 քառ.սմ: Նրան հաջորդում են «Իրավունքի» հիմնադիր կուսակցության առաջնորդ Հրանտ Խաչատրյանը՝ 1.536,00 քառ.սմ, եւ նախագահի խորհրդական Կասյա Աբգարյանը՝ 1.471,29 քառ.սմ:

«Իրավունքը» ուշադրություն է դարձրել այս շրջանի գրեթե բոլոր հրատապ խնդիրներին եւ մեկն էր այն սակավաթիվ թերթերից, որ ոչ միայն լուսաբանում էր ՌԴ տնտեսական ճգնաժամը, այլ փորձ էր անում նաեւ վերլուծել Հայաստանի տնտեսական ու քաղաքական իրավիճակի վրա դրա հնարավոր ազդեցությունը:

«ԱՅԺԱ»

Տեղեկանք. «Այժմ»-շաբաթաթերթ: Հիմնադրվել է 1996թ. Հիմնադիր՝ Ազգային ժողովրդավարական միություն: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը 4.000: Գինը՝ 60 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 7 համար:

Հայ լրատվամիջոցների դիտարկման առաջին վեց ամիսների արդյունքով «Այժմը» դարձյալ ամենաքաղաքականացված թերթն է: Ներքին քաղաքականությունն անփոփոխ կերպով ամենամեծ ծավալն ունի. սեպտեմբեր-հոկտեմբերին՝ 21,59%: Այս հաջորդում են իրավունք/իրավապահպանություն/պաշտպանություն/անվտանգությունը՝ 14,34%, սոցիալական խնդիրները՝ 8,55%, տնտեսությունը՝ 8,23%, հասարակությունը՝ 8,10%: Խիստ աճել է գովազդ/հայտարարությունների ծավալը՝ 5,22% (նախորդ երկամսյակներում՝ 0,97% եւ 0,57%): Սեպտեմբեր-հոկտեմբերին «Այժմը» ոչ մի անգամ չի անդրադարձել գիտություն/կրթություն թեմային:

Հիշատակումների առումով առաջատար են Ռոբերտ Քոչարյանը՝ 29 (այդ թվում՝ 4 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 22 (այդ թվում՝ 5 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 11 (այդ թվում՝ 3 բացասական): Չորս ամիսների ընթացքում (հուլիս-հոկտեմբեր) «Այժմ»-ում եղել են կամ չեզոք կամ բացասական հիշատակումներ, ոչ մի հիշատակում դրական համատեքստում չի եղել:

Կարծիքներին ու տեսակետներին տրված տեղի առումով առաջատար է «Այժմ» թերթի հիմնադիր կուսակցության առաջնորդ Վազգեն Մանուկյանը՝ 2.823,71 քառ.սմ: Նրան աննախադեպ խզումով հաջորդում են «21-րդ դար» կուսակցության առաջնորդ Դավիթ Շահնազարյանը եւ նախագահի նոր մամուլի քարտուղար Վահե Գաբրիելյանը (գրեթե 23 անգամ քիչ տարածք են ստացել):

«Իրավունքից» հետո «Այժմը» ընթերցողներին քաղաքական սատիրայի հետաքրքիր նմուշ է մատուցել. «Դորիան Գրեյի անկյունը»:

«ԼՈՒՐԵՐ» (ՀԱՅ) /«ՀԱՅԼՈՒՐ»

Տեղեկանք. «Լուրեր»-«Նորք» հեռուստաընկերության լրատվական ծրագիր: Օգոստոսի 3-ից մինչև սեպտեմբերի 19-ը հեռարձակվել է Հայաստանի ազգային հեռուստատեսությանը շաբաթը 6 օր՝ երկուշաբթիից-ուրբաթ, օրական 3 անգամ, շաբաթ օրերին՝ 2 անգամ: Այսպիսով «Լուրերը» զբաղեցնում էր ՀԱՅ ամենօրյա լրատվական ծրագրի եթերային ժամանակը: Դիտարկվել են 20.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում (սեպտեմբերի 1-19) եղել է 17 թողարկում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 537 րոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 463 րոպե 59 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 73 րոպե 1 վրկ.: Մի թողարկման առավելագույն տևողությունը՝ 39 րոպե, նվազագույնը՝ 22 րոպե:

Ստուդիայի ձեւավորումը, գլխադիրներն ու բլյունները չեն փոխվել: Հաղորդման կառուցվածքն ավանդական է:

Ամենաշատ ժամանակ է տրամադրվել գովազդ/հայտարարություններին՝ 19,07% (այստեղ նշվում է նաև եղանակի տեսությունը), տնտեսությանը՝ 10,92%, ներքին քաղաքականությանը՝ 7,25%: Երկրորդ եռյակում են միջազգային կյանքը՝ 6,98%, արտաքին քաղաքականությունը՝ 6,91%, մշակույթ/պատմությունը՝ 6,80%:

Հիշատակումների քանակով առաջատար է Ռոբերտ Քոչարյանը՝ 38 (այդ թվում՝ 3 դրական, 1 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 22 (բոլորը՝ չեզոք) եւ Խոսրով Հարությունյանը՝ 15 (բոլորը՝ չեզոք):

Կարծիքների արտահայտմանը տրամադրված ժամանակի առումով առջելուն են Ռոբերտ Քոչարյանը (8 րոպե 6 վրկ.), Խոսրով Հարությունյանը (5 րոպե 46 վրկ.), Վարդան Օսկանյանը (5 րոպե 7 վրկ.): Նրանց հաջորդում են Վահան Հովհաննիսյանը (4 րոպե 36 վրկ.) եւ Արմեն Դարբինյանը (3 րոպե 37 վրկ.):

Եթե «Լուրերի» հաղորդումները համեմատենք դիտարկման նախորդ փուլի հետ, ապա սեպտեմբերին (մինչև որ այն փոխարինվեց «Հայլուրով») խիստ երկարատև սյուժեների թիվը զգալիորեն կրճատվել էր: Այսպես, ԱԺ 8-րդ նստաշրջանին նվիրվել էր երկու երկարատև սյուժե (սեպտեմբերի 14-ի (4 րոպե 5 վրկ.), եւ սեպտեմբերի 17-ի (6 րոպե 29 վրկ.) թողարկումները), 7 րոպե 2 վրկ. է տևել վարչապետ Արմեն Դարբինյանի գլխավորությամբ կառավարական պատվիրակության լիբանանյան ուղեւորության մասին նյութը:

Սեպտեմբերի 21-ից Ազգային հեռուստատեսությունում «Լուրերին» փոխարինեց «Հայլուր» նոր ամենօրյա լրատվական ծրագիրը:

Տեղեկանք. «Հայլուր» - Հայաստանի ազգային հեռուստատեսության լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) եթեր է հեռարձակվել օրական 3 անգամ, շաբաթ օրերին՝ 2 անգամ: Դիտարկվել են 20.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում (սեպտեմբերի 21 - հոկտեմբերի 31) եղել է 36 թողարկում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 1.074 րոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 1.051 րոպե 7 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 22 րոպե 53 վրկ.: Մի թողարկման առավելագույն տևողությունը՝ 37 րոպե, նվազագույնը՝ 26 րոպե:

Ստուդիայի ձեւավորումը, գլխադիրներն ու բլյունները (մեկ տեսակ) չեն փոխվել:

Ամենաշատ ժամանակ տրամադրվել է գովազդ/հայտարարություններին՝ 19,51%, տնտեսությանը՝ 13,02%, մշակույթ/պատմությանը՝ 9,28%:

Հիշատակումների քանակով առաջատար են Ռոբերտ Քոչարյանը՝ 98 (այդ թվում՝ 1 դրական, 1 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 52 (բոլորը՝ չեզոք): Մյուս քաղաքական գործիչները զգալիորեն ետ են մնում առաջատարներից. վարչապետին հաջորդող Վարդան Օսկանյանն ունի 14 հիշատակում: Դրական հիշատակումների առումով առաջին

տեղում նախագահի մամուլի քարտուղար Վահե Գաբրիելյանն է (3), բացասական հիշատակումների առումով՝ Խոսրով Չարուքունյանը (3):

Կարծիքներին տրամադրված ժամանակի առումով մյուսներից զգալիորեն առաջ է անցել Ռոբերտ Քոչարյանը (23 թույն 21 վրկ. սա առավելագույն ցուցանիշն է դիտարկման ամբողջ ընթացքում եւ բոլոր ծրագրերի առումով): Նրան հաջորդում են Արմեն Դարբինյանը՝ 7 թույն, 31 վրկ., Վահան Յովհաննիսյանը՝ 4 թույն 25 վրկ., Վազգեն Մանուկյանը՝ 3 թույն 7 վրկ., նույնքան էլ՝ նախկին էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյանը: Քոչարյանի ցուցանիշը շատ բարձր է մյուսներից այն պատճառով, որ բացի նախագահի հանդիպումների եւ հայտնած մտքերի մասին «արձանագրային սյուժեներից», սեպտեմբերի 25-ի թողարկման մեջ հաղորդվել է Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի գլխավոր համաժողովում ՀՀ նախագահի ելույթը գրեթե ամբողջությամբ (տեւոդությունը՝ 8 թույն 21 վրկ.):

Ընդհանուր առմամբ տեւական նյութերը հատուկ չեն «Հայլուրին», բերված օրինակն ավելի շուտ բացառություն է: «Հայլուրի» թողարկումները, որպես կանոն, դասակարգվում են ենթաստորադասման սկզբունքով: Գրեթե յուրաքանչյուր սյուժե սկսվում է հաղորդավարի ազդով, որը հաճախ բառախաղի վրա է կառուցվում: Ծրագրի մյուս առանձնահատկությունը մարզային անկախ հեռուստակայանների պատրաստած նյութերը թողարկման մեջ ընդգրկելն է («Վանաձոր-Ինտերկաս», «Շանթ», «Քյավառ» եւ այլն), որ հարստացնում է ծրագիրը, ընդլայնում նրա աշխարհագրությունը:

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե»-«Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 9 անգամ: Դիտարկվել են 21.45-ի թողարկումները: Դիտարկած ժամանակամիջոցում եղել է 48 թողարկում: Հոկտեմբերի 7-11-ը (ներառյալ) «Ա1+» հեռուստաալիքի հեռարձակումները ընդհատվել են տեխնիկական պատճառներով:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 632 թույն է: Խոսքային մասի ծավալը՝ 595 թույն 25 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 36 թույն 35 վրկ.: Մի թողարկման առավելագույն տեւողությունը՝ 17 թույն, նվազագույնը՝ 9 թույն:

Երկու ամսվա ընթացքում օգտագործվել են երկու կարգի գլխադիրներ, բլյունները չեն փոխվել:

Ծավալի առումով առաջատար են իրավունք/իրավապահպանություն/պաշտպանություն/անվտանգություն՝ 12,35%, մշակույթ/պատմություն՝ 11,19%, տնտեսություն՝ 10,51% թեմաները:

Հիշատակումների քանակով առջեւում են Ռոբերտ Քոչարյանը՝ 76, Խոսրով Չարուքունյանը՝ 33, Արմեն Դարբինյանը՝ 20 եւ նախագահի խորհրդական Պարույր Հայրիկյանը՝ 18: Թե՛ դրական, թե՛ բացասական առումով ամենաշատ հիշատակումներ ունի Ռոբերտ Քոչարյանը (համապատասխանաբար՝ 5 եւ 8):

Կարծիքներին տրված տեղի առումով աղյուսակը գլխավորում են Կասյա Աբգարյանը (4 թույն 14 վրկ.), Ռոբերտ Քոչարյանը (3 թույն 35 վրկ.) եւ Սերգեյ Բադալյանը (2 թույն 30 վրկ.):

Ավանդաբար «Այբ-Ֆե»-ի ուշադրության կենտրոնում են իրավունքի, պաշտպանության եւ անվտանգության հարցերը: Դատարանի դահլիճից տրվող ռեպորտաժները, որ ուղեկցվում են թղթակցի մեկնաբանություններով, այս թեմայի մատուցման հիմնական ձեւն են: «Այբ-Ֆեն» աչքի է ընկնում խնդրի հետեւողական լուսաբանությամբ (դատավարությունները ներկայացվում են պարբերաբար, դրանց զարգացմանը զուգընթաց): Դիտարկված ժամանակամիջոցում հաղորդվել են բանակում արտականոնադրական հարաբերությունների մասին դատա-իրավական մարմինների կողմից քննվող նյութեր, որոնք դուրս են մնացել այլ լրատվական ծրագրերի ուշադրությունից: Ռուսական ճգնաժամը «Այբ-Ֆեն» լուսաբանել է Հայաստանի վրա դրա հնարավոր հետեւանքների տեսանկյունից:

«ՏԵՍԱԴԱՇՏ»/«ՕՐԱԿԱՐԳ»

Տեղեկանք. «Տեսադաշտ»-«Միր» միջպետական հեռուստաընկերության լրատվական-վերլուծական կիրակնօրյա ծրագիր: Դիտարկման շրջանում (սեպտեմբերի 1-21) եղել է 3 հաղորդում:

Փաստացի եթերի ընդհանուր ժամալը 78 րոպե է: Խոսքային մասի ժամալը՝ 76 րոպե 14 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ժամալը՝ 1 րոպե 46 վրկ.: Մի թողարկման առավելագույն տեւողությունը՝ 27 րոպե, նվազագույնը՝ 25 րոպե:

Առավելագույն ժամանակ է տրամադրվել միջազգային կյանքին՝ 19,58% (այդ թվում՝ Ռուսաստանին նվիրվել է 11,76%), մշակույթ/պատմությանը՝ 15,04%, արտաքին քաղաքականությանը՝ 14,82%, լրատվամիջոցներին՝ 12,15%:

Հիշատակումների թվով առջեւում են Արմեն Դարբինյանը՝ 3, Ռոբերտ Քոչարյանը, Վարդան Օսկանյանը եւ Խոսրով Չարությունյանը՝ 2-ական: Քաղաքական գործիչների բոլոր հիշատակումները չեզոք են:

Արտացոլվել են երեք գործիչների կարծիքներ. ԼՂՀ խորհրդարանի նախագահ Օլեգ Եսայանինը (5 րոպե 35 վրկ.), Արմեն Դարբինյանինը (3 րոպե 28 վրկ.), Խոսրով Չարությունյանինը (3 րոպե 26 վրկ.):

Բերված թվերը քիչ բան են ասում, քանի որ դիտարկման այս շրջանում «Տեսադաշտը» թողարկվել է ընդամենը 3 անգամ:

Սեպտեմբերի 21-ից «Տեսադաշտին» փոխարինեց «Օրակարգը»:

Տեղեկանք. «Օրակարգ» - Հայաստանի ազգային հեռուստատեսության շաբաթական լրատվական-վերլուծական ծրագիր: Եթեր է թողարկվում կիրակի օրերին, 20.00-ին: Դիտարկված ժամանակամիջոցում թողարկվել է 5 հաղորդում:

Փաստացի եթերի ընդհանուր ժամալը 163 րոպե է: Խոսքային մասի ժամալը՝ 158 րոպե 13 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ժամալը՝ 4 րոպե 47 վրկ.: Մի թողարկման առավելագույն տեւողությունը՝ 35 րոպե, նվազագույնը՝ 30 րոպե:

Ստուդիայի ձեւավորումը, գլխադիրներն ու բլոկները (մի տեսակ) դիտարկման ընթացքում չեն փոխվել: Հաղորդումը վարել է մի մշտական հաղորդավար:

Տրամադրված ժամանակի առումով առաջատար թեմաներն են. ներքին քաղաքականությունը՝ 17,06%, միջազգային կյանքը՝ 14,85% (ընդ որում առավելագույն ժամալ են ստացել Արեւմտյան Եվրոպայի մասին նյութերը՝ 9,28%), ԱԺ/օրենսդրություն՝ 14,07%:

Քաղաքական գործիչների հիշատակումների առումով պատկերն այսպիսին է. առջեւում է Ռոբերտ Քոչարյանը՝ 18: Նրանից զգալիորեն ետ են մնում Վարդան Օսկանյանը՝ 6, Խոսրով Չարությունյանը՝ 4: Երկու անգամ դրական է հիշատակվել միայն Ռոբերտ Քոչարյանը: Ամենաշատ բացասական հիշատակում՝ 2-ական, ստացել են Խոսրով Չարությունյանը եւ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովհաննես Իգիթյանը:

Տեսակետներն արտահայտելու առումով ամենաբարձր ցուցանիշներ ունեն ԱԳՆ մամուլի քարտուղար Արսեն Գասպարյանը՝ 8 րոպե 10 վրկ., Խոսրով Չարությունյանը՝ 6 րոպե 55 վրկ. եւ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Ալբերտ Բազեյանը՝ 5 րոպե 16 վրկ.:

Թողարկումը կազմվում է մշտական դառնալ հավակնող խորագրերով. «Ստուդիայի հյուրը», «Հայացք կողքից» (որը հեռախոսով վարում է «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության ղեկավար Հրայր Թամրազյանը), «Հայաստան. դարավերջը», «Եվրոպայի այբուբենը», «Մուլտկրակոց»:

ՀԱՀ մյուս լրատվական-վերլուծական ծրագրերի համեմատությամբ «Օրակարգն» աչքի է ընկնում վերլուծականությամբ: Դրան շատ է օգնում հաղորդման նախապատրաստմանը տպագիր լրատվամիջոցներում աշխատող լրագրողների մասնակցությունը:

Նախագահի, նրա աշխատակազմի, կառավարության, ԱԺ-ի աշխատանքի հրատապ լուսաբանման խնդիրը լուծվում է նաեւ «դեպքի վայրից» ուղիղ հեռարձակումներով: Սա, թերեւս, հատկանշական է ամենօրյա լրատվական ծրագրերին:

«ԿԻՐԱԿԻ»

Տեղեկանք. «Կիրակի» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 21.45-ին: Դիտարկված ժամանակամիջոցում թողարկվել է 8 հաղորդում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 103 րոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 98 րոպե 9 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 4 րոպե 51 վրկ.: Մի թողարկման առավելագույն տեւողությունը՝ 18 րոպե, նվազագույնը՝ 13 րոպե: Ստուդիայի ձեւավորումը փոխվել է մի քանի անգամ: Գլխադիրը կադրերի մասում փոխվել է, բլումները չեն փոխվել:

Ամենաշատ ծավալ է գրավել ԱԺ/օրենսդրություն թեման՝ 35,28%, որին հաջորդում են ներքին քաղաքականությունը (24,55%) եւ արտաքին քաղաքականությունը (11,42%):

Քաղաքական գործիչների հիշատակումների առումով առջեւում են Ռոբերտ Քոչարյանը՝ 28, Խոսրով Չարությունյանը՝ 14, Արմեն Դարբինյանը՝ 9 եւ Կասյա Աբգարյանը՝ 8: Սեպտեմբեր-հոկտեմբերին «Կիրակի»-ում դիտարկման 6 ամիսների ընթացքում ամենաշատ նշանային հիշատակումներն են նկատվել: Ամենից հաճախ դրական համատեքստում հիշատակվել է Ալբերտ Բազեյանը (3), բացասական համատեքստում՝ Ռոբերտ Քոչարյանը եւ Խոսրով Չարությունյանը (7-ական):

Կարծիքներին տրված ժամանակի առումով առջեւում են Ռոբերտ Քոչարյանը (1րոպե 59 վրկ.), Սերգեյ Բադալյանը (1 րոպե 58 վրկ.) եւ Վազգեն Մանուկյանը (1 րոպե 12 վրկ.):

Թողարկման մեծ մասը զբաղեցնում է վարողի ստուդիական խոսքը: Մնացած բոլոր նյութերը շաբաթվա ընթացքում «Այբ-Ֆե»-ի ռեպորտաժներից հատվածներ են (ամեն թողարկման ժամանակ 3-ից ոչ ավելի):

«Կիրակի»-ում մանրամասնորեն լուսաբանվել է 33 ԱԺ գործունեությունը: Բոլոր թողարկումներում, բացի երկուսից, ԱԺ-ին նվիրվել է մի քանի սյուժե: Այսպես օրինակ. սեպտեմբերի 20-ի, հոկտեմբերի 4-ի եւ 18-ի թողարկումները գրեթե ամբողջովին ԱԺ-ին էին նվիրված:

Առաջիկա խորհրդականական ընտրությունները, Ընտրական օրենսգրքի քննարկումները, սեփականաշնորհման ընթացքի վերլուծությունը եւ այլ խնդիրներ լուսաբանվել են վարողի հստակ արտահայտված անձնական տեսանկյունից: Այսպես՝ սեպտեմբերի 13-ի թողարկման մեջ վարողը երկու անգամ կրկնեց այն միտքը, թե «կասկած չկա՝ նախագահը խախտել է սահմանադրությունը»՝ անտեսելով մի խումբ պատգամավորների՝ արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջը: Հաճախ մեկնաբանելով այս կամ այն քաղաքական գործչի առաջադրած հարցերը՝ վարողն ինքն էր հեռակա երկխոսությամբ պատասխանում դրանց:

«ՍՏՈՐԱԿԵՏ»

Տեղեկանք. «Ստորակետ»-Հայաստանի «Ինտերնյուսի» ամենշաբաթյա լրատվական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 13 անկախ հեռուստակայաններով: Դիտարկված ժամանակամիջոցում թողարկվել է 8 հաղորդում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 141 րոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 137 րոպե 19 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 3 րոպե 41 վրկ.: Ստուդիայի ձեւավորումը, գլխադիրը եւ բլումները (3 տեսակ) չեն փոխվել: Հաղորդման ժամանակ օգտագործվել են ոչ խոսքային ազդեր: «Ստորակետը» մի նշտական վարող

ունի: Հաղորդումը բաղկացած է տարածաշրջանային հեռուստակայանների նյութերից: Մի թողարկման առավելագույն տեւողությունը 24 րոպե է, նվազագույնը՝ 19 րոպե:

Թողարկման կազմավորման սկզբունքը չի փոխվել. սկզբում համառոտ լուրեր են հնչում անցյալ շաբաթվա քաղաքական իրադարձությունների մասին (սեպտեմբերի 6-ի թողարկման ժամանակ ազդարարվեցին նաեւ այն քաղաքական իրադարձությունները, որ տեղի էին ունեցել «Ստորակետի» արձակուրդում եղած ժամանակ՝ օգոստոսի 9-31), ապա մյուս թեմատիկ սյուժեները:

Ծավալի առումով առաջատար են հետեւյալ թեմաները. տնտեսություն (16,05%), հասարակություն (15,88%), առողջապահություն/բնապահպանություն (15,19%):

Քաղաքական գործիչների հիշատակումների եւ նրանց կարծիքներին տրված ժամանակի առումով «Ստորակետում», մյուս դիտարկված ծրագրերի համեմատությամբ, ամենափոքր ցուցանիշներն են: Առջեւում են Ռոբերտ Քոչարյանը (4 հիշատակում) եւ Արմեն Դարսինյանը (2): Էլի չորս քաղաքական գործիչ հիշատակվել են 1-ական անգամ: Բոլոր հիշատակումները չեզոք են բացի Արմավիրի մարզպետ Ալբերտ Յերոյանի 1 դրական հիշատակման: Երկու գործիչ տեսակետներն են արտացոլվել. Ռոբերտ Քոչարյանի եւ Կասյա Աբգարյանի (10-ական վրկ.): Ներքին եւ արտաքին քաղաքականության մասին ողջ լուսաբանությունը սահմանափակվել է համառոտ իրադարձական ազդերով:

Առաջվա նման «Ստորակետի» ուշադրությունը կենտրոնացել է մարզերի կյանքի լուսաբանության վրա: Դիտարկված նախորդ շրջանների համեմատությամբ ավելի հաճախ են անդրադարձել աղետի գոտուն:

«ԼՈՒՐԵՐ» (ՀԱՌ)

Տեղեկանք. «Լուրեր»-Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվում է օրական 10 անգամ, շաբաթ օրերին՝ 8 անգամ, կիրակի օրերին՝ 6 անգամ: Դիտարկվել են 21.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 60 թողարկում: Սեպտեմբերի 21-ին երեկոյան ժամը 9-ի թողարկման փոխարեն ուղիղ հեռարձակում է եղել Թատերական հրապարակից, որտեղ Հայաստանի անկախության օրվա առիթով հանդիսություններ էին տեղի ունենում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 665 րոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 604 րոպե 55 վրկ.: Տեխնիկական եւ այլ դադարների ծավալը՝ 60 րոպե 5 վրկ.: Մի թողարկման առավելագույն տեւողությունը՝ 20 րոպե, նվազագույնը՝ 10 րոպե: Սեպտեմբեր-հոկտեմբերին «Լուրերը» հեռարձակվում էր փոփոխված գլխադիրով: Վարում են ՀԱՌ-ի հաղորդավարները, (բացառությամբ մի քանի թողարկման, որ երկու հաղորդավար էին վարում): Հաղորդման կառուցվածքը ավանդական է:

Ծավալով առաջին տեղում դարձյալ տնտեսության թեման է (18,49%): Այնուհետեւ, դիտարկման նախորդ շրջանի համեմատությամբ, փոփոխություններ են եղել մշակույթ/պատմություն (15,06%) եւ սպորտ (8,38%) թեմաներում:

Հիշատակումների թվով ավանդաբար առաջին եռյակում են Ռոբերտ Քոչարյանը՝ 71, Արմեն Դարսինյանը՝ 36, Խոսրով Հարությունյանը՝ 29: Հիշատակումների մեծ մասը չեզոք է: Ամենաշատ դրական հիշատակում ունի Վահե Գաբրիելյանը (2), բացասական՝ Խոսրով Հարությունյանը (4):

Կարծիքներին տրամադրված ժամանակի առումով առաջին եռյակում են Ռոբերտ Քոչարյանը (13 րոպե 25 վրկ.), Խոսրով Հարությունյանը (5 րոպե 44 վրկ.), Արմեն Դարսինյանը (4 րոպե 40 վրկ.):

Առավելագույն հասարակական հնչեղություն ստացած բոլոր թեմաները այս կամ այն չափով «Լուրեր»-ում իրադարձական արտացոլում են ստացել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՍ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1 նոյեմբերի - 31 դեկտեմբերի, 1998

Առաջատար հայկական լրատվամիջոցները նույնքեր-դեկտեմբերին քաղաքական գործիչների հիշատակումների առումով լիովին միաբան են եղել: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ամենուր բոլորից շատ է հիշատակվել: Սակայն կարծիքներին, տեսակետներին տրվող մակերեսի (եթերային ժամանակի) առումով պետության ղեկավարն առաջին տեղում է եղել միայն «Հայաստանի Հանրապետութիւն» եւ «Առավոտ» թերթերում, ինչպես նաեւ Ազգային հեռուստատեսության «Հայլուր» լրատվական եւ «Ա1+» հեռուստաալիքի «Կիրակի» լրատվական-վերլուծական ծրագրերում: Որոշ այլ լրատվամիջոցներում Քոչարյանը նույնիսկ եռյակ չի մտել: Նախագահի համար այդ «տիպի» հանգամանքը որոշ չափով մեղմանում է նրանով, որ մամուլը բավականին ակտիվորեն է անդրադառնում նրա մամուլի քարտուղար Վահե Գաբրիելյանի խոսքին, որը, պետք է ենթադրել, արտահայտել էր Քոչարյանի կարծիքներն ու տեսակետները: Ընդ որում, որոշ լրատվամիջոցներում Գաբրիելյանը մակերեսով (եթերային ժամանակով) գերազանցել է անգամ իր ղեկավարին, իսկ «Իրավունքում» ընդհանրապես առաջին տեղում է հայտնվել:

Դիտարկող խմբի այն կանխատեսումը, որ խորհրդարանական ընտրությունների մոտենալուն զուգընթաց լրատվամիջոցներում գնահատականների բեւեռացում տեղի կունենա, կավելանա քաղաքական գործիչների նշանային (դրական/բացասական) հիշատակումների թիվը, առայժմ այնքան էլ չի արդարանում: Սեպտեմբեր-հոկտեմբերին բեւեռացված գնահատականների կտրուկ աճից հետո հաջորդ երկու ամիսներին դրանք գրեթե նույն մակարդակին մնացին: Հավանաբար սա կարելի է դիտարկել որպես խաղաղություն փոթորկից առաջ:

Ինչպես ցույց տվեցին վերջին սոցիոլոգիական հարցումները, հայկական լրատվամիջոցների լսարանին ամենից շատ միջազգային կյանքն է հետաքրքրում: Տարբեր թեմաներին տված տարածքը ցույց է տալիս, որ հատկապես միջազգային կյանքն է առաջատար դիրք գրավում ԵՄԱ կողմից ուսումնասիրվող հրատարակություններում եւ հաղորդումներում: Այս առումով կարելի է խոսել լրատվամիջոցների՝ հանրության պահանջների նկատմամբ համարժեք վերաբերմունքի մասին: Այդուհանդերձ, մեր դիտարկումները ցույց են տալիս, որ հայկական լրատվամիջոցներից շատերում կենտրոնական տեղ են գրավում (ոչ թե ծավալով, այլ՝ տեղադրմամբ, մակետավորումով) ներքին քաղաքականության տարբեր խնդիրները: Հատկապես դրանց լուսաբանմանն են լծված լրագրողական առաջատար ուժերը:

Ուսումնասիրվող հայկական լրատվամիջոցները բավականին հավասարաչափ են լուսաբանել նույնքեր-դեկտեմբերի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հիմնական թեմաները. 1999թ. պետական բյուջեի շուրջ քննարկումները, կոմունալ ծառայությունների սակագների բարձրացումը եւ դրա հետ կապված՝ սոցիալական խնդիրները, ընտրական օրենսգրքի քննարկումը, դարաբաղյան հակամարտության կարգավորման նոր առաջարկները, Իրաքի շուրջ իրադրության սրացումը, նախկին իշխանությունների քաղաքական գնահատականը, Հանրապետական կուսակցության կայանալիք համագումարը: Իր առանձնահատկության պատճառով բացառություն է եղել «Ստորակետ» ծրագիրը: Եվ, իրենց ավանդական ուղղվածության համապատասխան ՀՀ ներքին խնդիրների վրա են կենտրոնացել «Իրավունք», «Այժմ» թերթերը եւ «Այբ-Ֆե» ու «Կիրակի» հեռուստածրագրերը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետութիւն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ. Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.500 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար, որից 1-ը՝ 2 տպագրական մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ):

«ՀՀ»-ն 1998թ. նոյեմբեր-դեկտեմբերին էականորեն փոխել է թեմատիկ ուղղվածությունը: Առաջին անգամ դիտարկման ամբողջ ընթացքում (1998թ. մայիսից ի վեր) առաջին տեղ է բարձրացել տնտեսության թեման՝ թերթի մակերեսի 17,56% (նախորդ եկամսյակում՝ 10,58%): Հաջորդ տեղերում են՝ մշակույթ/պատմությունը (14,71%), գովազդ/հայտարարությունները (13,96%), միջազգային կյանքը (11,41%): Մյուս թեմատիկ բաժինները զգալիորեն ետ են մնում այս առաջատար քառյակից:

Չնայած միջազգային կյանքի մասին նյութերի բաժինը գրեթե անփոփոխ է մնացել, այս բաժնի ներսում դիտարկման նախորդ փուլի համեմատ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել: Գրեթե 1,5 անգամ պակասել է ուշադրությունը Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, 1,9 անգամ՝ Ադրբեջանի նկատմամբ: Դրա փոխարեն աճել է Վրաստանի, միջազգային կազմակերպությունների գործունեության մասին նյութերի բաժինը: Չզալիորեն ավելացել են միջազգային կյանքի մասին սեփական նյութերը. նախորդ երկամսյակում 17,44% է եղել, իսկ նոյեմբեր-դեկտեմբերին՝ 47,70%:

Հայ քաղաքական գործիչների հիշատակումները «ՀՀ»-ում բնորոշ են պաշտոնական թերթին. նախագահ Ռոբերտ Քոչարյան՝ 183, վարչապետ Արմեն Դարբինյան՝ 101, Ազգային ժողովի խոսնակ Խոսրով Հարությունյան՝ 60: Բոլոր հիշատակումների ճնշող մեծամասնությունը չեզոք է:

Կարծիքներին տրված մակերեսի առումով առաջատարը նույն քաղաքական գործիչներն են. Քոչարյան՝ 5.573,37 քառ.սմ, Հարությունյան՝ 4.141,83 քառ.սմ, Արմեն Դարբինյան՝ 3.800,27 քառ.սմ:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990-ին: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 80-150 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 42 համար, որից 8 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (7 համար A2 չափի 8 էջ, 1 համար՝ A3 չափի 16 էջ):

Նոյեմբեր-դեկտեմբերին «Ռեսպուբլիկա Արմենիա»-ի էջերում տնտեսական թեման դարձյալ վերադարձել է առաջատար դիրքի (հրատարակության ընդհանուր ծավալի 13,55%-ը): Երկրորդ տեղն այս անգամ կիսել են մշակույթ/պատմությունը եւ միջազգային կյանքը՝ յուրաքանչյուրը 13,05%: Հաջորդը գովազդ/հայտարարություններն են (9,39%): Արտասահմանյան երկրներից առաջվա մնան թերթի ուշադրության կենտրոնում Ռուսաստանն է (3,93%):

«ՌԱ»-ում պահպանվել է սեփական, խմբագրական հրապարակումների բաժինը մեծացնելու միտումը. այս անգամ այլ աղբյուրներից ստացված նյութերը միայն մի բաժնում էին գերազանցում՝ պատահարներ/զվարճալի նյութերում:

Հիշատակումների առումով առաջատարների քառյակը նույնն է մնացել. Ռոբերտ Քոչարյան՝ 230, Արմեն Դարբինյան՝ 116, Խոսրով Հարությունյան՝ 64 եւ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյան՝ 53: Բայց դիտարկման նախորդ ժամանակների համեմատությամբ աճել է նշանային (հիմնականում՝ դրական) հիշատակումների ընդհանուր թիվը: 19 դրական որակումներից 5-ը ստացել է գործող նախագահը, 2-ական՝ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը եւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, 1-ական՝ նախարարների կաբինետի ներկայացուցիչները, Երեւանի քաղաքապետ Սուրեն Աբրահամյանը, ժողովրդական կուսակցության առաջնորդ Կարեն Դեմիրճյանը: Դիտարկվող 86 գործիչներից բացասական համատեքստում հիշատակվել է միայն Տեր-Պետրոսյանը (4 անգամ):

Առաջին անգամ դիտարկման 8 ամիսների ընթացքում կարծիքներին տրված տեղի առումով առաջատարների խմբում փոփոխություն է տեղի ունեցել. Խոսրով Հարությունյան (4.390,04 քառ.սմ), Վարդան Օսկանյան (2.646,40 քառ.սմ), ՀՀ նախագահի խորհր-

դական Արամ Սարգսյան (2.634,70 քառ.սմ) եւ նոր միայն ինքը՝ նախագահ Ռոբերտ Քոչարյան (2.562,29 քառ.սմ): Ավանդաբար առաջատարների քառյակում գտնվող Արմեն Դարբինյանն այս անգամ միայն հինգերորդն էր (1.921,84 քառ.սմ): Իսկ նրան հաջորդող տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչության պետ Հարություն Կարապետյանը 1998թ. վերջին երկու ամիսներին 4 անգամ ավելի շատ մակերես է ստացել, քան նախորդ վեց ամիսներին (մայիս-հոկտեմբերին՝ 467,25 քառ.սմ, նոյեմբեր-դեկտեմբերին՝ 1.868,30 քառ.սմ):

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 39 համար:

Թերթն ավանդաբար ամենաշատ տեղ հատկացնում է միջազգային կյանքին (16,83%): Երկրորդ տեղում է մշակույթ/պատմությունը (13,04%), երրորդում՝ տնտեսությունը (12,38%): Նախորդ երկամսյակում երկրորդ տեղում գտնվող սպորտի թեման տեղափոխվել է չորրորդ տեղ (11,80%): Աճել է զովազդ/հայտարարությունների ծավալը՝ 10,42%: Մինչդեռ «Ազգ»-ային մյուս ավանդական թեման՝ Սփյուռքը, այս անգամ համեմատաբար քիչ տեղ է ստացել (3,25%):

Քաղաքական գործիչներից ամենահաճախ հիշատակվել են Ռոբերտ Քոչարյանը՝ 128 եւ Արմեն Դարբինյանը՝ 69: Ընդ որում երկուսն էլ նշանային (դրական/բացասական) հիշատակումների բացասական հաշվեկշիռ ունեն:

Քաղաքական գործիչների կարծիքներին տրվող մակերեսի առումով առաջատար են Վարդան Օսկանյանը՝ 2.068,25 քառ.սմ, ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Վահե Գաբրիելյանը՝ 1.869,50 քառ.սմ, Արմեն Դարբինյանը՝ 1.752,50 քառ.սմ, Ռոբերտ Քոչարյանը՝ 1.532,75 քառ.սմ, արդյունաբերության եւ առևտրի նախկին նախարար Գառնիկ Նանագուլյանը՝ 1.342,75 քառ. սմ, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդրյանը՝ 1.342,50 քառ.սմ:

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ. Հիմնադիր՝ ՀՀ Դատախոսության Գերագույն մարմին: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.000 օրինակ: Գինը՝ 50 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 42 համար, որից 1 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ):

Թերթում դարձյալ (դիտարկման առաջին՝ մայիս-հունիս փուլից բացի) առաջատար է միջազգային կյանքը՝ 20,40%: Այստեղ բավականին հաճախ են նյութեր հայտնվել Վրաստանի, Ջավախքի հայերի խնդիրների մասին: Դրան հաջորդում են մշակույթ/պատմությունը՝ 15,14%, տնտեսությունը՝ 11,53%, ներքին քաղաքականությունը՝ 10,21%:

Հիշատակումների առումով առաջատար են Ռոբերտ Քոչարյանը 163 (այդ թվում՝ 2 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 73, Խոսրով Հարությունյանը՝ 35 (այդ թվում՝ 1 դրական), ՀՀ նախագահի խորհրդական Վահան Հովհաննիսյանը՝ 33, Վարդան Օսկանյանը՝ 32: Ամենից շատ բացասական հիշատակում ունի Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 5: «Երկիրը» բավականին մեծ ուշադրություն է դարձնում Հայաստանի մարզերին եւ, համապատասխանաբար, թերթը հաճախ է հիշատակում մարզպետներին: Ընդ որում, վերջիններիս, որպես կանոն, բացասական հիշատակումներ են բաժին ընկնում: Տավուշի նախկին մարզպետ Պավլիկ Ասատրյանի 4 հիշատակումներից 3-ը բացասական է, Շիրակի մարզպետ Արարատ Գոմցյանի 3 հիշատակումներից՝ 2-ը, Վայոց Ձորի մարզպետ Պանդուխտ Մա-

նուկյանի 2 հիշատակումներից՝ 1-ը: Բացառություն է միայն Կոտայքի մարզպետ Սամվել Ստեփանյանը, որի 2 հիշատակումներից 1-ը դրական է:

Քաղաքական գործիչների կարծիքներին տրված տեղի առումով առաջատար են ՀՀ-ի երկու ներկայացուցիչները՝ Վահան Հովհաննիսյանը՝ 1.850,99 քառ.սմ եւ մշակույթի, սպորտի ու երիտասարդության նախարար Ռուլանդ Շառոյանը՝ 1.720,75 քառ.սմ:

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ. Հիմնադիր՝ թերթի խմբագրական խորհուրդ: Ծավալը՝ 4 տպագրական մամուլ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 39 համար:

Թերթում թեմաների առաջատար քառյակը նույնն է, ինչ նախորդ երկամսյակում. միջազգային կյանք՝ 12,77%, տնտեսություն՝ 10,74%, ներքին քաղաքականություն՝ 10,72%, գովազդ/հայտարարություններ՝ 8,45%, այն տարբերությամբ միայն, որ վերջին երեքը փոխել են տեղերը: Եւ ընդհանրապես, «Առավոտը» կայուն է թերթի մակերեսի թեմատիկ բաշխման առումով:

Քաղաքական գործիչներից բոլորից հաճախ հիշատակվել է Ռոբերտ Քոչարյանը՝ 217: Նրան հաջորդում են Արմեն Դարբինյանը՝ 122, Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 84: Առաջատարները բոլորն էլ նշանային հիշատակումների բացասական հաշվեկշիռ ունեն:

Կարծիքներին տրված մակերեսի աղյուսակում նախորդ երկամսյակի համեմատությամբ էական փոփոխություններ են տեղի ունեցել: Ռոբերտ Քոչարյանը 14-րդ տեղից բարձրացել է առաջին տեղ (1.587,80 քառ.սմ): Վեցերորդ տեղից երկրորդ տեղ է բարձրացել «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության եւ խորհրդարանական «Հայրենիք» խմբակցության առաջնորդ Էդուարդ Եգորյանը՝ 1.376,55 քառ.սմ: Երրորդ տեղում է Հայոց համազգային շարժման առաջնորդ Վանո Սիրադեղյանը՝ 1.289,64 քառ.սմ:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ. Հիմնադիրը մասնավոր անձ է: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 41 համար, որից մեկ համար լույս է տեսել 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ):

Առաջին տեղում դարձյալ միջազգային կյանքն է՝ 15,65%: Դրան հաջորդում են ներքին քաղաքականությունը՝ 13,93%, սպորտը՝ 11,76%, տնտեսությունը՝ 10,17%: Միջազգային կյանքին տրամադրված ծավալի գրեթե կեսը Ռուսաստանի մասին նյութերն են գրավում 7,27%:

Հիշատակումների առումով առաջատարը Ռոբերտ Քոչարյանն է՝ 123 (այդ թվում 2 բացասական): Նրանից զգալիորեն ետ են մնում Արմեն Դարբինյանը՝ 54 (այդ թվում 2 բացասական, խոսքով Հարությունյանը՝ 38 (այդ թվում 3 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 34 (այդ թվում 8 բացասական): Դրական համատեքստում են հիշատակվել միայն պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը եւ մշակույթի, սպորտի ու երիտասարդության նախարար Ռուլանդ Շառոյանը (մեկական անգամ):

Ամենաշատ տարածք տրամադրվել է կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի՝ 2.475,00 քառ.սմ, ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մանուկյանի՝ 1.806,75 քառ.սմ եւ Ռոբերտ Քոչարյանի՝ 1.800,50 քառ.սմ խոսքին ու կարծիքներին:

«ԳՈՒՆՍ ԱՐՄԵՆԻ»

Տեղեկանք. «Գոլոս Արմենի» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ. Հիմնադիր՝ թերթի աշխատանքային կոլեկտիվ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 24 համար:

«ԳԱ»-ի էջերում, ինչպես եւ հուլիս-հոկտեմբերին առավելագույն թեմատիկ լուսաբանում են ստացել միջազգային կյանքը՝ 20,28% (այս բաժնում անփոփոխ առաջատարը Ռուսաստանն է՝ 4,94%), ներքին քաղաքականությունը՝ 10,46% եւ տնտեսությունը՝ 10,00%: Դիտարկման նախորդ երկամսյակի համեմատությամբ աճել է գովազդ/հայտարարությունների ծավալը եւ այն բարձրացել է չորրորդ տեղ (8,36%):

Հիշատակումների առումով «ԳԱ»-ն ամենաշատ անդրադառնում է ՀՀ ներկա եւ նախկին նախագահներին: Ինչպես եւ դիտարկման նախորդ վեց ամիսներին, նրանք առաջատար են թե՛ ընդհանրապես հիշատակումների, թե՛ մասնավորապես բացասականների առումով: Ռոբերտ Քոչարյանը հիշատակվել է 102 անգամ, որից 12-ը՝ բացասական, Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 54 անգամ, որից 21-ը՝ բացասական: Նրանց հաջորդում են Արմեն Դարբինյանը (34 հիշատակում, այդ թվում՝ 4 բացասական) եւ Վազգեն Սարգսյանը (27 հիշատակում, այդ թվում՝ 1 դրական, 2 բացասական):

Կարծիքների արտացոլմանը տրամադրված մակերեսի առումով աղյուսակը գլխավորում են ԼՂՀ նախագահ Արկարի Ղուկասյանը (788,17 քառ.սմ), ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մանուկյանը (621,20 քառ.սմ), ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար Դավիթ Վարդանյանը (596,65 քառ.սմ) եւ վարչապետ Արմեն Դարբինյանը (536,70 քառ.սմ):

«ՀԱՅՔ»

Տեղեկանք. «Հայք» - շաբաթաթերթ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ Հայոց համագալին շարժում (ՀՀԸ): Ծավալը՝ 4 տպ. մամուլ (A3 չափի 16 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 150 դրամ: Դեկտեմբերի 30-ի համարը արժեր 149 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 9 համար:

Թերթում, ինչպես եւ նախորդ երկամսյակում, առաջատար թեման ներքին քաղաքականությունն է՝ 17,44%: Երկրորդ տեղում է մշակույթ/պատմությունը (12,53%), երրորդում՝ պատահարներ/գվարճալի նյութերը (11,99%), չորրորդում՝ միջազգային կյանքը (9,90%):

Քաղաքական գործիչներից ամենից շատ հիշատակվել են Ռոբերտ Քոչարյանը՝ 95 (այդ թվում՝ 2 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 31 (այդ թվում՝ 1 դրական), Արմեն Դարբինյանը՝ 26: Ի դեպ, նախկին նախագահը դրական համատեքստում հիշատակված միակ քաղաքական գործիչն է:

Կարծիքների արտահայտմանը տրամադրված մակերեսի առումով առաջատարը ՀՀԸ վարչության նախագահ Վանո Սիրադեղյանն է՝ 1.059,70 քառ.սմ: Նրան հաջորդում են սոցիալական ապահովության նախարար Գագիկ Եգանյանը՝ 779,00 քառ.սմ եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 516,25 քառ.սմ:

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք» - լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: Հիմնադրվել է 1989թ. Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Ծավալը՝ 3 տպ. մամուլ (A3 չափի 12 էջ) կամ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը 18.000: Գինը՝ 60-80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 16 համար:

«Իրավունքը» հասարակական-քաղաքական թերթերի մեջ դարձյալ յուրօրինակ է մնում. այստեղ առաջին տեղում գովազդ/հայտարարություններն են՝ 21,31%, թեւ նրանց ծավալը կրճատվել է հուլիս-օգոստոսի (32,88%) եւ սեպտեմբեր-հոկտեմբերի

(28,97%) համեմատությամբ: Դրանց հաջորդում են ներքին քաղաքականությունը՝ 17,14%, տնտեսությունը՝ 13,41%, մշակույթ/պատմությունը՝ 10,73%: Նախորդ երկամսյակի համեմատությամբ էականորեն՝ 2,5 անգամ աճել է սոցիալական խնդիրներին նվիրված հրապարակումների ծավալը:

«Իրավունքը» պահպանում է հիմնականում սեփական նյութերին ապավինելու ավանդույթը: Նոյեմբեր-դեկտեմբերին այլ աղբյուրներից օգտվելու առավելագույն տոկոսը նկատվել է սփյուռք բաժնուն՝ 34,44%:

Քաղաքական գործիչներից ամենից շատ հիշատակվել են 33 նախկին եւ ներկա նախագահները. Ռոբերտ Քւչարյանը՝ 119 անգամ (այդ թվում՝ 2 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 55 (այդ թվում՝ 10 բացասական): Երրորդ տեղում Արմեն Դարբինյանն է՝ 53 (այդ թվում՝ 1 բացասական): Եթե նշանային գնահատականներ համարեինք «Ընկ. Փանջունու անկյուն» խորագրի ծաղրանկարներն ու երգիծական մանրապատումները, ապա «Իրավունքում» էականորեն կաճեր բացասական հիշատակումների թիվը: Մինչդեռ այս կամ այն քաղաքական գործչի հասցեին կոնկրետ, ուղղակի կամ համատեքստային մեղադրանքներ չպարունակող երգիծական նյութերը հիմնականում դիտարկվել են որպես չեզոք:

Քաղաքական գործիչների տեսակետներին տրվող մակերեսի առումով առաջատար են Վահե Գաբրիելյանը՝ 1.307,25 քառ.սմ, «Սահմանադրական իրավունք» միության նախագահ Զրանտ Խաչատրյանը՝ 982,40 քառ.սմ եւ Վանո Սիրադեղյանը՝ 854,10 քառ.սմ:

«ԱՅԺԱ»

Տեղեկանք. «Այժմ» - շաբաթաթերթ: Զիննադրվել է 1996թ. Զիննադիր՝ Ազգային-ժողովրդավարական միութուն: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Զայտարարված տպաքանակը 3.000: Գինը՝ 60 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 8 համար:

Այս թերթն անփոփոխ կերպով ամենաքաղաքականացվածն է մնում: Թերթի ընդհանուր մակերեսում ներքին քաղաքականության բաժինը նոյեմբեր-դեկտեմբերին եղել է 37,06%: Երկրորդ տեղում մշակույթ/պատմությունն է՝ 13,55% (առաջին անգամ է այս թեման «Այժմ»-ում այսքան տեղ ստացել): Միաժամանակ թերթը կարելի է պայմանականորեն «ամենաաթեիստականը» համարել: Դիտարկման այս շրջանում թերթում կրոնի եւ եկեղեցու մասին ոչ մի հրապարակում չի եղել: Նախորդ երկամսյակներում նույնպես կրոնական-եկեղեցիական թեմայի բաժինը թերթում աննշան էր:

Հիշատակումների առումով «Այժմում» առաջատարը Ռոբերտ Քուչարյանն է՝ 41: Նրան հաջորդում են Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 22 եւ Վազգեն Սարգսյանը՝ 17: «Այժմի» հիմնադիր կուսակցության առաջնորդ Վազգեն Մանուկյանը եւ վարչապետ Արմեն Դարբինյանը հիշատակվել են 14-ական անգամ, բայց եթե Մանուկյանի բոլոր հիշատակումները չեզոք են, ապա Դարբինյանն ունի 2 բացասական հիշատակում:

Մանուկյանը գերազանցել է բոլորին՝ իր կարծիքներին տրված մակերեսով՝ 2.909,55 քառ.սմ: Նրանից զգալիորեն ետ է մնում կուսակցությունում երկրորդ մարդը՝ Դավիթ Վարդանյանը՝ 918,00 քառ.սմ:

«ՀԱՅԼՈՒՐ»

Տեղեկանք. «Հայլուր» - Զայաստանի ազգային հեռուստատեսության լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) հեռարձակվում է օրական 3 անգամ, շաբաթ օրերին՝ 2 անգամ: Դիտարկվել են 20.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 1.608 րոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 1.506 րոպե 41 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 101 րոպե 19 վրկ.: Մի թողարկման առավելագույն տեւողությունը՝ 40 րոպե, նվազագույնը՝ 22 րոպե:

Ստուդիայի ձեւավորումը, գլխադիրներն ու բլյունը (մի տեսակ) չեն փոխվել:

Ամենաշատ ժամանակ տրամադրվել է գովազդ/հայտարարություններին՝ 19,47%, տնտեսությանը՝ 14,99%, միջազգային կյանքին՝ 10,57%:

Հիշատակումների քանակով առաջատար են Ռոբերտ Քոչարյանը (91) Արմեն Դարբինյանը (72), Խոսրով Հարությունյանը (30): Ամենաշատ դրական հիշատակում ունի Ռոբերտ Քոչարյանը (3), ամենաշատ բացասական հիշատակում՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը (2):

Քաղաքական գործիչների տեսակետներին տրամադրված ժամանակով առաջատար են Ռոբերտ Քոչարյան (13 րոպե, 40 վրկ.) Վահե Գաբրիելյանը (10 րոպե, 50 վրկ.), Արմեն Դարբինյան (9 րոպե, 44 վրկ.):

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 9 անգամ: Դիտարկվել են 21.45-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 640 րոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 599 րոպե 51 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 40 րոպե 9 վրկ.: Մի թողարկման առավելագույն տեւողությունը՝ 17 րոպե, նվազագույնը՝ 8 րոպե: Երկու ամսվա ընթացքում օգտագործվել է մի տեսակ գլխադիր, բլյունները չեն փոփոխվել:

Ծավալով առաջին եռյակում են հետեւյալ թեմաները. տնտեսություն (17,15%), ԱԺ/օրենսդրություն (12,88%), ներքին քաղաքականություն (11,61%):

Այս ծրագրի առանձնահատկությունը դարձյալ իրավական թեմաների, հատկապես դատավարությունների նկատմամբ հատուկ ուշադրությունն է: 1998-ի վերջին նոր խորագիր է հայտնվել՝ «Լուրեր մարզերից», որը դեռեւս չի անդրադարձել մարզերի կյանքի մասին նյութերի ընդհանուր ծավալի վրա:

Հիշատակումների քանակով առաջատարը նույն եռյակն է. Ռոբերտ Քոչարյան (49), Արմեն Դարբինյան (26), Խոսրով Հարությունյան (25): Դրական են հիշատակվել 4 քաղաքական գործիչ, ընդ որում լավագույն արդյունքը Ռոբերտ Քոչարյանին է (5):

Կարծիքների արտացոլման ժամանակի առումով ցուցակը գլխավորում են Արմեն Դարբինյանը (4 րոպե, 43 վրկ.), Վազգեն Մանուկյանը (4 րոպե 30 վրկ.), Վահե Գաբրիելյանը (4 րոպե, 12 վրկ.):

«ՕՐԱԿԱՐԳ»

Տեղեկանք. «Օրակարգ» - ՀԱՀ կիրակնօրյա լրատվական-վերլուծական ծրագիր: Առաջին երկու թողարկումները եթեր հեռարձակվեցին 20.00-ին, մնացած հաղորդումները՝ 21.00-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 9 թողարկում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 318 րոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 308 րոպե 39 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 9 րոպե 21 վրկ.: Մի թողարկման առավելագույն տեւողությունը՝ 50 րոպե, նվազագույնը՝ 25 րոպե: Ստուդիայի ձեւավորումը, գլխադիրն ու բլյունները (մի տեսակ) դիտարկված ժամանակամիջոցում չեն փոխվել: Հաղորդումը մի նշտական վարող ունի:

Ըստ ծավալի առաջատար թեմաների հերթագայությունը դիտարկման նախորդ փուլի համեմատությամբ փոխվել է: Առաջին տեղում միջազգային կյանքն է՝ 23,12% (մեծ մաս են կազմում Ռուսաստանի (6,75%) եւ ԱՄՆ-ի (4,74%) մասին նյութերը: Երկրորդ-երրորդ

տեղերում գովազդ/հայտարարություններն են (11,17%) եւ ներքին քաղաքականությունը (10,53%):

Հիշատակումների հաճախականությամբ առաջատար են Ռոբերտ Քոչարյանը (25), Արմեն Դարբինյանը (15), Վարդան Օսկանյանը (8): Մյուս գործիչները հիշատակվել են 5 անգամից ոչ ավելի: Հիշատակումների ճնշող մեծամասնությունը չեզոք է: Բացառություն են 5 դրական՝ Արմեն Դարբինյան, Կարեն Դեմիրճյան, նախագահի խորհրդական Կասիա Աբգարյան, Լեւոն Տեր-Պետրոսյան եւ Ռոբերտ Քոչարյան (1-ական) եւ 8 բացասական հիշատակումները՝ Էդուարդ Եգորյան (3), Վանո Սիրադեղյան եւ «21-րդ դար» կուսակցության առաջնորդ Դավիթ Շահնազարյան (2-ական), Լեւոն Տեր-Պետրոսյան (1):

Կարծիքներին տրված ժամանակով բոլորին գերազանցել է Արմեն Դարբինյանը (8 ռոպե, 50 վրկ.): Նրան հաջորդում են Վահե Գաբրիելյանը (6 ռոպե, 40 վրկ.) եւ Ռոբերտ Քոչարյանը (6 ռոպե, 8 վրկ.):

«ԿԻՐԱԿԻ»

Տեղեկանք. «Կիրակի» - «Ա1+» հեռուստաալիքի կիրակնօրյա լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է 21.45-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 9 թողարկում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 136 ռոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 130 ռոպե 32 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 5 ռոպե 28 վրկ.: Մի թողարկման առավելագույն տևողությունը՝ 16 ռոպե, նվազագույնը՝ 13 ռոպե: Ստուդիայի ձեւավորումը փոխվել է մի քանի անգամ: Օգտագործվել են նույն գլխադիրները, ինչ դիտարկման նախորդ փուլում եւ նոր բլումներ (երկու տեսակ): Հաղորդումն ունի մեկ մշտական վարող: Դիտարկված ժամանակաշրջանի վերջին թողարկումը (դեկտեմբերի 27-ին) ուղեկցվում էր «սուրդո»-թարգմանությամբ:

Ինչպես եւ սեպտեմբեր-հոկտեմբերին առաջին երկու տեղերը գրավել են ԱԺ/օրենսդրություն (42,03%) եւ ներքին քաղաքականություն (27,83%) թեմաները: Երրորդ տեղում տնտեսությունն է (10,30%):

Հիշատակումների առումով առաջատար են Ռոբերտ Քոչարյանը (35), ԻՍ նախագահ Պարույր Հայրիկյանը (16), Արմեն Դարբինյանը (11): Մյուսներից հաճախ են բացասական համատեքստում հիշատակվել Ռոբերտ Քոչարյանը (7), իսկ դրականում՝ Վանո Սիրադեղյանը եւ Պարույր Հայրիկյանը (3-ական):

Կարծիքների արտացոլմանը տրամադրված ժամանակով առաջատար են Ռոբերտ Քոչարյանը (3 ռոպե, 8 վրկ.), Արմեն Դարբինյանը (1 ռոպե, 40 վրկ.), Դավիթ Վարդանյանը (1 ռոպե 36 վրկ.) եւ Պարույր Հայրիկյանը (1 ռոպե, 18 վրկ.):

«ՍՏՈՐԱԿԵՏ»

Տեղեկանք. «Ստորակետ» - Հայաստանի «Ինտերնյուսի» ամենշաբաթյա լրատվական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 13 անկախ հեռուստակայաններով: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 9 թողարկում:

Փաստացի եթերի ընդհանուր ծավալը 208 ռոպե է: Խոսքային մասի ծավալը՝ 204 ռոպե 32 վրկ.: Տեխնիկական եւ գեղարվեստական դադարների ծավալը՝ 3 ռոպե 28 վրկ.: Մի թողարկման առավելագույն տևողությունը՝ 30 ռոպե, նվազագույնը՝ 21 ռոպե: Ստուդիայի ձեւավորումը, գլխադիրը եւ բլումները (3 տեսակ) չեն փոխվել: Հաղորդման մեջ օգտագործվել են համար ազդագրեր: «Ստորակետը» մի մշտական վարող ունի: Հաղորդումը բաղկացած է տարածաշրջանային անկախ հեռուստակայանների նյութերից:

Ծավալի առումով առջեւում են հետեւյալ թեմաները. սոցիալական խնդիրներ (28,00%), առողջապահություն/բնապահպանություն (20,32%), հասարակություն (13,09%), լրատվամիջոցներ (11,32%), մշակույթ/պատմություն (11,03%):

Դիտարկվող մյուս ծրագրերի համեմատությամբ «Ստորակետում» ավանդաբար հազվադեպ են հիշատակվում քաղաքական գործիչները, եւ քիչ ժամանակ է տրամադրվում նրանց տեսակետների արտացոլմանը: Դիտարկվող 86 քաղաքական գործիչներից հիշատակվել են 4-ը միայն, այն էլ՝ 1-ական անգամ. Ռոբերտ Քոչարյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանը, Արմեն Դարբինյանը, Արարատ Գոմցյանը: Բոլոր հիշատակումները չեզոք են: Հինգ վայրկյան տրամադրվել է Արմեն Դարբինյանի տեսակետին, չորս վայրկյան՝ Ռոբերտ Քոչարյանի:

Նոյեմբերի 8-ից, սկսած «Ստորակետի» հարյուրերորդ թողարկումից, այն դարձել է թեմատիկ ծրագիր: Նրա 8 թեմատիկ թողարկումները կոչվում էին. «Չորրորդ իշխանություն», «Չմեռային հոգսեր», «Փախստականներ», «Առողջապահության խնդիրներ», «Աղետի գոտի», «Երեխաների հաղորդակցման միջազգային օր», «Բնապահպանություն», «Ինչպե՞ս են ապրում, Հայաստան»:

«ԼՈՒՐԵՐ»

Տեղեկանք. «Լուրեր» - Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվում է օրական 10 անգամ, շաբաթ օրերին՝ 8 անգամ, կիրակի օրերին՝ 6 անգամ: Դիտարկվել են 23.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 50 թողարկում (Դեկտեմբերի 7-ին եւ 31-ին 23.00-ին «Լուրերի» թողարկումներ չեն եղել):

Փաստացի եթերի ընդհանուր ժամալը 914 րոպե է: Խոսքային մասի ժամալը՝ 789 րոպե 50 վրկ.: Տեխնիկական եւ այլ դադարների ժամալը՝ 124 րոպե 10 վրկ.: Մի թողարկման առավելագույն տևողությունը՝ 23 րոպե, նվազագույնը՝ 10 րոպե: Օգտագործվել է նույն գլխադիրը, ինչ դիտարկման նախորդ փուլում: Վարում են ՀԱՌ-ի 2 հաղորդավարներ:

Հաղորդման կառուցվածքի սկզբունքն ավանդական է:

Ծավալով առաջատար թեմաներն են տնտեսություն (24,19%), Աժ/օրենսդրություն (14,45%), սոցիալական խնդիրներ (7,56%):

Հիշատակումների հաճախականությամբ առաջին տեղը կիսել են Ռոբերտ Քոչարյանը եւ Արմեն Դարբինյանը (62-ական), նրանց հաջորդում են Խոսրով Հարությունյանը (36) եւ Աժ փոխխոսնակ Ալբերտ Բազեյանը (22):

Տեսակետներին տրամադրված ժամանակի առումով առաջին երեք տեղերը զբաղեցնում են Խոսրով Հարությունյանը (19 րոպե, 41 վրկ.), Ռոբերտ Քոչարյանը (14 րոպե, 43 վրկ.) եւ Էդվարդ Սանդոյանը (9 րոպե, 50 վրկ.):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՍ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1 մայիսի - 31 դեկտեմբերի, 1998

ԱՌԱՋԱՏԱՐ հայկական լրատվամիջոցների դիտարկման ութ ամիսները թույլ են տալիս եզրահանգել, որ թեմատիկ նախընտրությունների առումով նրանք պայմանականորեն երկու հիմնական խմբի են բաժանվում՝ «ավանդական» եւ «ոչ ավանդական»: Առաջին խմբում այն լրատվամիջոցներն են, որոնցում թեմատիկ չորս բաժիններ են գերակշռում. միջազգային կյանք, տնտեսություն, մշակույթ/պատմություն, ներքին քաղաքականություն: Այս բաժիններն ըստ իրենց ծավալի կարող են տարբեր հերթականությամբ դասավորվել, բայց դրանց ցուցանիշների (բաժինը՝ թերթի ընդհանուր մակերեսի/եթերային ժամանակի մեջ) տարբերությունը մեծ չէ: Իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բաժինների հերթականությունը որոշակիորեն կախված է տվյալ լրատվամիջոցի ղեկավարի եւ առաջատար լրագրողների խմբի նախընտրություններից: Հետագոտված լրատվամիջոցներից «ավանդական» են «Հայաստանի Հանրապետութիւնը», «Ռեսպուբլիկա Արմենիան», «Ազգը», «Երկիրը» եւ «Առավուտը»:

Մնացածը տարբեր պատճառներով «ոչ ավանդականների» շարքում են: Այսպես՝ «Հայոց աշխարհը» դուրս է մնում ավանդականների շարքից սպորտի մասին նյութերի մեծ ծավալի հաշվին, «Գոլոս Արմենիին»՝ միջազգային կյանքի գերակշռության, «Հայքը»՝ պատահարներ/զվարճալիքի նկատմամբ հատուկ վերաբերմունքի, «Այժմը»՝ ներքին քաղաքականության կողմը անհամամասնության, ՀԱՀ լրատվական ծրագիր «Հայլուրը» եւ նրա նախորդները՝ մշակույթ/պատմության գերակշռության հաշվին եւ այլն (*առանձին լրատվամիջոցների մասին հաշվետվությունները տե՛ս ստորեւ*):

Հիմնական ցուցանիշներով «ավանդականների» թվին կարելի էր դասել նաեւ «Իրավունքը», եթե չլիներ գովազդ/հայտարարությունների՝ հասարակական-քաղաքական հրատարակության համար աննախադեպ մեծ ծավալը (26,10%): Ի դեպ, գովազդի նկատմամբ վերաբերմունքը լրատվամիջոցների տարբերակման դարձյալ մի չափանիշ է: Մի խումբը այն դիտարկում է որպես բարեկեցության հասնելու կարելու ճանապարհ եւ, արդյունքներին նայելով, հաջողությամբ գովազդատուներին գրավելու ճանապարհներ է փնտրում: Այս խմբում «Իրավունքից» բացի մտնում են «Հայաստանի Հանրապետութիւն», «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերը եւ «Հայլուր» հեռուստածրագիրը (իր նախորդների հետ միասին): Մյուսները կամ անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում գովազդի փնտրտուքին կամ այս ուղղությամբ նվազ արդյունավետությամբ են աշխատում: Առաջին ու երկրորդ խմբերի միջեւ միջանկյալ տեղ են գրավում «Ազգն» ու «Գոլոս Արմենիին»:

ԴԻՏԱՐԿՄԱՆ համար ընտրված լրատվամիջոցները ուսումնասիրվել են նաեւ քաղաքական նախընտրությունների տեսանկյունից: Մասնավորապես փորձ է արվել բացահայտելու նրանց վերաբերմունքը երեք՝ պայմանական, բայց ըստ ամենայնի հատկանշական քաղաքական խմբերի նկատմամբ.

առաջին. «*ներկա իշխանություններ*» (որպես այս խմբի խորհրդանիշներ ընտրվել են ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, ՆԳ եւ ԱԱ նախարար Սերժ Սարգսյանը, այսինքն՝ 1998-ի «թավշյա հեղաշրջման» գլխավոր գործող անձինք):

երկրորդ. «*նախկին իշխանություններ*» (այստեղ խորհրդանիշներն են նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը եւ Հայոց համազգային շարժման՝ 1988-1998թթ թիվ 1 կուսակցության առաջնորդ Վանո Սիրադեղյանը):

երրորդ. «*կարոտաբաղձական քաղաքական գործիչներ*», այսինքն՝ նրանք, ում հաջողությունը շատ բանով պայմանավորված է բնակչության զգալի մասի՝ խորհրդային ժամանակների կարոտաբաղձությամբ (ժողովրդական կուսակցության առաջնորդ Կարեն Դեմիրճյան եւ կոմկուսի առաջնորդ Սերգեյ Բադալյան):

Այս քաղաքական գործիչների հիշատակումների հաճախականությունը (այդ թվում՝ դրական եւ բացասական հիշատակումների հաշվեկշիռը), ինչպես նաեւ նրանց կարծիքների/հայացքներին տրված մակերեսը/ժամանակը լրատվամիջոցների նախընտրությունները որոշելու հիմք են դարձել: Ընդ որում, անհրաժեշտ էր հաշվի առնել, որ, անկախ այն բանից, թե ում կողմն է այս կամ այն լրատվամիջոցի համակրանքը, այն մեծ ուշադրություն է դարձնում երկրի ղեկավարության, նախ եւ առաջ՝ նախագահի գործունեությանը (հատկապես եթե հաշվի առնենք, որ պետության ներկա ղեկավարը չի խուսափում մամուլի հետ շփումներից): Այլ խոսքով՝ հիշատակումների հաճախականությամբ Ռոբերտ Քոչարյանի առաջնությունը փաստորեն բոլոր լրատվամիջոցներում պետք է վերապահությամբ ընդունել:

Կոնկրետ թերթերի եւ էլեկտրոնային լրատվամիջոցների տվյալները տպագրվում են ստորեւ: Իսկ նախաբանում կփորձենք խմբավորել դրանք՝ ըստ քաղաքական հակումների ու համակրությունների:

Առաջին խումբը ներկա իշխանություններին անվերապահորեն սատարող լրատվամիջոցներն են: Սպասվածին պես այս խմբում են «Հայաստանի Հանրապետութիւն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերը, Հայաստանի ազգային հեռուստատեսությունը եւ Ազգային ռադիոն: Ընդ որում, երկու թերթերն էլ, մի քիչ պակաս՝ ՀԱՌ-ն, նախկին իշխա-

նությունների համեմատ գերապատվություն են տվել «կարոտաբաղձական» գործիչներին, իսկ ՀԱՀ-ի վերաբերմունքն այդ երկու պայմանական խմբերի նկատմամբ հավասար էր:

Երկրորդ խումբը կոնկրետ կուսակցական համակրություններ ունեցող լրատվամիջոցներն են, որոնք սակայն այս երեք պայմանական խմբերից գերապատվությունը դարձյալ ներկա իշխանություններին են տալիս: Դրանք են «Ազգ», «Հայոց աշխարհ» եւ «Երկիր» թերթերը: Բայց եթե «Ազգը» նախկին իշխանությունների ու «կարոտաբաղձական» գործիչների նկատմամբ գրեթե նույն վերաբերմունքն ունի, ապա մյուս երկուսի վերաբերմունքը «նախորդների» նկատմամբ խիստ բացասական է, իսկ «կարոտաբաղձականներին»՝ չեզոք:

Երրորդ խումբն ընդդիմադիր լրատվամիջոցներն են (անկախ կուսակցական պատկանելությունից եւ ընդհանրապես կուսակցականության առկայությունից ու բացակայությունից): Դրանք են «Գոլոս Արմենիի», «Հայք», «Այժմ» թերթերը: Նրանց միավորում է ներկա իշխանություններին չընդունելը, մնացած ամեն ինչում նրանք շատ են տարբեր: «Հայքը», բնականաբար, պաշտպանում է նախկին (ՀՀԾ-ական) իշխանություններին: «Այժմը» եւ «Գոլոս Արմենիին» նախորդներին ավելի շատ են քննադատում, քան ներկաներին, բայց առաջինն իր բնական համակրանքն ունի (Ազգային ժողովրդավարական միություն), իսկ երկրորդը՝ ոչ: Ի վերջո, այս երեք թերթերն էլ «ոչ մի կերպ» չեն վերաբերվում «կարոտաբաղձական» գործիչներին, եւ սա նրանց էլի մեկ ընդհանուր գիծն է:

«P.S.» եւ «Կիրակի» հաղորդումներում ի հայտ եկած որոշ նշաններով «Ա1+» հեռուստաընկերությունը նույնպես կարող էր ընդդիմադիրների շարքում դասվել, ընդ որում՝ նախկին իշխանությունների կողմը ձգտող: Սակայն հեռուստաալիքի գլխավոր լրատվական ծրագրում՝ «Այբ-Ֆե»-ում նման նշանների բացակայությունն այն մտքին է հանգեցնում, որ վերոհիշյալ հաղորդումներում ի հայտ է գալիս ոչ թե ընդհանուր առմամբ «Ա1+»-ի դիրքորոշումը, այլ կոնկրետ վարող-հեղինակների համակրանքներն ու հակումները:

Ուսումնասիրված մյուս լրատվամիջոցներն ընդգծված անհատական գծեր ունեն եւ քաղաքական հակումների հատկանիշով խմբավորման ենթակա չեն: Նրանց մասին կարդացեք այս հաշվետվության հատուկ բաժիններում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետութիւն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.500 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 174 համար, որից 27-ը՝ 2 տպագրական մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ) եւ 1 համար՝ 2,5 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ):

Խորհրդարանական «ՀՀ»-ի օրինակը բավականին համոզիչ կերպով հաստատում է դիտարկող խմբի նախնական եզրահանգումն այն մասին, որ հայկական մամուլում թերթի մակերեսի՝ ըստ թեմաների բաշխումը կախված է ոչ այնքան հրատարակության ուղղվածությունից, որքան գլխավոր խմբագրի եւ առաջատար լրագրողների խմբի ստեղծագործական հակումներից: Այսպես՝ նախորդ խմբագրի օրոք մշտապես առաջատար էր (գովազդ/հայտարարությունները չհաշված) մշակույթ/պատմությունը, իսկ նոր խմբագրի օրոք նույնքան հաստատումն առաջին տեղ բարձրացավ տնտեսության թեման:

Ութ ամիսների միագումար աղյուսակում առաջատար թեմաների քառյակն այսպիսին է. գովազդ/հայտարարություններ՝ հրատարակության ընդհանուր ծավալի 14,86%, մշակույթ/պատմություն՝ 14,67%, տնտեսություն՝ 13,48% եւ միջազգային կյանք՝ 11,71%:

Որպես պաշտոնաթերթ «ՀՀ»-ն ութ ամիսների ընթացքում միանգամայն կանխատեսելի կերպով ուշադրություն է դարձրել այս կամ այն քաղաքական գործչին: Հիշատակումների առումով առաջատար են ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ 898 (այդ թվում՝ 12

դրական, 7 բացասական), ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանը՝ 526 (այդ թվում՝ 8 դրական, 1 բացասական), Ազգային ժողովի խոսնակ Խոսրով Հարությունյանը՝ 352 (այդ թվում՝ 1 դրական, 2 բացասական): Հարկ է նշել, որ Խ. Հարությունյանի բացասական հիշատակումները նախորդ գլխավոր խմբագրի օրոք են եղել, որին ԱԺ խոսնակն իր հրամանով ազատել էր աշխատանքից:

Վերջին երկու ամիսներին (նոյեմբեր-դեկտեմբեր) «ՀՀ»-ում նշանային հիշատակումների թիվը կտրուկ նվազել է. ընդամենը 4 դրական եւ 3 բացասական, դրանք էլ քաղաքական գործիչների մեջբերված խոսքերում են տեղ գտել:

Կանխատեսելի էր նաեւ քաղաքական գործիչների կարծիքներին տրված թերթային մակերեսի ծավալի աղյուսակը: Այն դարձյալ գլխավորում են Քոչարյանը՝ 17.431,49 քառ.սմ, Դարբինյանը՝ 16.280,92 քառ.սմ, եւ Խ. Հարությունյանը՝ 11.773, 56 քառ.սմ:

Քոչարյանի առաջատար լինելը կանխորոշել է «ՀՀ»-ում «ներկա իշխանությունների» առավելությունը: Չնայած «նախորդները» նույնպես առանց ուշադրության չեն մնացել. մասնավորապես՝ Հայոց համազգային շարժման առաջնորդ Վանո Սիրադեղյանը իր կարծիքներն արտահայտելու համար ստացած տեղով (2.257,75 քառ.սմ) առաջ է անցել «նոր իշխանություններին» խորհրդանշող ուժային նախարարներից՝ Վազգեն Սարգսյանից եւ Սերժ Սարգսյանից՝ ավելի շատ սանտիմետրեր «հավաքելով», քան նրանք երկուսը միասին վերցրած: Հատկանշական է, որ Սիրադեղյանի նկատմամբ ուշադրության առյուծի բաժինը եղել է նախորդ գլխավոր խմբագրի օրոք. միայն մայիս-հունիսին՝ 1.662,30 քառ.սմ: Իսկ «կարոտաբաղձական» քաղաքական գործիչները խիստ ետ են մնացել թե՛ հիշատակումների, թե՛ նրանց կարծիքներին տրված մակերեսի առումով: Ընդ որում թե՛ Կարեն Դեմիրճյանը (40), թե՛ Սերգեյ Բադալյանը (27) բացառապես չեզոք համատեքստում են հիշատակվել:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 80-150 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 170 համար, որից 2 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ) եւ 12 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (7 համար՝ A2 չափի 8 էջ եւ 5 համար՝ A3 չափի 16 էջ):

«Ռեսպուբլիկա Արմենիայի» թեմատիկ նախընտրությունները ութ ամիսների ընթացքում կայուն են եղել եւ առանձնակի փոփոխություններ չեն կրել: Առաջին քառյակում են հետեւյալ թեմաները (թեւեւ երբեմն փոխել են տեղերը)՝ միջազգային կյանք (մայիս-դեկտեմբերին՝ 14,32%), որտեղ Ռուսաստանը մշտապես գրավել է առաջին տեղը (3,91%), տնտեսություն՝ 13,70%, զովազդ/հայտարարություններ՝ 11,33%, որի ծավալը մշտապես նվազել է, մշակույթ/պատմություն՝ 10,76%:

«ՌԱ»-ն կայուն է ոչ միայն թեմատիկ նախընտրություններում, այլ նաեւ դիտարկող խմբի կողմից ուսումնասիրվող մյուս ցուցանիշով՝ պետական, քաղաքական եւ հասարակական գործիչների հիշատակումների քանակով: Առաջին չորս տեղերն անփոփոխ գրավել են Ռոբերտ Քոչարյանը (835), Արմեն Դարբինյանը (454), Խոսրով Հարությունյանը (270) եւ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը (218): Նույն այդ քաղաքական գործիչներն իրենց կարծիքներն արտահայտելու համար առավելագույն մակերես են ստացել. Քոչարյան՝ 14.749,77 քառ.սմ, Խ. Հարությունյան՝ 10.690,85 քառ.սմ, Դարբինյան՝ 9.187,12 քառ.սմ եւ Օսկանյան՝ 8.020,07 քառ.սմ: Մյուս գործիչները երկու ցուցանիշներով էլ զգալիորեն ետ են մնում:

Մեծ մասամբ նշանային գնահատականներն ի հայտ են գալիս, երբ թերթն ուրիշի կարծիքներն է շարադրում: Միայն Ռոբերտ Քոչարյանի եւ Արմեն Դարբինյանի գործունեությանը նվիրված նյութերում է, որ հեղինակների հատուկ հարգալից վերաբերմունքն

է երեւում: Դրական հիշատակումների գծով առաջատար են նախագահին ու վարչապետը (համապատասխանաբար՝ 7 եւ 5): Ընդամենը 2 բացասական կարծիք է եղել Քոչարյանի մասին, որը, ինչպես արդեն նշվել է սեպտեմբեր-հոկտեմբերի հաշվետվության մեջ, հնչել է ընդդիմության ներկայացուցիչների խոսքում: Ընդհանուր առմամբ «ՌԱ»-ի համակրանքը, բնականաբար, ներկա իշխանությունների կողմն է:

Նախկին իշխանություններին թերթն ինքը չի գնահատում: Սիեւնույն ժամանակ հրաժարականից ի վեր ընդհանրապես հրապարակային ելույթներ չունեցող նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հինգերորդն է հիշատակումների (98 հիշատակում) վարկանիշային աղյուսակում եւ առաջինը՝ բացասական բնութագրումների քանակով՝ 7 (2 դրական հիշատակման եւ 199,89 քառ.սմ մակերեսի պարագայում): Այսպիսով՝ ՀՀ երկու նախագահների նշանային գնահատականները նույնությամբ համընկնում են, միայն հակադարձ կարգով: ՆԳ նախկին նախարար Վանո Սիրադեղյանը, ինչպես եւ նրա հաջորդ Սերժ Սարգսյանը, միայն մեկ անգամ է նշանային համատեքստում հիշատակվում, միայն թե Սարգսյանը՝ դրական, իսկ Սիրադեղյանը՝ բացասական գնահատմամբ, թեւ վերջինս գերազանցում է Ս. Սարգսյանին թե՛ հիշատակումների քանակով (43) եւ թե՛ խոսքին տրված մակերեսով (1.233,73 քառ.սմ): Թերթն աչքի չի ընկնում նաեւ կարոտաբաղձական տրամադրություններով: ՀԿԿ ԿԿ նախկին առաջին քարտուղար, այժմ՝ ժողովրդական կուսակցության առաջնորդ Կարեն Դեմիրճյանն ընդամենը 47 հիշատակում ունի, իսկ կոմունիստների ներկա առաջնորդ Սերգեյ Բադալյանը՝ 40: Սակայն, եթե Դեմիրճյանը երկու անգամ հիշատակվել է դրական համատեքստում, ապա, չնայած Բադալյանի գործունեությունը լուսաբանող հրապարակումների լրատվական բնույթին, նրանց երանգը, այդուհանդերձ, հիմնականում հեզմական է: Այս երկու գործիչների հրապարակային ակտիվության տարբերությունն արտահայտվել է նաեւ նրանց կարծիքներին տրամադրված մակերեսում. Կարեն Դեմիրճյանը 6 անգամ ավելի քիչ թերթային մակերես է ստացել, քան Սերգեյ Բադալյանը (համապատասխանաբար՝ 275,16 քառ.սմ եւ 1.651,10 քառ.սմ:

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.500 - 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 169 համար:

Բոլոր ութ ամիսների ընթացքում «Ազգը» կայուն է եղել իր թեմատիկ նախընտրություններում: Այդ ժամանակաշրջանի արդյունքներով առաջատար են միջազգային կյանքը՝ 16,84%, մշակույթ/պատմությունը՝ 12,70%, սպորտը՝ 12,33%, տնտեսությունը՝ 10,51%:

Առավել հաճախ են հիշատակվել Ռոբերտ Քոչարյանը՝ 656 (այդ թվում՝ 23 դրական եւ 20 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 291 (այդ թվում՝ 10 դրական եւ 5 բացասական), Վարդան Օսկանյանը՝ 161 (այդ թվում՝ 7 դրական եւ 1 բացասական), նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 149 (այդ թվում՝ 1 դրական եւ 23 բացասական), Խոսրով Հարությունյանը՝ 117 (այդ թվում՝ 2 դրական եւ 4 բացասական): Հետաքրքրական է դիտարկել նախկին եւ ներկա նախագահների բացասական հիշատակումների շարժընթացը: Իր բացասական հիշատակումների կեսից ավելին (13) Քոչարյանը ստացել է սեպտեմբեր-հոկտեմբերին, մինչդեռ Տեր-Պետրոսյանի բացասական հիշատակումները դիտարկման երկամսյա փուլերում բավականին համաչափ են բաշխվել 7,4,6,6:

Կարծիքների արտացոլմանը տրամադրված մակերեսի առումով առաջատար խումբն այսպիսին է. Քոչարյան՝ 9.528,70 քառ.սմ, Օսկանյան՝ 6.697,54 քառ.սմ, Դարբինյան՝ 5.220,01 քառ.սմ, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդոյան՝ 4.754,35 քառ.սմ, «Սահմանադրական իրավունք» միության առաջնորդ Հրանտ Խաչատրյան՝ 3.192,30 քառ.սմ:

«Ազգի» առավելագույն ուշադրությանն են արժանացել ներկա իշխանությունների ներկայացուցիչները, նրանց հետեւում են նախկին իշխանությունների «խորհրդանիշներ»

րը» (ընդ որում նախկին նախագահը հիշատակումների առումով առաջատարների խմբում է հայտնվել, իսկ ՀՀՇ նախագահ Վանո Սիրադեղյանն իր կարծիքների եւ հայացքների արտահայտման համար բավականին շատ մակերես է ստացել՝ 2.569,50 քառ.սմ): Եւ վերջին տեղում են «կարոտաբաղձական» քաղաքական գործիչները, թեւ, նշանային հիշատակումների հաշվեկշռի առումով, վերջիններս «Ազգում» նախկին իշխանությունների համեմատ մի քիչ ավելի լավ տեսք ունեն:

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ ՀՀԴ Հայաստանի Գերագույն մարմին: Սովորական ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.000 օրինակ: Գինը մայիսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը՝ 100 դրամ, հոկտեմբերի 6-ից՝ 50 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 172 համար, որից 1 համար՝ 4 տպ. մանուկ ծավալով (A3 չափի 16 էջ):

Ութ ամիսների ընթացքում «Երկիրում» առավել լայն են լուսաբանվել միջազգային կյանքը՝ 18,78%, մշակույթ/պատմությունը՝ 12,78% (ինչպես տեսնում ենք, առաջին երկու տեղերում նույն թեմատիկ բաժիններն են, ինչ որ «Ազգում»), տնտեսությունը՝ 11,00%, ներքին քաղաքականությունը՝ 9,19%:

Հիշատակումների առումով «Երկիրում» քաղաքական գործիչների առաջատար հնգյակը յուրահատուկ չէ. Ռոբերտ Քոչարյան՝ 679 (այդ թվում՝ 24 դրական եւ 9 բացասական), Արմեն Դարբինյան՝ 295 (այդ թվում՝ 2 բացասական), Խոսրով Հարությունյան՝ 157 (այդ թվում՝ 2 դրական եւ 6 բացասական), Վարդան Օսկանյան՝ 141 (այդ թվում՝ 1 դրական եւ 3 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյան՝ 122 (այդ թվում՝ 2 դրական եւ 39 բացասական):

Իրենց կարծիքներն արտահայտելու համար առավել մակերես են ստացել Քոչարյանը՝ 8.020,34 քառ.սմ, ՀՀ նախագահի խորհրդական Վահան Հովհաննիսյանը՝ 7.874,03 քառ.սմ, Դարբինյանը՝ 5.764,00 քառ.սմ եւ Օսկանյանը՝ 4.349,40 քառ.սմ:

«Երկիրում» թե՛ ուշադրության, թե՛ համակրանքի առումով ներկա իշխանությունների ներկայացուցիչների (հատկապես նախագահ Քոչարյանի) առաջատարությունը կասկած չի հարուցում: Բայց պատկերը միանշանակ չէ նախկին իշխանությունների, ինչպես նաեւ խորհրդային ժամանակների հանդեպ կարոտաբաղձությունը խորհրդանշող քաղաքական գործիչների պարագայում: Հիշատակումների թվով Տեր-Պետրոսյանը (122) եւ Սիրադեղյանը (61) նկատելիորեն առաջ են անցնում Կարեն Դեմիրճյանից (31) եւ Սերգեյ Բադալյանից (24), բայց կարծիքների արտահայտմանը տրամադրված միագումար թերթային մակերեսի առումով վերջիններս մի փոքր առաջ են անցնում. 1.532,16 քառ.սմ՝ 1.367,80 քառ. սմ-ի դիմաց: «Կարոտաբաղձական» քաղաքական գործիչները «Երկիրում» «նախկիններից» ավելի լավ վիճակում են նաեւ այնպիսի ցուցանիշով, ինչպիսին նշանային հիշատակումների հաշվեկշիռն է՝ -2՝ -54-ի դիմաց:

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ թերթի խմբագրական խորհուրդ: Ծավալը՝ 4 տպագրական մանուկ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.600 - 6.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 170 համար:

Ութ ամիսների արդյունքով մրցակցությունից դուրս է միջազգային կյանքը (այս թեմատիկ բաժինն առաջին տեղում էր նաեւ դիտարկման նախորդ չորս երկամսյակների արդյունքներով)՝ 13,69%: Սրան հաջորդում են՝ ներքին քաղաքականությունը՝ 10,52% եւ տնտեսությունը՝ 9,41%:

Հիշատակումների թվով զգալի տարբերությամբ առաջատար է Ռոբերտ Քոչարյանը՝ 1.156 (այդ թվում՝ 19 դրական եւ 39 բացասական): Ավելի քան երկու անգամ պակաս հիշատակում ունի Արմեն Դարբինյանը՝ 535 (այդ թվում՝ 3 դրական եւ 8 բացասական): Երրորդ տեղում է Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 360 (այդ թվում՝ 3 դրական եւ 24 բացասական):

Հետաքրքիր է, որ «Առավոտում» նշանային հիշատակումների լավագույն հաշվեկշիռ ունեն երկու պաշտպանության նախարարները՝ Վազգեն Սարգսյանը (Հայաստանի) եւ Սամվել Բաբայանը (Լեռնային Ղարաբաղի):

Կարծիքներին տրված տեղի առումով նույնպես Քոչարյանն առջեւում է՝ 6.902,04 քառ.սմ, բայց այս ցուցանիշով նա լուրջ մրցակից ունի՝ Վանո Սիրադեղյանը (5.225,60 քառ.սմ): Երրորդ տեղում ԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանն է՝ 3.963,89 քառ.սմ:

Ներկա իշխանությունների ներկայացուցիչները հիշատակումների քանակով զգալիորեն առաջ են անցել նախորդներից, բայց կարծիքներին տրված մակերեսի առումով նրանց առավելությունն այնքան էլ համոզիչ չէ: «Կարոտաբաղձական» քաղաքական գործիչներին թերթը երես չի տվել ուշադրությամբ, մինչդեռ նրանց նշանային հիշատակումների հաշվեկշիռն առավել բարենպաստ է (-1):

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 80-100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 163 համար, որից 3 համար լույս է տեսել 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ):

«Հայոց աշխարհում» ըստ թեմաների թերթի մակերեսի բաշխումն ութ ամիսների ընթացքում որոշակի փոփոխություններ է կրել: Այսպես՝ ներքին քաղաքականությանը նվիրված նյութերի բաժինը մշտապես՝ երկամսյակից երկամսյակ աճել է. 8,95% (մայիս-հունիս), 12,03% (հուլիս-օգոստոս), 13,35% (սեպտեմբեր-հոկտեմբեր) եւ 13,93% (նոյեմբեր-դեկտեմբեր): Սակայն ութ ամիսների արդյունքով այս բաժինը, ինչպես եւ առաջին երկամսյակում, մնացել է երրորդ տեղում (11,96%)՝ զիջելով միջազգային կյանքին (15,95%, ընդ որում այստեղ գրեթե կեսը Ռուսաստանի մասին նյութերն են) եւ սպորտին (12,18%):

Դիտարկման ութ ամիսների ընթացքում «Հայոց աշխարհում» բոլորից հաճախ հիշատակվել է Ռոբերտ Քոչարյանը՝ 530 (այդ թվում՝ 17 դրական եւ 15 բացասական): Նրանից զգալիորեն ետ է մնում Արմեն Դարբինյանը՝ 196 (այդ թվում՝ 1 դրական եւ 8 բացասական), Խոսրով Հարությունյանը՝ 132 (այդ թվում՝ 1 դրական եւ 8 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 116 (այդ թվում՝ 2 դրական եւ 28 բացասական):

Կարծիքների արտահայտման համար տրամադրված մակերեսի առումով նույնպես առաջատարը Քոչարյանն է՝ 8.375,62 քառ.սմ: Երկրորդ տեղում Վարդան Օսկանյանն է (5.777,36 քառ.սմ), երրորդում՝ Էդվարդ Սանդոյանը (4.991,51 քառ.սմ), չորրորդում՝ Խ.Հարությունյանը (4.695,25 քառ.սմ), հինգերորդում՝ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Սկրտչյանը (4.402,00 քառ.սմ) եւ վեցերորդում՝ Հրանտ Խաչատրյանը (4.200,75 քառ.սմ):

Իրենց բոլոր տարբերություններով հանդերձ ՀՀ-ն ներկայացնող երկու թերթերը («Երկիրը» եւ «Հայոց աշխարհը») համանման վերաբերմունք են ունեցել քաղաքական հիմնական խմբավորումներին: Ինչպես եւ «Երկիրում», «Հայոց աշխարհի» ուշադրությունն ու համակրանքը նույնպես ներկա իշխանությունների (նախ եւ առաջ՝ նախագահի) կողմն է: Հիշատակումների թվով երկրորդ տեղում են «Նախկինները», երրորդում՝ «Կարոտաբաղձականները», իսկ կարծիքներին տրված մակերեսի առումով նրանք փոխել են տեղերը: «Հայոց աշխարհում» «Կարոտաբաղձական» գործիչների նշանային հիշատակումների հաշվեկշիռն ավելի բարենպաստ է, քան նախկին (ՀՀ-ական) իշխանությունների «խորհրդանիշներինը». -1-ը՝ -39-ի դիմաց:

«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ»

Տեղեկանք. «Գոլոս Արմենիի» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր խմբագրության աշխատանքային կոլեկտիվ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 102 համար:

«Գոլոս Արմենիի»-ի N1 թեմատիկ բաժինը՝ միջազգային կյանքը, անփոփոխ կերպով գրավում է թերթի ընդհանուր ծավալի՝ միջին հաշվով քառորդ մասը: Ութ ամիսների արդյունքով այս թեման գրավել է թերթի 24,72% մակերեսը: Դրան հաջորդում են ներքին քաղաքականությունը՝ 10,26% եւ տնտեսությունը՝ 10,11%:

Աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին լրատվությունը (որը հիմնականում այլ աղբյուրներից ստացված նյութերն են) սովորաբար թերթի 3-րդ էջում է լինում: Հաճախ միջազգային կյանքի հրատապ իրադարձությունները հայտնվում են առաջին էջում, անգամ շփագելում: Առավելագույն ուշադրություն այս բաժնում տրվում է Ռուսաստանին (6,14%):

Դիտարկման ութ ամիսների ընթացքում բոլորից հաճախ հիշատակվել է Ռոբերտ Քոչարյանը՝ 457 (այդ թվում՝ 3 դրական եւ 46 բացասական): Քոչարյանի բացահայտ քննադատությունը սկսվեց Երեւանի կոնյակի գործարանի վաճառքից հետո, եւ կտրուկ աճեց բացասական հիշատակումների թիվը: Նրան հաջորդող Լեւոն Տեր-Պետրոսյանը 260 հիշատակում ունի, մինչդեռ՝ ամենաշատ բացասական բնութագրումները (101): Հիշատակումների ընդհանուր քանակով երրորդ եւ չորրորդ տեղերում են Արմեն Դարբինյանը՝ 140 եւ Վանո Սիրադեղյանը՝ 110: Վերոնշյալ գործիչներն առաջին քառյակում են եղել դիտարկման բոլոր փուլերում:

Ընդհանուր առմամբ «ԳԱ»-ն եւ ներկա, եւ նախկին իշխանություններին քննադատաբար է վերաբերում՝ նրանց գրեթե հավասար ուշադրություն դարձնելով: Սակայն «նախկինների» նկատմամբ վերաբերմունքն ավելի վատ է:

«Կարոտաբաղձական» քաղաքական գործիչներին «ԳԱ»-ն ավելի լավ է վերաբերում, բայց ավելի քիչ ուշադրություն է նվիրում նրանց: Թեեւ Կարեն Դեմիրճյանի հասցեին ուղղակի դրական խոսք ընդամենը 2-ն է եղել (44 հիշատակման պարագայում), այս գործիչի հիշատակումների ընդհանուր երանգը հարգալից է: Իսկ կոմունիստների առաջնորդ Սերգեյ Բաղալյանի գործունեությանը թերթը որոշակի թերահավատությամբ է վերաբերվում (Բաղալյանն ունի ընդամենը 23 հիշատակում, այդ թվում՝ 1 դրական եւ 2 բացասական):

Ութ ամիսների ընթացքում կարծիքների արտացոլման համար առավել շատ մակերես են ստացել Ռոբերտ Քոչարյանը (1.727,37 քառ.սմ), ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդոյանը (1.475,67 քառ.սմ), Վարդան Օսկանյանը (1.354,97 քառ.սմ) եւ Արմեն Դարբինյանը (1.174,13 քառ.սմ):

«ՀԱՅՔ»

Տեղեկանք. «Հայք» - շաբաթաթերթ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ Հայոց համագալին շարժում (ՀՀՇ): Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A3 չափի 16 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 150 դրամ: Դեկտեմբերի 30-ի համարը արժեք 149 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 31 համար, որից 1-ը՝ 6 տպագրական մամուլ ծավալով (A3 չափի 24 էջ):

Այս կուսակցական պաշտոնաթերթը, ինչպես եւ պետք էր սպասել, ամենից շատ ուշադրություն է դարձրել ներքաղաքական խնդիրներին: Ութ ամիսների արդյունքով այս բաժինը զբաղեցրել է թերթի մակերեսի 18,61%-ը: Սրանից զգալիորեն ետ են մնում պատահարներ/զվարճալի նյութերը՝ 10,13% (բարձր ցուցանիշ է քաղաքական թերթի համար),

մշակույթ/պատմությունը՝ 10,10% եւ միջազգային կյանքը՝ 9,29%: Հիշատակումների քանակով առաջատար են Ռոբերտ Քոչարյանը՝ 350 (այդ թվում՝ 2 դրական, եւ 16 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 117 (այդ թվում՝ 5 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 106 (այդ թվում՝ 5 դրական), Պարույր Հայրիկյանը՝ 63 (այդ թվում՝ 5 բացասական): 60-ական անգամ հիշատակվել են Վանո Սիրադեղյանը (այդ թվում՝ 4 դրական) եւ Խոսրով Հարությունյանը (այդ թվում՝ 5 բացասական):

Կարծիքների արտացոլմանը տրամադրված մակերեսի առումով մրցակցությունից դուրս է ՀՀՇ նախագահ Վանո Սիրադեղյանը՝ 3.017,60 քառ.սմ: Ավելի քան երեք անգամ քիչ մակերես են ստացել ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մանուկյանը՝ 1.001,56 քառ.սմ, «Հանրապետություն» խորհրդարանական խմբակցության նախագահ Բաբկեն Արարքցյանը՝ 971,75 քառ.սմ եւ Ռոբերտ Քոչարյանը՝ 904,65 քառ.սմ:

Միայն մի ցուցանիշով՝ հիշատակումների քանակով է, որ նախագահն ու նրա մերձավոր շրջապատը առաջ են անցել նախկին իշխանության ներկայացուցիչներից: Երկրի նախկին (ՀՀՇ-ական) ղեկավարների կարծիքներն ու տեսակետները, բնականաբար, ամենամեծ տեղն են գրավում «Հայքում»: Եւ թերթի համակրանքը նույնպես (որ արտահայտվում է նշանային հիշատակումների դրական հաշվեկշռում) նույնպես «նախկինների» կողմն է: «Հայքի» վերաբերմունքը «կարոտաբաղձական» քաղաքական գործիչների հանդեպ ընդհանուր առմամբ չեզոք է, բայց նրանց շատ ավելի քիչ ուշադրություն է դարձվել, քան նախորդ երկու խմբերին:

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք» - լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Հայտարարված տպաքանակը 18.000-20.000: Գինը՝ 60-80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 54 համար, որից 30 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 12 էջ) եւ 24 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ):

Միայն դիտարկման առաջին երկամսյակից հետո է, որ առաջին տեղում ներքին քաղաքականությունն է եղել: Մյուս երեք փուլերից հետո առաջնությունը խլել են գովազդ/հայտարարությունները, ընդ որում, հուլիս-օգոստոսին այս բաժինը ռեկորդային մակերես է գրավել թերթում՝ 32,88%: Ութ ամիսների ընդհանուր արդյունքով գովազդ/հայտարարություններն առաջին տեղում են հայտնվել՝ 26,10%, որին հաջորդում են ներքին քաղաքականությունը՝ 17,49%, տնտեսությունը՝ 12,37% եւ մշակույթ/պատմությունը՝ 10,20%:

Քաղաքական գործիչներից, ինչպես նաեւ մյուս բոլոր լրատվամիջոցներում, ամենից հաճախ հիշատակվել է Ռոբերտ Քոչարյանը՝ 405 (այդ թվում՝ 5 դրական եւ 7 բացասական): Նրան հաջորդում են Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 236 (այդ թվում՝ 49 բացասական), Արմեն Դարբինյանը՝ 170 (այդ թվում՝ 2 բացասական), Վանո Սիրադեղյանը՝ 148 (այդ թվում՝ 1 դրական եւ 12 բացասական):

Մինչդեռ կարծիքների արտացոլմանը տրված մակերեսի առումով առաջատարը Սիրադեղյանն է՝ 3.951,29 քառ.սմ: Նա առաջ է անցել նույնիսկ «Իրավունքի» հիմնադիր կուսակցության առաջնորդ Հրանտ Խաչատրյանից, որ երկրորդ տեղում է հայտնվել՝ 3.855,38 քառ.սմ: Մյուս տեղերում են սոցիալական ապահովության նախարար Գագիկ Եգանյանը՝ 2.089,20 քառ.սմ եւ ԱԺ փոխխոսնակ Ալբերտ Բազեյանը՝ 2.050,94 քառ.սմ:

Ներկա իշխանությունները խորհրդանշող քաղաքական գործիչների նկատմամբ «Իրավունքը» մայիս-դեկտեմբերին զուսպ-սպասողական դիրքորոշում է ունեցել (նշանային հիշատակումների հաշվեկշիռը մոտ է զրոյականին) եւ նրանց նկատմամբ ուշադրությունը չափավոր է եղել: Նախկին իշխանությունների նկատմամբ թերթի վերաբերմունքը խիստ բացասական է, այդուհանդերձ սակայն «Իրավունքն» ակտիվորեն հետաքրքրվել է նրանց, հատկապես Վանո Սիրադեղյանի տեսակետներով: «Կարոտաբաղձա-

կան» քաղաքական գործիչները (Կարեն Դեմիրճյան, Սերգեյ Բադալյան) թերթին ավելի քիչ են հետաքրքրել եւ նրանց նկատմամբ վերաբերմունքն էլ չեզոք է:

«ԱՅԺԱ»

Տեղեկանք. «Այժմ» - շաբաթաթերթ: Հիմնադրվել է 1996թ.: Հիմնադիր՝ Ազգային-ժողովրդավարական միություն: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը 3.000 - 4000 օրինակ: Գինը՝ 60 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 28 համար:

Դիտարկման բոլոր ութ ամիսների ընթացքում «Այժմը» պահպանել է ուսումնասիրվող հրատարակությունների մեջ ամենաքաղաքականացված թերթի համբավը: Ներքին քաղաքականությունն այստեղ գրավել է 32,79%: Շատ ավելի քիչ է բաժին ընկել դրան հաջորդող տնտեսությունն՝ 11,45%, իրավունք/իրավապահպանություն/ պաշտպանություն/անվտանգություն՝ 11,21% բաժիններին: Բացի այդ, «Այժմն» աչքի է ընկել ամենից քիչ թեմատիկ բազմազանությամբ: Դիտարկման առանձին փուլերում թեմատիկ ամբողջ բաժիններ են բացակայել:

Խիստ սահմանափակ է եղել եւ այն քաղաքական գործիչների շրջանակը, որոնց գործունեությունը լուսաբանել է «Այժմը»: Օրինակ. ութ ամիսների ընթացքում միայն մեկ անգամ է հիշատակվել կոմկուսի առաջնորդ Սերգեյ Բադալյանը: Վարկանիշային աղյուսակի՝ «կարծիքներին տրամադրված մակերեսը» սյունակում ոչինչ չկա ինչպես նրա, այնպես էլ նշանավոր քաղաքական գործիչներ Սերժ Սարգսյանի, Կարեն Դեմիրճյանի, Վանո Սիրադեղյանի անունների դիմաց:

Առավել հաճախ թերթում հիշատակվել են ներկա եւ նախկին նախագահները. Ռոբերտ Քոչարյանը 147 անգամ (այդ թվում՝ 1 դրական, 12 բացասական), Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 76 անգամ (այդ թվում՝ 21 բացասական):

Կարծիքներին տրամադրված մակերեսի առումով անվիճելի առաջատարները ԱԺԱ առաջնորդներն են Վազգեն Մանուկյանը՝ 7.223,16 քառ.սմ եւ Դավիթ Վարդանյանը՝ 2.412,00 քառ.սմ:

Դատելով նշանային հիշատակումների հաշվեկշռից՝ թերթը ծայրահեղ բացասական վերաբերմունք ունի երկրի ներկա եւ նախկին ղեկավարների նկատմամբ (մի քիչ ավելի վատ՝ «նախկինների»): «Կարոտաբաղձական» քաղաքական գործիչների նկատմամբ «Այժմի» վերաբերմունքը կարելի է անտարբեր համարել. նրանց նվազագույն ուշադրություն է դարձվել:

«ՀԱՅԼՈՒՐ» / «ԼՐԱԲԵՐ» / «ԼՈՒՐԵՐ» (ՀԱՀ)

Տեղեկանք. «Լրաբերը» եւ «Հայլուրը» - Հայաստանի ազգային հեռուստատեսության ամենօրյա լրատվական ծրագրերն են, «Լուրերը»՝ «Նորք» հեռուստաընկերության ամենօրյա լրատվական ծրագիրը, որը ժամանակավորապես լրացնում էր ՀԱՀ-ի ամենօրյա լրատվական ծրագրի եթերային տեղը՝ ՀԱՀ-ի «Ֆիրմային» առաջին ծրագրի թողարկումների ընդհատումից հետո մինչեւ երկրորդի սկսվելը: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) հեռարձակվում է օրական 3 անգամ, շաբաթ օրերին՝ 2 անգամ: Դիտարկվել են 20.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 210 թողարկում: Դիտարկված թողարկումների խոսքային մասի ընդհանուր ծավալը՝ 5.877 րոպե 25 վրկ.:

Նյութերի ընդհանուր ծավալով առաջին եռյակում են մշակույթ/պատմությունը (27,27%), գովազդ/հայտարարությունները (13,82%), տնտեսությունը (11,37%): Թեմաների առաջատար եռյակի այսպիսի համադրությունը դիտարկման տարբեր փուլերում «Լրաբերում», «Լուրերում», «Հայլուրում» հաճախ է հանդիպում: Դրանցից զգալիորեն ետ է մնում ներքին քաղաքականությունը՝ 6,55%: Ընդհանուր առմամբ ՀԱՀ ամենօրյա լրատվական ծրագրերն աչքի են ընկնում թեմաների լայն ընդգրկմամբ:

Քաղաքական գործիչների հիշատակումներով նույնպես ՀԱՀ-ն աչքի էր ընկնում ընդգրկման բազմազանությամբ: Ռոբերտ Քոչարյանը հիշատակվել է 397 անգամ, Արմեն Դարբինյանը՝ 379, Վարդան Օսկանյանը՝ 115: Մյուս տեսաձայնային ծրագրերի համեմատությամբ (բացի ՀԱՌ-ի «Լուրերից») բարձր ցուցանիշներ ունեն ուժային նախարարներ Վազգեն Սարգսյանը՝ 26 (բոլորը չեզոք) եւ Սերժ Սարգսյանը՝ 15 (այդ թվում՝ 2 դրական եւ 1 բացասական):

Դրական հիշատակումների քանակով ամենաբարձր ցուցանիշը Ռոբերտ Քոչարյանին է (8): Մյուսներից հաճախ է բացասական հիշատակվել Խոսրով Հարությունյանը (4): Սակայն ինչպես այս, այնպես էլ մյուս դեպքերում բացասական հիշատակումները հնչում էին միայն հարցազրուցակիցների խոսքերում, մինչդեռ դրական հիշատակումները նաեւ ՀԱՀ-ի լրագրողների խոսքերում են լինում:

Խոսքի ծավալի առումով Քոչարյանի (87րոպե 49 վրկ.) եւ Դարբինյանի (64 րոպե 40 վրկ.) ցուցանիշները դարձյալ ամենաբարձրն են:

Ներկա իշխանությունների ներկայացուցիչները վայելում են ՀԱՀ-ի ամենօրյա լրատվական թողարկումների լիակատար ուշադրությունն ու համակրանքը: Նախկին իշխանություններն ու «կարոտաբաղձական» քաղաքական գործիչներն այստեղ ստվերում են մնացել եւ գրեթե հավասար վիճակում են:

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 9 անգամ: Դիտարկվել են 21.45-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 205 թողարկում: Դիտարկված թողարկումների խոսքային մասի ընդհանուր ծավալը՝ 2.474 րոպե 14 վրկ.:

Նյութերի ծավալով առաջատար եռյակում են հետեւյալ թեմաները՝ իրավունք/իրավապահպանություն/պաշտպանություն/անվտանգություն (15,65%), տնտեսություն (12,42%) եւ մշակույթ/պատմություն (11,86%): Իրավական թեմաների նկատմամբ հետեւողական հետաքրքրությունը «Այբ-Ֆե»-ի գլխավոր առանձնահատկություններից մեկն է: Կարելու է նշել նաեւ, որ միջազգային կյանքի խնդիրներին նվիրվել է հատուկ հավելված՝ «Այբ-Ֆե +», որի պատճառով այս թեման ի սկզբանե չէր կարող լինել «Այբ-Ֆե»-ի առաջատար թեմաների շարքում եւ ընդամենը 2,00% եթերային ժամանակ է ստացել:

Հիշատակումների քանակով առաջատարներն ավանդական են. Ռոբերտ Քոչարյան՝ 237, Արմեն Դարբինյան՝ 107, Խոսրով Հարությունյան՝ 103: Այս սովորական եռյակին հաջորդող Պարույր Հայրիկյանը խիստ ետ է մնում՝ 49:

Քոչարյանն առաջ է անցնում բոլորից նաեւ դրական (12) ու բացասական (10) հիշատակումների քանակով: «Այբ-Ֆե»-ում դրական հիշատակումների ընդհանուր քանակն ամենաշատն է դիտարկված բոլոր ծրագրերի մեջ: Իսկ բացասական հիշատակումների քանակով գիջում է միայն «Ա1+»-ի մյուս ծրագրի՝ «Կիրակիի» համապատասխան ցուցանիշին: Այլ խոսքով՝ այս հեռուստաալիքը դիտարկվող մյուս ծրագրերից ավելի շատ է հակված գնահատականների:

Քոչարյանի կարծիքներն ու տեսակետներն այստեղ նույնպես ամենաշատ ծավալն են ստացել՝ 18 րոպե 6 վրկ., բայց այլ հեռուստաալիքների ամենօրյա լրատվական ծրագրերի համեմատ նախագահի այդ ցուցանիշը բավականին ցածր է:

Ներկա իշխանություններն այստեղ նույնպես առավել ուշադրության են արժանացել: Նախկին ղեկավարներն «Այբ-Ֆե»-ում ավելի շատ են աչքի ընկել, քան «կարոտաբաղձական» քաղաքական գործիչները: Համակրանքների տեսանկյունից (նշանային հիշատակումների հաշվեկշիռը) քաղաքական երեք խմբերն էլ գրեթե հավասար վիճակում են:

«ՕՐԱԿԱՐԳ»/«ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԼՐԱԲԵՐ»/«ՏԵՍԱԴԱՇՏ»

Տեղեկանք. «Կիրակնօրյա Լրաբերը» եւ «Օրակարգը» - ՀԱՀ կիրակնօրյա լրատվական-վերլուծական ծրագրերն են, «Տեսադաշտը»՝ «Միր» միջպետական հեռուստաընկերության ամենշաբաթյա ծրագիրը, որը ժամանակավորապես լրացնում էր ՀԱՀ-ի ամենշաբաթյա լրատվական-վերլուծական ծրագրի եթերային տեղը՝ ՀԱՀ-ի «Ֆիրմային» առաջին ծրագրի թողարկումների ընդհատումից հետո մինչեւ երկրորդի սկսվելը: Մինչեւ նոյեմբերի 8-ը ներառյալ ծրագրերը թողարկվում էին կիրակի օրերին, 20.00-ին: Մնացած հաղորդումներ եթեր են թողարկվել 21.00: Ամենշաբաթյա լրատվական-վերլուծական ծրագրերի թողարկումների ընդհանուր թիվը՝ 34: Դիտարկված թողարկումների խոսքային մասի ընդհանուր ծավալը՝ 1.011 րոպե 15 վրկ.:

Նյութերի ընդհանուր ծավալի առումով առաջին վեցյակում են միջազգային կյանքը՝ 17,02%, արտաքին քաղաքականությունը՝ 11,02% տնտեսությունը՝ 10,86%, ներքին քաղաքականությունը՝ 9,65%, ՀՀ ԱԺ/օրենսդրությունը՝ 8,68% եւ Արցախը՝ 6,82%:

ՀԱՀ-ի ինչպես ամենօրյա, այպես էլ ամենշաբաթյա լրատվական ծրագրերին հատկանշական է թեմաների համեմատաբար լայն ընդգրկումը:

Միջազգային կյանքի մասին նյութերի ութամսյա տպավորիչ ծավալը կուտակվել է նախ եւ առաջ «Տեսադաշտի» եւ «Օրակարգի» թողարկումների հաշվին (ընդ որում՝ վերջինս հատուկ ուշադրություն է դարձրել Արեւմտյան Եւրոպային եւ ԱՄՆ-ին, մինչդեռ նրանից առաջ գերակշռում էին Ռուստանն ու ԱՊՀ-ն): Նրանց նախորդը՝ «Կիրակնօրյա Լրաբերն» ապահովել է առողջապահություն/բնապահպանություն թեմայի գրեթե ամբողջ ծավալը՝ 2,82%-ը եւ կրթություն/գիտություն թեմայի 2,34%-ի մեծ մասը:

Արցախի մասին նյութերը (6,82%) վերլուծություն են կամ հաղորդագրություններ՝ դարաբաղյան հարցի կարգավորման մասին: Բացառություն էր ԼՂՀ խորհրդարանի խոսնակ Օլեգ Եսայանի հետ հարցազրույցը Արցախի օրենսդիր իշխանության գործունեության մասին:

ՀԱՀ-ի ամենօրյա լրատվական ծրագրի համեմատությամբ, ուր զգալի մաս են կազմում պարտադիր պաշտոնական լուրերը եւ ավելի շատ ուշադրություն է դարձվում իշխանության բարձրագույն շերտի ներկայացուցիչներին, ամենշաբաթյա վերլուծական ծրագրին յուրահատուկ է ավելի մեծ ճկունությունը: Սակայն բարձրագույն ղեկավարների հիշատակումների քանակի եւ կարծիքներին հատկացված ժամանակի ցուցանիշների հարաբերությունը նրանց մոտ բավականին նման է:

Ռոբերտ Քոչարյանը հիշատակվել է 81 անգամ (այդ թվում՝ 6 դրական, 1 բացասական) եւ ստացել է 23 րոպե 13 վրկ, Արմեն Դարբինյանը՝ 31 անգամ (այդ թվում 1 դրական) եւ 14 րոպե 52 վրկ., Վարդան Օսկանյանը՝ 29 անգամ եւ 12 րոպե 58 վրկ., Խոսրով Հարությունյանը՝ 14 անգամ (այդ թվում՝ 2 բացասական) եւ 18 րոպե 33 վրկ.:

ՀԱՀ-ի ամենշաբաթյա լրատվական-վերլուծական ծրագրերի ուշադրությունն ու համակրանքը մեծ մասամբ կրկնում են ամենօրյա ծրագրերի՝ քաղաքական խմբավորումների նկատմամբ վերաբերմունքը:

«Կիրակի»

Տեղեկանք. «Կիրակի» - «Ա1+» հեռուստաալիքի ամենշաբաթյա լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 21.45-ին: Դիտարկված ժամանակամիջոցում թողարկվել է 34 հաղորդում: Դիտարկված թողարկումների խոսքային մասի ընդհանուր ծավալը՝ 451 րոպե 37 վրկ.:

Նյութերի ծավալով թեմաների առաջին եռյակում են ներքին քաղաքականությունը (33,11%), ՀՀ ԱԺ/օրենսդրությունը (27,61%) եւ արտաքին քաղաքականությունը (11,26%): Այս թեմաներին ընդհանրապես հատուկ ուշադրություն է դարձվել: Ավելին, նույնիսկ սոցիալական խնդիրներն ու տնտեսությունը «Կիրակիում» ներկայացվել են հիմնականում երկու՝ ներքին եւ արտաքին քաղաքականությունների տեսանկյունից: Այսպես. բնակչության սոցիալական պաշտպանվածության, զբաղվածության խնդիրներ

րը, հասարակության մեջ սոցիալական արդարության մասին խոսակցությունները դիտարկվել են ներկա իշխանությունների նախընտրական խոստումների կատարման առումով: Տնտեսական, մասնավորապես՝ սեփականաշնորհման թեմայով նյութերում իրադրությունը գնահատվում էր ներկա իշխանություններից առաջ եւ հետոյի կտրվածքով: Հաղորդումը ոչ մի անգամ չի անդրադարձել այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ կրթություն/գիտությունը, սփյուռքը, սպորտը, պատահարներ/զվարճալի նյութերը: «Կիրակին» չի հաղորդել նաեւ գովազդ/հայտարարություններ:

Հիշատակումների քանակով առջեւում նույն դեմքերն են. Ռոբերտ Քոչարյանը՝ 109, Խոսրով Հարությունյանը՝ 35, Արմեն Դարբինյանը՝ 32: Ընդ որում, հենց նրանք են առջեւում նաեւ բացասական հիշատակումների առումով. Քոչարյան՝ 15 բացասական, Հարությունյան՝ 7, Դարբինյան՝ 6: Նրանցից միայն նախագահն ունի դրական հիշատակում (2): Ընդ որում, նշանային հիշատակումներն ամենից հաճախ հնչում էին հաղորդումը վարողի եւ սյուժեների հեղինակների խոսքերում:

Կարծիքների արտացոլմանը տրամադրվող ժամանակի առումով առաջատարներն են Քոչարյանը (7 թույն 38 վրկ.), Պարույր Հայրիկյանը (4 թույն 25 վրկ.), Դարբինյանը (3 թույն 11 վրկ.): Ընդ որում, ԻՄ նախագահն առաջին եռյակ է մտել հիմնականում դիտարկման ընթացքի վերջին ամսում (դեկտեմբեր, 1998) նրա խոսքերի, կարծիքների մեջբերման շնորհիվ:

Ինչպես տեսնում ենք, «Կիրակիում» ներկա իշխանությունների նկատմամբ վերաբերմունքը հիմնականում անբարենպաստ է: Դատելով նշանային հիշատակումների հաշվեկշիռը՝ նախկին իշխանությունների, հատկապես նրանց առանձին ներկայացուցիչների նկատմամբ հաղորդումն ավելի շատ համակրանք էր տաժում. այսպես՝ Վանո Սիրադեղյանը մեկն էր նրանցից, ով առավել շատ դրական հիշատակումների է արժանացել (3): Բարեհաճ վերաբերմունք է ցուցաբերվել նաեւ, ելնելով նույն ցուցանիշներից, «կարոտաբաղձական» քաղաքական գործիչների նկատմամբ, թեւ վերջիններս ավելի հազվադեպ են հիշատակվել:

«ՍՏՈՐԱԿԵՏ»

Տեղեկանք. «Ստորակետ» - Հայաստանի «Ինտերնյուսի» ամենշաբաթյա լրատվական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 13 անկախ հեռուստակայաններով: Դիտարկված ժամանակամիջոցում թողարկվել է 30 հաղորդում: Դիտարկված թողարկումների խոսքային մասի ընդհանուր ծավալը՝ 609թույն 45 վրկ.:

Նյութերի ընդհանուր ծավալի առումով առաջատար են սոցիալական խնդիրները (18,07%), հասարակությունը (16,56%), առողջապահություն/բնապահպանությունը (12,70%), մշակույթ/պատմությունը (12,14%), տնտեսությունը (10,83%):

«Ստորակետի» համար հատկանշական են կրոնական թեմայով հաճախակի սյուժեները (6,80%)՝ ամենաբարձր ցուցանիշը դիտարկված բոլոր լրատվամիջոցներում:

Եթերային ժամանակի այսպիսի բաշխման պարագայում, բնականաբար, քաղաքական գործիչները հաճախ չեն հիշատակվում: Բայց այստեղ էլ ամենաբարձրը Ռոբերտ Քոչարյանի ցուցանիշն է (16): Իսկ կարծիքներին տրված ժամանակի առումով առջեւում Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին առաջինն է՝ 1 թույն 25 վրկ.:

Հաղորդման առանձնահատկության բերումով քաղաքական գործիչների նկատմամբ ուշադրության եւ համակրանքի մասին խոսելն անհիմաստ է:

«ԼՈՒՐԵՐ» (ՀԱՌ)

Տեղեկանք. «Լուրեր» - Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվել է օրական 10 անգամ, շաբաթ օրերին՝ 8 անգամ, կիրակի օրերին՝ 6 անգամ: Մինչեւ հոկտեմբերի 31-ը ներառյալ դիտարկվել են 21.00-ի, իսկ նոյեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը՝ 23.00-ի թողարկումները: Դիտարկ-

ված ժամանակամիջոցում եղել է 233 թողարկում: Դիտարկված թողարկումների խոսքային մասի ընդհանուր ծավալը՝ 2.786 րոպե 13 վրկ.:

Ութ ամիսների ընթացքում նյութերի ծավալով առաջատարը տնտեսությունն է (22,91%), որին հաջորդում են արտաքին քաղաքականությունը՝ 7,86%, մշակույթ/պատմությունը՝ 7,56%, ՀՀ ԱԺ/օրենսդրությունը՝ 7,31% եւ սոցիալական խնդիրները՝ 7,25%:

«Լուրերի» առանձնահատկությունն այն է, որ Արցախի մասին նյութերում ծրագիրն անդրադարձել է ոչ միայն հակամարտության կարգավորման թեմային, այլ նաեւ չճանաչված հանրապետության կյանքի տարբեր կողմերին: Ընդ որում լրատվության աղբյուրները ոչ միշտ են նշվել:

Հիշատակումների քանակով առաջատար են Ռոբերտ Քոչարյանը՝ 276, Արմեն Դարբինյանը՝ 205 եւ Խոսրով Հարությունյանը՝ 104: Մյուս քաղաքական գործիչները խիստ ետ են մնում:

Կործիքների արտացոլմանը տրված ժամանակի առումով պատկերն այսպիսին է. առավել ժամանակ են ստացել Քոչարյանը՝ 53 րոպե 38վրկ., Խ.Հարությունյանը՝ 38 րոպե 2 վրկ. եւ Դարբինյանը՝ 22 րոպե 47 վրկ.:

Ներկա իշխանությունների ներկայացուցիչներն առավել շատ են արժանացել «Լուրերի» ուշադրությանը: «Կարոտաբաղձական» քաղաքական գործիչները զգալիորեն ետ են մնում, բայց այդուհանդերձ մի քիչ առաջ են նախկին իշխանությունները մարմնավորող քաղաքական գործիչներից:

1999

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՍ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1 հունվարի - 28 փետրվարի, 1999

Անցյալ տարվա համեմատությամբ դիտարկող խմբի կողմից ուսումնասիրվող լրատվամիջոցների ցուցակում փոփոխություններ են տեղի ունեցել: Հանվել են «Այժմ» շաբաթաթերթը, որի հրատարակումը ընդհատվել է եւ «Ստորակետ» ծրագիրը, բայց ավելացվել են «Օրագիր» եւ «Նովոյե վրեմյա» թերթերը, ինչպես նաեւ «ԱՐ» հեռուստաընկերության հիմնական լրատվական ծրագրերը: Հաշվի առնելով մոտեցող խորհրդարանական ընտրությունները՝ դիտարկող խումբը կենտրոնացել է լրատվամիջոցների՝ քաղաքական գործիչների նկատմամբ համակրանքի ու բարեհաճության դիտարկման վրա՝ երկրորդ պլան մղելով թեմատիկ վերլուծությունը:

Ավանդույթի համաձայն Հայաստանի ամենից շատ հիշատակվող քաղաքական գործիչը նախագահ Ռոբերտ Քոչարյանն է: Նրա անունը թերթերի էջերում եւ եթերում գրեթե երկու անգամ ավելի հաճախ է հայտնվել, քան երկրորդ տեղում գտնվող ՀՀԸ առաջնորդ Վանո Սիրադեղյանինը (մինչդեռ վերջինս նույնքան հաստատուն կերպով գերազանցում է բոլորին բացասական հիշատակումների քանակով): Միեւնույն ժամանակ քաղաքական գործիչների կարծիքների արացոլմանը տրամադրվող թերթային մակերեսի եւ եթերային ժամանակի առումով Քոչարյանի ցուցանիշներն այս անգամ այնքան էլ ազդեցիկ չեն: Ուսումնասիրվող բոլոր լրատվամիջոցների մեջ միայն «ԱՐ» հեռուստաընկերության ամենօրյա լրատվական ծրագրում՝ «Սուրհանդակում» է նախագահին այդ ցուցանիշով առաջին տեղը գրավում:

Քաղաքական գործիչների նկատմամբ ուշադրությունն այս անգամ հիմնականում կոնկրետ իրադարձություններով էր պայմանավորված. նախ եւ առաջ Վանո Սիրադեղյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու խնդրանքով ՀՀ գլխավոր դատախազի դիմումով խորհրդարանին: Այս դիմումի շուրջ իրադարձությունների արդյունքում

Վանո Սիրադեղյանը հիշատակումների քանակով ընդհանուր երկրորդ տեղում հայտնվեց (առաջ անցնելով մինչեւ այժմ «մշտական երկրորդին»՝ վարչապետ Արմեն Դարբինյանին), իսկ մինչ այդ ստվերում գտնվող գլխավոր դատախազ Աղվան Յուսեփյանն այդ ցուցանիշով չորրորդ տեղ բարձրացավ: Դատախազի խոսքը առատորեն մեջբերում էին առաջատար լրատվամիջոցները, եւ նա հունվար-փետրվարին առավելագույն թերթային մակերեսը ստացավ «Ազգ» թերթում, «Հայլուր» հեռուստածրագրում եւ «Լուրեր» ռադիո-ծրագրում: Սիրադեղյանի անվան շուրջ քննարկումների առիթով մեծացավ հետաքրքրությունը նաեւ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ (բարձրագույն պետական պաշտոնում նրա գտնվելու ընթացքում են տեղի ունեցել մայրաքաղաքի նախկին քաղաքապետին եւ նախկին ՆԳ նախարարին մեղսագրվող հանցանքները), որն էլ արդյունքում հիշատակումների առումով հինգերորդ տեղում է հայտնվել:

«Սիրադեղյանի գործով» լրատվամիջոցները հստակ բաժանվել էին երեք խմբի. Սիրադեղյանին անվերապահորեն կամ գոնե հիմնականում պաշտպանողներ, նրան մեղադրողներ եւ անկողմնակալ դիրք գրավել ջանացողներ: Բնականաբար ՀՀՇ ղեկավարին պաշտպանում էր «Հայք» շաբաթաթերթը. 8 նշանային հիշատակումներից 7-ը դրական են եղել եւ միայն 1-ը՝ բացասական: «Առավոտում» ու «Օրագրում» թեւ Սիրադեղյանի նշանային հիշատակումների հաշվեկշիռը բացասական է, սակայն համապատասխանաբար 9 եւ 4 անգամ նրան դրական են հիշատակել: Հաշվի առնելով ընդհանուր խիստ անբարենպաստ համատեքստը, որում լրատվամիջոցները գրում էին այս քաղաքական գործչի մասին, բերված ցուցանիշներն ավելի շուտ խոսում են ՀՀՇ առաջնորդի հանդեպ նշված թերթերի համակրանքի մասին:

Անվերապահորեն կամ հիմնականում Սիրադեղյանին դատապարտող լրատվամիջոցներից են «Գոլոս Արմենիի», «Երկիր», «Հայոց աշխարհ», «Ազգ», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Նովոյե վրեմյա», «Իրավունք» թերթերը: Վերջինս, այդուհանդերձ, պահպանել է Սիրադեղյանի հանդեպ իր ավանդական հետաքրքրությունը. հիշատակումների քանակով այս թերթում նա առաջ է անցել բոլոր քաղաքական գործիչներից:

Մյուս լրատվամիջոցները, դատելով նշանային հիշատակումների հաշվեկշիռից, թեմայի նկատմամբ զուսպ մոտեցում են դրսեւորել:

Հայ քաղաքական գործիչների մամուլի վարկանիշի վրա ազդող մյուս իրադարձությունները Հայաստանի հանրապետական կուսակցության համագումարն էր եւ ՆԳ եւ ԱԱ փոխնախարար Արծրուն Մարգարյանի սպանությունը: ՀՀԿ համագումարում ունեցած ելույթը ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին հիշատակումների քանակով բարձրացրեց ընդհանուր վեցերորդ տեղը: Իսկ սպանության հետաքննության շուրջ իրապարակումները ՆԳ եւ ԱԱ նախարար Սերժ Սարգսյանին հիշատակումների քանակով բարձրացրին ընդհանուր ութերորդ տեղը: Երկու ուժային նախարարներն էլ աղյուսակում արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանից ավելի բարձր տեղում հայտնվեցին, իսկ Վ. Սարգսյանն առաջ անցավ նաեւ Ազգային ժողովի խոսնակ Խոսրով Հարությունյանից: Դիտարկման նախորդ փուլերում Խ. Հարությունյանը եւ Օսկանյանը անփոփոխ կերպով մամուլի ուշադրության կենտրոնում էին եւ աղյուսակում ուժայիններից ավելի բարձր տեղում էին լինում:

Հինգ թերթերում հիմնադիր-կազմակերպությունների ղեկավարներն իրենց կարծիքների/տեսակետների արտացոլման համար առավելագույն մակերես են ստեցել. ՀՀ Աժ խոսնակ Խոսրով Հարությունյանը՝ «Ռեսպուբլիկա Արմենիայում», Փոխխոսնակ Ալբերտ Բազեյանը՝ «Հայաստանի Հանրապետութիւնում», ՀՀԿ առաջնորդ Վահան Հովհաննիսյանը՝ «Երկիրում», «Սահմանադրական իրավունք» միության առաջնորդ Հրանտ Խաչատրյանը՝ «Իրավունքում», «21-րդ դար» ընկերակցության նախագահ Արկադի Վարդանյանը՝ «Նովոյե վրեմյա»-ում: Բայց ե թե առաջին չորսը ՀՀ քաղաքական կյանքի ակտիվ

մասնակիցներ են, ապա Վարդանյանը «ՆՎ»-ում գրեթե երեք անգամ ավելի շատ մակերես է ստացել, քան երկրորդ տեղում գտնվող առողջապահության նախարար Հայկ Նիկողոսյանը՝ լրագրողական ակտիվության՝ իր գրած ծավալուն հոդվածների շնորհիվ:

Նույն կերպ մամուլում վերլուծական հոդվածներով հանդես գալու հաշվին աչքի է ընկել նաև 1988-ին դարաբաղյան շարժման նախաձեռնողներից մեկը՝ Իգոր Սուրադյանը: Վերջին տարիներին որպես քաղաքական գործիչ սովորում լինելով՝ այնուամենայնիվ նա իր խոսքի ծավալով «Գոլոս Արմենիի»-ում գրավել է առաջին եւ երկրորդ տեղը՝ «Առավոտում»:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետություն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.500 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Հունվարի 1-ի համարն անվճար է եղել: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 38 համար:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 100-150 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 37 համար, որից 1 համար 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ) եւ 2 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 8 էջ եւ A3 չափի 16 էջ):

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 35 համար:

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ ՀՀ-ի Հայաստանի Գերագույն մարմին: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.000 օրինակ: Գինը՝ 50 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 35 համար:

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ թերթի խմբագրական խորհուրդ: Ծավալը՝ 4 տպագրական մամուլ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 35 համար:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 100 դրամ:

Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 35 համար, որից 15 համար՝ 2տպ մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ), 20 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ):

«ՕՐԱԳԻՐ»

Տեղեկանք. «Օրագիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1998թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 35 համար:

«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ»

Տեղեկանք. «Գոլոս Արմենիի» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ խմբագրության աշխատանքային կոլեկտիվ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 20 համար:

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ»

Տեղեկանք. «Նովոյե վրեմյա» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1992թ.: Հիմնադիր՝ «21-րդ դար» ընկերակցություն: Հայտարարված տպաքանակը՝ 5000 օրինակ: Գինը՝ 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 20 համար, որից 9 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ), 8 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ, «Ելիտարնայա գազետա» ներդիրը չի հաշվարկվում) եւ 3 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 8 էջ):

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք» - լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Հայտարարված տպաքանակը՝ 16.000-18.000: Գինը՝ 60-90 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 14 համար, որից 7 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 12 էջ) եւ 7 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ):

«ՀԱՅՔ»

Տեղեկանք. «Հայք» - շաբաթաթերթ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ Հայոց համազգային շարժում (ՀՀՇ): Ծավալը՝ 4 տպ. մամուլ (A3 չափի 16 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 140 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 7 համար:

«ՀԱՅԼՈՒՐ»

Տեղեկանք. «Հայլուր» - Հայաստանի ազգային հեռուստատեսության ամենօրյա լրատվական ծրագիր: Հունվարի 2-ից 12-ը շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) հեռարձակվել է օրական 3 անգամ, շաբաթ օրերին՝ 2 անգամ: Հունվարի 13-ից սկսած շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) հեռարձակվել է օրական 5 անգամ, շաբաթ օրերին՝ 4 անգամ: Դիտարկվել են 20.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 49 թողարկում:

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 9 անգամ: Դիտարկվել են 21.45-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 47 թողարկում:

«ՍՈՒՐՅԱՆԴԱԿ»

Տեղեկանք. «Սուրհանդակ» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 4 անգամ: Դիտարկվել են 23.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 48 թողարկում:

«ՕՐԱԿԱՐԳ»

Տեղեկանք. «Օրակարգ» - ՀԱՀ լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 21.00-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 9 թողարկում:

«ԿԻՐԱԿԻ»

Տեղեկանք. «Կիրակի» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին 21.45-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 8 թողարկում:

«7 ՔԱՐ»

Տեղեկանք. «7 քար» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 22.30-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 8 թողարկում:

«ԼՈՒՐԵՐ»

Տեղեկանք. «Լուրեր» - Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվել է օրական 10 անգամ, շաբաթ օրերին՝ 8 անգամ, կիրակի օրերին՝ 6 անգամ: Դիտարկվել են 23.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 42 թողարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1 մարտի - 30 ապրիլի, 1999

Քաղաքական գործիչների նկատմամբ 1999թ. մարտ-ապրիլ ամիսներին Հայաստանի առաջատար լրատվամիջոցների ուշադրության մասին վկայող թվերը հետաքրքիր են նախ եւ առաջ առաջիկա խորհրդարանական ընտրությունների լույսի ներքո: Ստորեւ ներկայացվող աղյուսակները ցույց են տալիս, թե ճանաչման եւ համակրանքի ինչ բեռով են հայ քաղաքական գործիչները մոտենում ընտրարշավի վերջին փուլին (ինչի մասին որոշակի առումով վկայում է զանգվածային լրատվամիջոցներում հիշատակումների հաճախականությունը):

Ընդ որում, հիշատակումների առումով ավանդաբար մրցակցությունից դուրս է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որը, բնականաբար, ընտրություններին անմիջականորեն չի մասնակցում: Ուշադրության նման կայունությունը, երբ Քոչարյանն առաջատար է եղել դիտարկումների մեկ տարվա (1998թ. մայիսից՝ 1999թ. ապրիլ) բոլոր երկամսյակներում, բացատրվում է ոչ միայն նախագահի բարձրագույն քաղաքական պաշտոնով, այլ նաեւ նրա արտակարգ քաղաքական ակտիվությամբ: Այսպես՝ մարտ-ապրիլին Քոչարյան

նը հասցրել է լինել Վատիկանում ու Իտալիայում, մեկնել Հայաստանից եղեռնի զոհերի հիշատակի օրը, մասնակցել ՆԱՏՕ-ի 50 ամյակի առիթով տոնակատարություններին, համաձայնություն տալ՝ ԱՄՆ նախագահի միջնորդությամբ հանդիպելու Ադրբեջանի նախագահի հետ... Այս բոլոր իրադարձություններն ակտիվորեն մեկնաբանվում էին լրագրողների կողմից:

Սակայն Քոչարյանի նշանային հիշատակումների (դրական եւ բացասական) բացահայտ բացասական հաշվեկշիռը խորհրդարանական ընտրությունների լույսի ներքո հիմնականում պարզ է դարձնում, թե ինչու Ազգային ժողով մտնել ձգտող կուսակցություններից փաստորեն ոչ մեկը չի հայտարարում նախագահին անվերապահորեն սատարելու մասին: Ոչ մեկը չի ուզում քաղաքական այս գործոնի հետ նույնանալու ռիսկին ենթարկվել:

Ավելի վատն են ընտրարշավին անմիջականորեն չմասնակցող մյուս բարձրաստիճան պետական պաշտոնյայի՝ վարչապետ Արմեն Դարբինյանի ցուցանիշները: Դարբինյանի դրական հիշատակումները դրանց ընդհանուր թվի 0,65%-ն են կազմում միայն, մինչդեռ բացասականները՝ 8,50%-ը (տասներեք անգամ շատ): Ուստի զարմանալի չէ, որ, հազվադեպ բացառությամբ, ընտրություններին մասնակցող կուսակցությունները ոչ միայն չեն սատարում, այլև խիստ քննադատում են կառավարությանը:

Առաջիկա ընտրություններին մասնակցելու համար կուսակցական ցուցակներում ներգրավված քաղաքական գործիչներից լրատվամիջոցներում հիշատակվում են պաշտպանության նախարար («Միասնություն» դաշինք) Վազգեն Սարգսյանը (նա երրորդն է նախագահից ու վարչապետից հետո), Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) առաջնորդ Վանո Սիրադեղյանը (հինգերորդն է) եւ Հայաստանի ժողովրդական կուսակցության առաջնորդ (դարձյալ «Միասնություն» դաշինք) Կարեն Դեմիրճյանը (յոթերորդն է): Սակայն համակրանքների առումով «Միասնություն» դաշինքն աներկբա առավելություն ունի. եւ Սարգսյանը, եւ Դեմիրճյանը նշանային հիշատակումների դրական հաշվեկշիռ ունեն: Մինչդեռ Սիրադեղյանի հաշվեկշիռը ծայրահեղ անբարենպաստ է (13 դրական եւ 128 բացասական): Իսկ եթե հաշվի առնենք նաեւ այն հանգամանքը, որ ՀՀՇ-ի վրա, ուզում են նրանք այդ, թե ոչ, առաջվա պես թեւածում է նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ստվերը, որը Սիրադեղյանի ցուցանիշներին շատ մոտ ցուցանիշներ ունի (601 հիշատակումներից 14-ը դրական են, 126-ը՝ բացասական), ապա «Միասնության» առավելությունները լրատվամիջոցների դաշտում նախկին իշխող կուսակցության համեմատ շատ ավելի համոզիչ կերտւան: ՀՀՇ-ական առաջնորդների նշանային հիշատակումների այսքան անբարենպաստ հաշվեկշիռի պարագայում մամուլում նրանց հայտնվելու հաճախականությունը հազիվ թե կարելի է ընտրություններում հաջողությանը նպաստող գործոն համարել:

Հիշատակումների աղյուսակի համաձայն լրատվամիջոցներում բարենպաստ լուսաբանում ունի Ազգային ժողովրդավարական միությունը. Արշակ Սադոյան (357 հիշատակումներից 11-ը դրական են, 9-ը՝ բացասական), Վազգեն Մանուկյան (294-ից 4 դրական, 1 բացասական): Հաջորդ տեղում է «ԻՄ+» դաշինքը. «Ինքնորոշում» միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյանը 289 հիշատակում ունի (այդ թվում՝ 5 դրական եւ 7 բացասական): «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության առաջնորդ Էդուարդ Եգորյանն ավելի քիչ չի հիշատակվել (270), բայց նրա նշանային հիշատակումների հաշվեկշիռը շատ ավելի վատն է (2 դրական եւ 39 բացասական): Այս առումով Հայ հեղափոխական դաշնակցության նախընտրական ցուցակի «առաջին համարը»՝ Վահան Հովհաննիսյանը, լրատվամիջոցներում ավելի բարենպաստ վիճակում է (263 հիշատակումից 1-ը դրական է, 8-ը՝ բացասական): Համամասնական կարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների առաջնորդներից Հովհաննիսյանին հետեւում է կոմունիստների ցուցակում «առաջին համարը»՝ Սերգեյ Բադալյանը (237 հիշատակումից 2-ը՝ դրական

են, 4-ը՝ բացասական): Նրանց հետեւում են՝ «Իրավունք եւ միաբանություն» դաշինքի առաջնորդներ Յրանտ Խաչատրյանը (185 հիշատակումից 8-ը դրական են, 0 բացասական) եւ Արտաշես Գեղամյանը (158 հիշատակումներից 9-ը դրական են, 2-ը բացասական): Նրանց միջեւ է հայտնվել «Օրինաց երկիր» կուսակցության «առաջին համարը»՝ Արթուր Բաղդասարյանը, (171 հիշատակումից 2-ը դրական են, 1-ը՝ բացասական): Մյուս կուսակցական ցուցակների դեմքերից լրատվամիջոցների ուշադրությունը համեմատաբար ավելի շատ են վայելել Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության (ՀՌԱԿ) համաատենապետներ Ռուբեն Միրզախանյանը (92 հիշատակումից 1-ը դրական է, 0 բացասական) եւ Հարություն Կարապետյանը (51 հիշատակումից 0 դրական եւ 2 բացասական):

Առանձին լրատվամիջոցների առումով հարկ է արձանագրել. խորհրդարանական ընտրությունների մոտենալուն զուգընթաց տպագիր լրատվամիջոցները շատ ավելի անթաքույց են դրսևորում իրենց հովանավորող քաղաքական գործիչներին եւ ուժերին իրենց կապվածությունը, իսկ ուսումնասիրվող հեռուստատեսային եւ ռադիոձրագրերն, ընդհակառակը, ընդգծված անաչառ էին:

«Հայլուր»-ը, «Օրակարգ»-ը (Հայաստանի ազգային հեռուստատեսություն), «Այբ-Ֆե»-ն, «Կիրակի»-ն («Ա1+» հեռուստաընկերություն), «Սուրհանդակ»-ը, «7 քար»-ը («ԱՐ» հեռուստաընկերություն), «Լուրեր»-ը (Հայաստանի ազգային ռադիո) մարտ-ապրիլին նվազագույն նշանային հիշատակումներ են արել: «Օրակարգ» լրատվական-վերլուծական հաղորդման մեջ այս երկու ամիսների ընթացքում նշանային հիշատակումներ ընդհանրապես չեն եղել: Գիշտ է, նույն այդ «Օրակարգը» հատուկ ուշադրություն է դարձրել ՀՀ նախագահի անձին: Քոչարյանը ոչ միայն բոլորից շատ է հիշատակվել, այլ նաեւ իր տեսակետները, կարծիքներն արտահայտելու համար անհամեմատ շատ եթերային ժամանակ է ստացել (889 վրկ.): Ընդ որում, ծավալի առումով նախագահից հետո երկրորդ տեղում է (295 վրկ.) նրա մամուլի քարտուղար Վահե Գաբրիելյանը, որը, բնականաբար, նույնպես նախագահի տեսակետներն է արտահայտում:

Այդուհանդերձ, էլեկտրոնային լրատվամիջոցներն ընտրարշավում ոչ մեկին նախապատվություն չեն տալիս՝ ի տարբերություն, ինչպես արդեն նշվեց, թերթերի, որտեղ աչառությունը երեւում է եւ նշանային հիշատակումների առատության, եւ քաղաքական գործիչների կարծիքներին ու հայացքներին մակերես տրամադրելու սկզբունքի մեջ: «Օրագիրը», ինչպես եւ սպասելի էր, ամենաշատ մակերես տրամադրել է «Նոր ուղի» կուսակցության առաջնորդ Աշոտ Բլեյանին: «Իրավունք եւ միաբանություն» դաշինքի «առաջին համար» Արտաշես Գեղամյանն է, իսկ ցուցակում «երկրորդ համար» Յրանտ Խաչատրյանը երրորդ տեղում է: Ազգային ժողովի հիմնադրած հրատարակությունները («Հայաստանի Հանրապետութիւն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա») ամենաշատ մակերես տրամադրել են խորհրդարանի խոսնակ Խոսրով Հարությունյանին: Դաշնակցամետ «Երկիր» եւ «Հայոց աշխարհ» թերթերում ՀՀ առաջնորդ Վահան Հովհաննիսյանն իր խոսքին տրամադրված մակերեսով համապատասխանաբար առաջին եւ երկրորդ տեղերում է: (Հետաքրքրական է, որ երկու թերթերում էլ Վահան Հովհաննիսյանին անմիջապես հաջորդում է Ազգային ժողովրդավարական միության առաջնորդ Վազգեն Մանուկյանը): «Հայք» շաբաթաթերթում (ՀՀ պաշտոնաթերթ) մակերեսով երկրորդ տեղում է այդ կուսակցության առաջնորդ Վանո Միրադեղյանը՝ չնայած այս երկամսյակում արտասահմանում գտնվելու պարագային, իսկ երրորդում՝ ներկուսակցական ընդդիմության ներկայացուցիչ Արա Սահակյանը:

«Ազգը» ամենաշատ մակերես է տրամադրել ՀՌԱԿ համաատենապետ Ռուբեն Միրզախանյանին: Սակայն, ի տարբերություն «Հայքի», ռամկավարամետ թերթը բարեհաճ չէ ներկուսակցական «խռովարարների» նկատմամբ: Երկրորդ համաատենապետ Հարու-

թյուն Կարապետյանին նվազագույն չափով է ուշադրություն դարձվել: Ինքնաբերական եզրահանգում է ծնվում, թե ՀՌԱԿ երկու թեւերի միջեւ փոխգիջումը ոչ թե սկզբունքային հաշտություն է, այլ՝ տուրք նախընտրական պատեհապաշտությանը: Համենայն դեպս այս փուլում այդպես է:

«Նովոյե վրենյա»-ում, ինչպես եւ նախորդ երկամսյակում, տրամադրված մակերեսով մրցակցությունից դուրս է թերթի հիմնադիր-կազմակերպության ղեկավար Արկադի Վարդանյանը: Ճիշտ է, նա չի առաջադրվել որպես թեկնածու, սակայն տվյալ պարագայում կարելուրը միտումն է. թերթերը պարտաճանաչ կերպով կատարում են որոշակի քաղաքական գործիչների կամ ուժերի խոսափողի դերը:

Մարտ-ապրիլ ամիսների արդյունքներից դատելով՝ բացառություն է «Ժամանակ» թերթը: Հաշվի առնելով Հանրապետական կուսակցության հետ նրա «հատուկ հարաբերությունները» կարելի էր ակնկալել, որ ամենաշատ տարածք կտրամադրվի կուսակցության ոչ պաշտոնական առաջնորդ, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին: Սակայն այդ ցուցանիշով Սարգսյանն ընդամենը ութերորդ տեղում է՝ վերին տեղերը զիջելով ՀՀԿ-ի հետ ոչ մի առնչություն չունեցող քաղաքական գործիչներին:

Մեկուսի դիրք են գրավում «Առավոտ» եւ «Գոլոս Արմենիի» թերթերը: Իզոր Մուրադյանի վերլուծական հոդվածներին տրամադրվող աննախադեպ ծավալները կարող էին ենթադրություն ծնել, թե այս թերթերը համակրում են այն քաղաքական միավորումներին, որոնց հակված է Իզոր Մուրադյանը (Սոցիալիստական ուժերի միություն, Ազգային անվտանգության կուսակցություն, «Ռուսաստան-Բելառուս-Հայաստան ժողովրդական նախաձեռնություն», «Սոցիալիստական ուժերի եւ մտավորականության միություն» դաշինք): Սակայն մնացած ամեն ինչում «Առավոտին» եւ «Գոլոս Արմենիի»-ին դժվար է ընդհանուր քաղաքական հակումներ ունենալու մեջ կասկածել, ուստի Մուրադյանի նկատմամբ նրանց հետաքրքրությունն ավելի շուտ հեղինակին է վերաբերում, քան քաղաքական գործչին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետություն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.500 - 6.500 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 100-150 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար, որից 3 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (2 համար՝ A2 չափի 8 էջ եւ 1 համար՝ A3 չափի 16 էջ):

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար, որից 1 համար՝ հավելվածով, որը չի հաշվարկվել:

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ ՀՀ-ի Հայաստանի Գերագույն մարմին: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.000 օրինակ: Գինը՝ 50 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 41 համար:

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ թերթի խմբագրական խորհուրդ: Ծավալը՝ 4 տպագրական մամուլ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Ծավալը՝ 4 տպ. մամուլ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 2.500 - 3.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար:

«ՕՐԱԳԻՐ»

Տեղեկանք. «Օրագիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1998թ.: Հիմնադիրը եւ հրատարակիչը մասնավոր անձ է: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար:

«ԺԱՄԱՆԱԿ»

Տեղեկանք. «Ժամանակ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1998թ.: Հիմնադիր եւ հրատարակիչ՝ թերթի հիմնադիր խորհուրդ: Ծավալը՝ 4 տպագրական մամուլ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 1.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար:

«ԳՈՒՆՍ ԱՐՄԵՆԻԻ»

Տեղեկանք. «Գույնս Արմենիի» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ խմբագրության աշխատանքային կոլեկտիվ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 26 համար:

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ»

Տեղեկանք. «Նովոյե վրեմյա» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1992թ.: Հիմնադիր՝ «21-րդ դար» միջազգային անկախ ընկերակցություն: Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 25 համար. 12 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ), 7 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ, «Էլիտարնայա գազետա» ներդիրը չի հաշվարկվում) եւ 6 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 8 էջ):

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք» - լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Հայտարարված տպաքանակը 17.000-19.000: Ապրիլի 30-ի համարը լույս է տեսել 50.000 օրինակ տպաքանակով: Գինը՝ 60-90 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 18 համար. 1 համար՝ 4 տպ. մանուլ ծավալով (A3 չափի 16 էջ) 8 համար՝ 3 տպ. մանուլ ծավալով (A3 չափի 12 էջ) եւ 9 համար՝ 2 տպ. մանուլ ծավալով (A3 չափի 8 էջ):

«ՀԱՅՔ»

Տեղեկանք. «Հայք» - շաբաթաթերթ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ Հայոց համագգային շարժում: Ծավալը՝ 4 տպ. մանուլ (A3 չափի 16 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 140 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 9 համար:

«ՀԱՅԼՈՒՐ»

Տեղեկանք. «Հայլուր» - Հայաստանի ազգային հեռուստատեսության լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվում է օրական 5 անգամ, շաբաթ օրերին՝ 4 անգամ: Մարտի 1-ից ապրիլի 17-ը դիտարկվել են 20.00-ի, իսկ ապրիլի 19-ից՝ 21.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 53 թողարկում:

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 9 անգամ: Դիտարկվել են 21.45-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 50 թողարկում:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ»

Տեղեկանք. «Սուրհանդակ» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 4 անգամ: Դիտարկվել են 23.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 53 թողարկում:

«ՕՐԱԿԱՐԳ»

Տեղեկանք. «Օրակարգ» - ՀԱՀ լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 21.00-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 8 հաղորդում:

«ԿԻՐԱԿԻ»

Տեղեկանք. «Կիրակի» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 21.45-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 7 թողարկում:

«7 ՔԱՐ»

Տեղեկանք. «7 քար» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 22.30-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 8 թողարկում:

«ԼՈՒԵՐ»

Տեղեկանք. «Լուրեր» - Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Մարտի 1-14-ը շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվել է օրական 13 անգամ, շաբաթ օրերին՝ 9 անգամ, կիրակի օրերին՝ 8 անգամ: Մարտի 15-ից շաբաթը հինգ օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվում է օրական 16 անգամ, շաբաթ օրերին՝ 11 անգամ, կիրակի օրերին՝ 8 անգամ: Դիտարկվել են 23.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1-29 մայիսի, 1999

ԴԻՏԱՐԿՄԱՆ մայիսի փուլը, բնականաբար, կենտրոնացել էր ընտրարշավի վրա: Թեև ընտրություններից քիչ առաջ լրատվամիջոցների ասպարեզում նոր, հեռանկարային հեռուստաալիքներ հայտնվեցին, ուսումնասիրվող լրատվամիջոցների ցանկը չէր փոփոխվել: ԵՄԱ դիտարկող խումբը կարելու էր համարում հեռուստաալիքների կողմից ընտրարշավի լուսաբանմանը հետեւել նրանց նախկին գործունեության համատեքստում, դրա համար էլ ընտրել էինք մեկ պետական (Հայաստանի ազգային հեռուստատեսություն) եւ երկու մասնավոր հեռուստաալիքներ («ԱՐ» եւ «Ա1+»), որոնք արդեն կարելի է Հայաստանի համար լրատվության կայուն աղբյուրներ համարել: Թերթերը դիտարկվել են ամբողջ ծավալով (բացառվել են միայն պետական մամուլում ընտրական օրենսգրքի եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հիման վրա տպագրվող պարտադիր հրապարակումները): Իսկ հետազոտվող յուրաքանչյուր հեռուստաալիքից ընտրվել են մեկական ամենօրյա լրատվական թողարկում եւ մեկական ամենշաբաթյա լրատվական-վերլուծական հաղորդում, ինչպես նաեւ այնպիսի հաղորդումներ, որոնք այստեղ պայմանականորեն «թոք-շոու» ենք կոչել. «Այսօր», «Դեմքեր», «Առավոտից» քաղաքականություն» հաղորդումները՝ ՀԱՀ-ում, «P.S.»-ը՝ «Ա1+»-ում, «Հետագիծ», «Կամ... կամ», «Տոմար», «Ասպարեզ» հաղորդումները՝ «ԱՐ»-ում: Հայաստանի ազգային ռադիոյում առաջվա պես դիտարկվել է մեկ ամենօրյա լրատվական ծրագիր:

Քանի որ ՁԼՄ եվրոպական ինստիտուտը մայիսին հայկական մամուլի ընդհանուր դիտարկում էր անցկացնում, որի վերջնական արդյունքներն ավելի ուշ կիրառարկվեն, ԵՄԱ-ն իր ուսումնասիրությունը կառուցել է ոչ թե համապարփակ հաշվարկների վրա, այլ՝ ինդիկատորների սկզբունքով: Այսպես՝ դիտարկման մայիսի փուլի ժամանակ հաշվարկվել են 87 քաղաքական գործիչների հիշատակումների քանակը (բնույթը) եւ կարծիքներն արտահայտելու համար նրանց տրամադրված ծավալը: Ինդիկատոր-գործիչների խմբում այս անգամ կուսակցական ցուցակների առաջին երեք գործիչներն էին՝ 63 մարդ, եւ առավել ակտիվ 24 այլ քաղաքական գործիչներ՝ ըստ դիտարկման նախորդ փուլերում հիշատակումների հաճախականության: Առաջին եռյակների ցուցանիշները կարելու էր, քանի որ այդ քաղաքական գործիչների անունները կան ընտրաթերթիկում եւ կուսակցությունների/դաշինքների համար յուրօրինակ «ցուցափեղկի» դեր են կատարում: Այդուհանդերձ, թեև բնականաբար ոչ բոլոր հայ առաջատար քաղաքական գործիչներն էին հայտնվել կուսակցական ցուցակների վերին տողերում, ոչ բոլորն էին ընդհանրապես մասնակցել ընտրություններին, բայց նրանց ցուցանիշները նույնպես հետաքրքիր են:

Չնայած պատգամավորության թեկնածուների նկատմամբ ժողովրդի եւ ՁԼՄ-ների հատուկ ուշադրությանը՝ ուսումնասիրվող լրատվամիջոցներում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ստացել է հիշատակումների իր «ամսական միջինը» (մոտ՝ 1.000) եւ, ինչպես միշտ, առաջին տեղում է: Նշանային հիշատակումների հաշվեկշիռը (9 դրական եւ 51 բացասական) նույնպես համապատասխանում է վերջին ամիսների միջին ցուցանիշին:

Քոչարյանը, ինչպես երեւում է բերված աղյուսակներում, հիշատակումների առումով առաջատար է նաեւ որոշ առանձին լրատվամիջոցներում: Միայն «Իրավունք», «Ժամանակ» թերթերում եւ «7 քար» («ԱՐ») հեռուստահաղորդման մեջ է, որ նա զիջել է առաջին տեղը. «Իրավունքում» ՂՅԾ առաջնորդ Վանո Սիրադեղյանին, իսկ «Ժամանակում» եւ «7 քար»-ում՝ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին: Հենց այս քաղաքական գործիչներն են, որ բոլոր լրատվամիջոցների միագումար աղյուսակում տեղ են գրավել նախագահից հետո, ընդ որում՝ վերոնշյալ հաջորդականությամբ:

Կարծիքներն արտահայտելու համար տրամադրված տարածքի/ժամանակի առումով Քոչարյանի առավելությունն արդեն այդքան ակնհայտ չէ. նա առաջին տեղում է միայն ՀԱՀ-ի, ՀԱՌ-ի եւ «ԱՐ»-ի լրատվական ծրագրերում, «Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Ազգ» եւ «Հայոց աշխարհ» թերթերում:

Այս տարվա մարտ-ապրիլին, ընտրությունների մոտենալուն համընթաց, նշանային հիշատակումների աճի միտումը խիստ ակնհայտորեն էր դրսևորվել: Սակայն, հակառակ դիտարկող խմբի կանխատեսումների, մայիսին այդ միտումը հետընթաց ունեցավ, եւ դրական/բացասական հիշատակումների բաժինը զգալիորեն կրճատվեց, այսինքն՝ ավելի քիչ էին գնահատականները, ավելի շատ՝ լրատվությունը: Պատահական չէ, որ հայկական ՁԼՄ-ների գործունեությունը ընտրարշավի ընթացքում լուրջ դիտողությունների չի արժանացել թեկնածուների եւ դիտորդների կողմից:

Մինչդեռ դիտարկման նախորդ փուլերում նկատված մյուս միտումներն ի հայտ եկան նաեւ մայիսին: Դիտարկվող էլեկտրոնային լրատվամիջոցները, հատկապես՝ դրանց լրատվական ծրագրերը փաստորեն ոչ մի կերպ չեն դրսևորել իրենց համակրանքները. քաղաքական գործիչների նկատմամբ ուշադրության տարբերությունը, որպես կանոն, պայմանավորված է լսարանի հետաքրքրությամբ: Նշանային հիշատակումների քանակը նվազագույն է, իսկ ՀԱՀ-ի ամենշաբաթյա «Օրակարգ» լրատվական-վերլուծական ծրագրում, ինչպես եւ մարտ-ապրիլին, նշանային հիշատակումներ ընդհանրապես չեն գրանցվել:

Տպագիր լրատվամիջոցները չեն թաքցրել իրենց համակրանքները եւ, չնչին բացառությամբ, բացահայտ քարոզարշավ են տարել կոնկրետ քաղաքական ուժերի օգտին:

Բացառություն են եղել «Առավոտը», «Գոլոս Արմենիին», «Նովոյե վրեմյան»: Դիտարկման տվյալները չեն բացահայտում ընտրություններին մասնակցող այս կամ այն քաղաքական ուժի նկատմամբ այս թերթերի միանշանակ համակրանքը, թեւ մարտ-ապրիլի փուլի նման երեք թերթերն էլ կարծիքներին տրամադրված մակերեսի առումով ակնհայտ առաջատարներ ունեն: «Առավոտում» եւ «ԳԱ»-ում այդ առաջատարը 80-ականների դարաբաղյան շարժման նախաձեռնողներից մեկն է՝ Իգոր Մուրադյանը, իսկ «Նովոյե վրեմյա»-ում՝ «21-րդ դար» ընկերակցության նախագահ Արկադի Վարդանյանը: Երկուսն էլ առաջատար են դարձել իրենց գրած հոդվածների հաշվին եւ ընտրարշավին անմիջականորեն չեն մասնակցել: (Կրկին նշենք, որ Վարդանյանը գլխավորում է «ՆՎ»-ի հիմնադիր կազմակերպությունը):

Մյուս հրատարակությունների քաղաքական կողմնորոշիչներն այս կամ այն չափով որոշակի էին: Ինչպես եւ դիտարկման նախորդ փուլում, «Ազգը» առավել հաճույքով իր էջերը տրամադրել է Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության (ՀՌԱԿ) հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Սիրզախանյանին (նա այս ցուցանիշով շատ քիչ է ետ մնում նախագահ Ռոբերտ Քոչարյանից), «Երկիրն» ու «Հայոց աշխարհը»՝ ՀՀԴ առաջնորդ Վահան Հովհաննիսյանին, որն այս թերթերում համապատասխանաբար գրավել է առաջին եւ երկրորդ (Քոչարյանից հետո) տեղերը: «Իրավունքում» առաջին երկու տեղերում «Սահմանադրական իրավունք» միության («Իրավունք եւ միաբանու-

թյուն» դաշինք) առաջնորդներն են՝ Հայկ Բաբուխանյանը եւ Հրանտ Խաչատրյանը, «Հայքում» մրցակցությունից դուրս է Վանո Սիրադեղյանը, «Օրագրում»՝ «Նոր ուղի» կուսակցության առաջնորդ Աշոտ Բլեյանը:

Դիտարկման նախորդ փուլի համեմատությամբ կտրուկ փոխվել է «Ժամանակ»-ը: Եթե առաջ դիտարկման արդյունքում ստացված թվերը ոչինչ չէին ասում թերթի դիրքորոշման մասին, ապա մայիսին այն հանդես է եկել որպես զուտ կուսակցական թերթ. բոլոր ցուցանիշներով այստեղ հսկայական առավելություն են ունեցել «Միասնություն» դաշինքի ցուցակի առաջին երկու դեմքերը՝ Կարեն Դեմիրճյանը եւ Վազգեն Սարգսյանը:

Իրենց մոտեցումները փոխել են նաեւ (բայց՝ հակառակ առումով) խորհրդարանական թերթերը՝ «Հայաստանի Հանրապետությունը» եւ «Ռեսպուբլիկա Արմենիան»: ՀՀ ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանին, որը նախորդ փուլում այս թերթերում առավելագույն մակերես էր ստացել, այս անգամ ուշադրությամբ երես չեն տվել: Հիշատակումների առումով թե՛ «ՀՀ»-ում, թե՛ «ՌԱ»-ում նա հինգերորդն է, իսկ կարծիքներին տրամադրված մակերեսի առումով համապատասխանաբար՝ երրորդն ու չորրորդը: Ընդ որում, նրան «ենթակա» այդ թերթերում Խ. Հարությունյանից առաջ են անցել ոչ միայն նախագահը եւ վարչապետը, որոնք, բնականաբար, ընտրություններին չէին մասնակցում, այլ նաեւ պատգամավորության թեկնածու Վազգեն Սարգսյանը («ՀՀ»-ում) եւ ԱԺՄ ցուցակի երրորդ համարը՝ Ռավիթ Վարդանյանը («ՌԱ»-ում): Ընդհանուր առմամբ «ՀՀ»-ում ակնհայտ շեղում էր նկատվում «Միասնության» կողմը. այս դաշինքի առաջին եռյակն իր կարծիքներն արտահայտելու համար ստացել է 3.217,37 քառ.սմ, որն ավելի քան երեք անգամ շատ է, քան ՀՀԴ-ի ներկայացուցիչներինը, որոնք երկրորդ տեղում են: Թեեւ «ՌԱ»-ի վարքագիծն ընդհանուր առմամբ կարելի է իշխանամետ համարել, բայց Հայաստանում իշխանությունը, ինչպես նշում են շատ քաղաքական գործիչներ, մի քանի բեւեռի է բաժանվել, եւ «ՌԱ»-ն դրանցից ոչ մեկի կողմը չի հակվել: Դժվար է ասել, թե «ՀՀ» եւ «ՌԱ» թերթերի անբիոնն օգտագործելու արտոնության կորուստը որքանով պայմանավորեց ընտրություններում Խ.Հարությունյանի անհաջողությունը:

Ընդհանուր առմամբ բավականին հետաքրքիր է այն թեման, թե որքանով են ընտրություններում ստացած արդյունքները կախված թեկնածուների եւ կուսակցությունների կողմից լրատվամիջոցներն օգտագործելու հնարավորությունից: Այս առումով կուսակցական ցուցակների առաջին եռյակների միագումար ցուցանիշները եթե չեն էլ պատասխանում բոլոր հարցերին, ապա վերլուծության համար բավականին նյութ են տալիս:

Այսպես՝ դիտարկված թերթերում իրենց կարծիքներն արտահայտելու համար ստացած միագումար մակերեսով առաջատար են «Միասնությունը»՝ 10.050,26 քառ.սմ, ՀՀԴ-ն՝ 7.939,56 քառ.սմ, «Իրավունք եւ միաբանությունը»՝ 7.732,99 քառ.սմ, ՀՈԱԿ-ը՝ 6.704,53 քառ.սմ, ԱԺՄ-ն՝ 6.294,16 քառ.սմ, ՀԿԿ-ն՝ 6.214,06 քառ.սմ: Դիտարկված էլեկտրոնային լրատվամիջոցների լրատվական ծրագրերում առաջատար են «Միասնությունը»՝ 2.003 վրկ., «Ազատություն» կուսակցությունը՝ 1.156 վրկ., ՀԿԿ-ն՝ 1.132 վրկ., «ԱԻՄ+» դաշինքը՝ 1.111 վրկ., ՀՀԴ-ն՝ 909 վրկ.:

Բոլոր լրատվամիջոցներում հիշատակումների առումով դարձյալ անհասանելի է «Միասնությունը»՝ 1.007 (այդ թվում՝ 60 դրական եւ 35 բացասական), որին հետեւում են ՀՀԾ-ն՝ 762 (այդ թվում՝ 9 դրական եւ 84 բացասական), «Իրավունք եւ միաբանությունը»՝ 367 (այդ թվում՝ 20 դրական եւ 16 բացասական), ԱԺՄ-ն՝ 288 (այդ թվում՝ 10 դրական եւ 1 բացասական), ՀՀԴ-ն՝ 249 (այդ թվում՝ 4 դրական, 9 բացասական):

Խիստ համարձակ եզրահանգում կլիներ ընտրություններում «Միասնության» ճնշող առավելությունը ՁԼՄ-ներում առաջատար դիրքով բացատրելը (նույն կերպ նաեւ մյուս կուսակցությունների/դաշինքների հաջողությունը կամ անհաջողությունը): Ի վերջո կա-

րող է նաեւ հակադարձ կապը գործել. լրագրողները «վազում են» ընտրողների շրջանում հեղինակություն ունեցող քաղաքական գործիչների հետեւից: Բայց, ամենայն հավանականությամբ, այս գործոնները փոխազդում են միմյանց վրա. մի կողմից՝ լրատվամիջոցները ձգտում էին բավարարել նորաստեղծ հզոր դաշինքի նկատմամբ ընթերցողների հետաքրքրությունը, մյուս կողմից՝ «Միասնությանը» ուշադրության կենտրոնում պահելով՝ օգնեցին բոլորին ընտելանալու այն մտքին, որ ընտրություններում ուրիշ հաղթող չի կարող լինել:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ հաջողության եւ ՁԼՄ-ների կողմից ուշադրության կապն առավել ակնհայտ է դառնում, երբ դիտարկում ենք «թոք-շոու» ժանրի հեռուստահաղորդումները: Ցույց տանք դիտարկվող երեք հեռուստաալիքների «թոք-շոու» ծրագրերում այս կամ այն կուսակցության ներկայացուցիչների հայտնվելու հաճախականությունը. «Միասնություն»-ը եւ ԶՅԴ-ն՝ 14-ական, ԱԺՄ-ն՝ 7, ԶԿԿ-ն ու «Իրավունք եւ միաբանությունը»՝ 5-ական անգամ: Ինչպես տեսնում ենք, առաջատարների ցուցակը շատ ծանոթ է. սրանք բոլորը 5%-անոց պատնեշը հաղթահարած կուսակցություններն են: 5 անգամ եթերում երեւացել են նաեւ «Հզոր հայրենիք» կուսակցության անդամները, որը սակայն 5%-ի սահմանը չկարողացավ անցնել: Բայց վերջինիս բոլոր հինգ հայտնություններն էլ «ԱՐ» հեռուստաալիքում են եղել, մինչդեռ վերոհիշյալ հինգը օգտագործել են դիտարկված բոլոր երեք հեռուստաալիքները: 5 եւ ավելի տոկոս ստացած կուսակցություններից այս ցուցակում չկա միայն «Օրինաց երկիրը», որի ներկայացուցիչները սոսկ 1-ական անգամ են հայտնվել «P.S.» («Ա1+») եւ «Հետագիծ» («ԱՐ») ծրագրերում եւ ոչ մի անգամ՝ ԶԱԶ-ում: Սակայն կարծում ենք, որ «Օրինաց երկիրը» լիուլի օգտագործել է «Այգ» հեռուստաալիքը, որի տնօրենը նույն կուսակցության փոխնախագահն է (այս նոր հեռուստաընկերությունը, ինչպես ասացինք, չի ընդգրկվել դիտարկվող ՁԼՄ-ների ցանկում):

Չորս կուսակցությունները/դաշինքները, որոնց ներկայացուցիչները դիտարկված ալիքների ոչ մի «թոք-շոուին» չեն մասնակցել (Հայաստանի դեմոկրատական կուսակցություն, «Կոմունիստական եւ սոցիալիստական կուսակցությունների միություն» դաշինք, «Ազատություն» եւ «Առաքելություն» կուսակցություններ), ձայների փոքր տոկս են ստացել:

Հետաքրքիր է դիտարկել նաեւ «թոք-շոուների» մասնակիցների խմբերը՝ ուսումնասիրված երեք հեռուստաալիքներից յուրաքանչյուրում: ԶԱԶ-ն ընդգրկել է համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող 14 կուսակցությունների/դաշինքների, իսկ «ԱՐ»-ը եւ «Ա1+»-ը՝ 12-ական: Ընդ որում, դրանցից 8-ը համընկնում են (բացի վերոհիշյալ 5 առաջատարներից նաեւ ԶՌԿ-ը, «Հայրենիք» դաշինքը եւ «ԱԻՄ+»-ը): Առանձին հաղորդումներից առավել լայն ներկայացուցչություն է ապահովել «P.S.»-ը՝ 12 կուսակցություն (ընդամենը 20 հաղորդում): «Այսօր» (ԶԱԶ) հաղորդմանը հյուր են եղել 8 կուսակցություն/դաշինք (ընդամենը 15 հաղորդում): ԶԱԶ «թոք-շոուներում» բոլորից շատ՝ 4-ական անգամ մասնակցել են «Միասնության» եւ ԶՅԴ-ի ներկայացուցիչները, ընդ որում նրանք հանդես են եկել բոլոր երեք հաղորդումներում («Այսօր», «Դեմքեր», «Առավոտից՝ քաղաքականություն»): «ԱՐ»-ում նույնպես մյուսներից ավելի հաճախ են հյուր եղել այդ երկու կուսակցության/դաշինքի ներկայացուցիչները. ԶՅԴ-ն՝ 9 անգամ, «Միասնությունը»՝ 8: Ընդ որում, ԶՅԴ-ն հյուր է եղել բոլոր չորս հաղորդումներում («Հետագիծ», «Կամ... կամ», «Տոմար», «Ասպարեզ»), իսկ «Միասնությունը»՝ երկու («Հետագիծ» եւ «Ասպարեզ»): Բոլոր չորս հաղորդումներում (ընդամենը 5 անգամ) մասնակցել են նաեւ «Հզոր հայրենիք» կուսակցության ներկայացուցիչները: Երեք հաղորդումներում (յուրաքանչյուրում՝ 1 անգամ) մասնակցել է ԱԺՄ ներկայացուցիչը, ընդ որում՝ երեք անգամն էլ դա Ավետիք Իշխանյանն էր: «Ա1+» հեռուստաընկերության «P.S.» հաղորդմանը մյուսներից հաճախ են մասնակցել «Սոցիալիստական ուժերի եւ մտավորականների միություն» դաշինքի ներկայացուցիչները (3 անգամ), «Հայրենիքի», «Միասնության» եւ ԱԺՄ-ի ներկայացուցիչները (2-ական անգամ):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետություն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Ծավալը՝ 4 տպ. մանուկ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 20 համար:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մանուկ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 100-150 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 20 համար, որից 3 համար՝ 4 տպ. մանուկ ծավալով (A2 չափի 8 էջ):

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 20 համար:

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 1.800-2.000 օրինակ, մայիսի 28-ի համարը լույս է տեսել 5.000 օրինակ տպաքանակով: Գինը՝ 50 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 19 համար, որից 1 համար՝ 4տպ. մանուկ ծավալով (A3 չափի 16 էջ):

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ «Առավոտ» թերթի խմբագրական խորհուրդ: Ծավալը՝ 4 տպագրական մանուկ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 21 համար:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Ծավալը՝ 4 տպ. մանուկ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 20 համար:

«ՕՐԱԳԻՐ»

Տեղեկանք. «Օրագիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1998թ.: Հիմնադիրը եւ հրատարակիչը մասնավոր անձ է: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չա-

փի 8 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 20 համար:

«ԺԱՄԱՆԱԿ»

Տեղեկանք. «Ժամանակ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1998թ.: Հիմնադիր եւ հրատարակիչ՝ թերթի հիմնադիր խորհուրդ: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 1.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 20 համար, որից 9 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ):

«ԳՈՂՈՍ ԱՐՄԵՆԻԻ»

Տեղեկանք. «Գողոս Արմենիի» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր խմբագրության աշխատանքային կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 13 համար, որից 7 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ):

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ»

Տեղեկանք. «Նովոյե վրեմյա» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1992թ.: Հիմնադիր՝ «21-րդ դար» միջազգային անկախ ընկերակցություն: Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 13 համար. 4 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ), 4 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ, «Ելիտարնայա գազետա» ներդիրը չի հաշվարկվում) եւ 5 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 8 էջ):

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք» - լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Հայտարարված տպաքանակը՝ 50.000 օրինակ: Գինը՝ 60-90 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 8 համար. 4 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 12 էջ) եւ 4 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ):

«ՀԱՅՔ»

Տեղեկանք. «Հայք» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ Հայոց համազգային շարժում: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Տպաքանակը չի նշվում: Գինը՝ 90 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 11 համար:

«ՀԱՅԼՈՒՐ»

Տեղեկանք. «Հայլուր» - Հայաստանի ազգային հեռուստատեսության լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) եթեր է թողարկվում օրական 5 անգամ, շաբաթ օրերին՝ 4 անգամ: Դիտարկվել են 21.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 25 թողարկում:

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 9 անգամ: Դիտարկվել են 21.45-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 25 թողարկում:

«ՍՈՒՐԱՆԴԱԿ»

Տեղեկանք. «Սուրհանդակ» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 4 անգամ: Դիտարկվել են 23.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 25 թողարկում:

«ՕՐԱԿԱՐԳ»

Տեղեկանք. «Օրակարգ» - ՀԱՀ լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 21.00-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 4 թողարկում:

«ԿԻՐԱԿԻ»

Տեղեկանք. «Կիրակի» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 21.45-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 4 թողարկում:

«7 ՔԱՐ»

Տեղեկանք. «7 քար» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական-վերլուծական ծրագիր: Թողարկվում է կիրակի օրերին, 22.30-ին: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 4 թողարկում:

«ԼՈՒՐԵՐ»

Տեղեկանք. «Լուրեր» - Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Շաբաթը հինգ օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվում է օրական 16 անգամ, շաբաթ օրերին՝ 11 անգամ, կիրակի օրերին՝ 8 անգամ: Դիտարկվել են 23.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 23 թողարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1 հուլիսի - 31 օգոստոսի, 1999

Տվյալ երկամսյա շրջանը հայկական լրատվամիջոցների համար հետաքրքիր է նախ եւ առաջ այն առումով, որ այստեղ արտացոլվել են մայիսյան խորհրդարանական ընտրությունների եւ դրանց հաջորդած՝ երկրում ազդեցությունների ոլորտների վերաբաշխման հետ առնչվող քաղաքական գործընթացները: Եթե հունիսը, երբ իշխանական կառույցները նոր-նոր էին համապատասխանեցվում ընտրությունների արդյունքներին, կարելի է անցումային ամիս համարել, ապա հուլիս-օգոստոսին հետընտրական միտումներն ավելի ակնհայտ դարձան, այդ թվում նաեւ՝ զանգվածային լրատվամիջոցների ոլորտում:

Այս փուլում ԵՄԱ դիտարկող խումբն ուսումնասիրել է տասը թերթի, վեց հեռուստաալիքի եւ մեկ ռադիոալիքի կողմից քաղաքական գործիչների եւ քաղաքական խմբավորումների նկատմամբ ուշադրության աստիճանը: Ընդ որում, էլեկտրոնային լրատվամիջոցներում դիտարկման առարկա են դարձել հիմնական ամենօրյա լրատվական թողարկումները, որ յուրաքանչյուր ալիքի քաղաքական դեմքն են:

Արձանագրված առաջին միտումն այն է, որ ՁԼՄ-ներում հիշատակումների, ինչպես նաև տեսակետների/կարծիքների տրամադրված թերթային մակերեսի/երթային ժամանակի առումով նախագահ Ռոբերտ Քոչարյանի համար լուրջ մրցակից է հայտնվել: Այդ մրցակիցը նոր վարչապետ Վազգեն Սարգսյանն է: Ընդ որում, եթե լրատվամիջոցները դիտարկենք որպես հասարակական կարծիքի հայելի, ապա կարելի է նշել, որ վարչապետը վստահության որոշակի պաշար ունի, ինչի մասին վկայում է ՁԼՄ-ներում նրա անվան նշանային հիշատակումների դրական հաշվեկշիռը (37 դրական եւ 4 բացասական):

Հետաքրքիր է հիշել, որ նախագահական ընտրություններից հետո առաջին ամիսների ընթացքում Ռոբերտ Քոչարյանը նույնպես հիշատակումների դրական հաշվեկշիռ ուներ: Այսպես՝ 1998թ. մայիս-հունիսին նրա դրական եւ բացասական հիշատակումների հարաբերակցությունը 78-26 էր: Բայց հետագայում երկրի բոլոր հիմնախնդիրները բնականաբար սկսեցին կապել երկրի ղեկավարի գործունեության հետ, եւ հաշվեկշիռը կտրուկ վատացավ. 1998թ. հուլիս-օգոստոսին՝ 20-32, 1998թ. սեպտեմբեր-հոկտեմբերին՝ 18-96, 1998թ. նոյեմբեր-դեկտեմբերին՝ 19-37, 1999թ. հունվար-փետրվարին՝ 36-142, 1999թ. մարտ-ապրիլին՝ 48-137, 1999թ. մայիսին՝ 9-51: Թե նման կերպափոխությունները որքանով կառնչվեն Վազգեն Սարգսյանին, ցույց կտան առաջիկա ամիսները:

Ի դեպ, Քոչարյանի համար անբարենպաստ հիշատակումների երկարատեւ շրջանը, թվում է, թե ընդհատվել է. 1999թ. հուլիս-օգոստոսին վերջին տարվա ընթացքում առաջին անգամ նա նշանային հիշատակումների դրական հաշվեկշիռ ունի՝ 14-10: Քանի որ հնարավոր չի խոսել երկրում իրավիճակի բարելավման կամ հիմնահարցերի բեռի թեթևացման մասին, ուրեմն կարելի է հետևություն անել, որ դժվարին կյանքի համար պատասխանատվությունը հասարակությունը (ՁԼՄ-ների միջոցով) միայն նախագահի վրա չի գցում, ճիշտ այնպես, ինչպես միայն նրա հետ չի կապում բարելավման հույսերը: Պատահական չէ, որ սոցիալական լավատեսության ավանդական ետընտրական չափաբաժինը Վազգեն Սարգսյանին է հասցեագրված: Նշանային հիշատակումների նրա հաշվեկշիռն առավել նպաստավոր է եւ գերազանցում է նույնիսկ ընտրություն-99-ում հաղթած դաշինքի ղեկավարի՝ ԱԺ նոր խոսնակ Կարեն Դեմիրճյանի ցուցանիշը (14 դրական եւ 2 բացասական):

Վերջին եզրահանգումները կարող էին անթերիության հավակնություն ունենալ, եթե անվիճելի լիներ մեր այն ենթադրությունը, թե հայկական լրատվամիջոցները հասարակական կարծիքի հայելին են: Բայց քանի որ այդ առումով հիմնավոր կասկածներ կան, արված եզրահանգումների ճշտությունը նույնպես հարաբերական է: Ստորեւ, երբ խոսք կլինի առանձին տպագիր ՁԼՄ-ների քաղաքական կողմնորոշումների մասին, կներկայացնենք ստացված թվերի այլընտրանքային մեկնաբանություն: Այստեղ առանձնացնում ենք հատկապես տպագիր լրատվամիջոցները, քանզի հեռուստատեսային եւ ռադիոալիքների աշխատանքում, համեմայն դեպս՝ նրանց լրատվական ծրագրերում, քաղաքական կողմնակալություններ գրեթե չեն դրսևորվում: Այդ մասին են վկայում նաև էլեկտրոնային լրատվամիջոցներում արձանագրված նվազագույն նշանային հիշատակումները: Համակրանքների №ռեռեհճեման ռեկորդային ցուցանիշ ունեն այստեղ «Այբ-Ֆե» («Ա1+» հեռուստաալիք), «Լրաբեր» («Մշակույթ» հեռուստաալիք) եւ «Լուսաբեր»)Հայաստանի ազգային ռադիո) լրատվական ծրագրերը: Առաջին դեպքում «Նոր ուղի» կուսակցության առաջնորդ Աշոտ Բլեյանը, որ ներկայումս կալանավորված է եւ հետաքննության տակ է գտնվում, երեք անգամ հիշատակվել է դրական համատեքստում, իսկ բացասականում՝ ոչ մի անգամ: Մյուս երկու դեպքերում 3-ական անգամ դրական համատեքստում է հիշատակվել Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը:

Ընդհանուր առմամբ կարելի է հավաստել, որ հայկական հեռարձակողների լրատվական թողարկումները ոչ թե քաղաքական համակրանքներով են առաջնորդվում, այլ՝ թեմայի, փաստի հրատապությանը, հիշատակված (կամ «ամբիոնի» արժանացած)

անձի հասարակական նշանակալիությանը: Պատահական չէ, որ թե՛ հիշատակումների, թե՛ տեսակետների/դիրքորոշումների տրված եթերային ժամանակի առումով դիտարկվող բոլոր յոթ կայանների լրատվական ծրագրերում էլ առաջին երկու տեղերը փոփոխակի գրավում են նախագահն ու վարչապետը: Իսկ խորհրդարանի խոսնակը հիշատակումների առումով երրորդ տեղն է գրավում յոթ ալիքներից հինգում: Եւ միայն «Սուրհանդակում» («Ար» հեռուստաալիք) եւ «Հայլուրում» (Հայաստանի ազգային հեռուստատեսություն) նահանջել է համապատասխանաբար 4-րդ եւ 5-րդ տեղերը: Ընդ որում, «Սուրհանդակում» նրանից առաջ է անցել կրթության եւ գիտության նախարար Էդուարդ Ղազարյանը (որ հասկանալի է, եթե հաշվի առնենք ՁԼՄ-ների ավանդական ուշադրությունը բուհական ընդունելության քննությունների նկատմամբ), իսկ «Հայլուրում» երկու առանցքային նախարարները՝ Վարդան Օսկանյանը (արտաքին գործերի) եւ Վաղարշակ Հարությունյանը (պաշտպանության):

Հայաստանի տպագիր լրատվամիջոցներում հակառակ միտումն է նկատվում: Նրանք հստակորեն քաղաքական ճամբարների են բաժանվում: Եթե ընտրարշավի ընթացքում նման ճամբարները մի քանիսն էին, եւ յուրաքանչյուր թերթ սատարում էր իր կուսակցությանը կամ նախընտրական դաշինքին, ապա ետընտրական առաջին ամիսներին նեղ կուսակցական շահերը նահանջեցին ետին պլան, շահերը «խոշորացան» եւ նկատվեց, որ առաջատար մամուլը երկու հիմնական ճամբարի է բաժանվում. մի կողմից՝ ներկա իշխանությունների նկատմամբ այս կամ այն չափով լոյալ, մյուս կողմից՝ ընդդիմադիր (սրանք նաեւ նախկին իշխանությունների՝ այսինքն Հայոց համազգային շարժման եւ նրանց մերձավոր կուսակցությունների ու խմբավորումների կողմնակիցներն են): Դիտարկվող թերթերից առաջին խմբում են «Հայաստանի Հանրապետութիւնը», «Ռեսպուբլիկա Արմենիան», «Ազգը», «Երկիրը», «Հայոց աշխարհը», երկրորդում՝ «Առավոտը», «Հայկական ժամանակը» (փաստորեն՝ «Օրագրի» ժառանգորդը): Թվում է, թե նման տարանջատումը ոչ մի հայտնություն էլ չի բերում, եթե հաշվի առնենք, թե ինչ քաղաքական ուժեր են կանգնած հիշատակված յուրաքանչյուր թերթի ետեւում: Սակայն ճամբարներից ամեն մեկի ներսում հետաքրքիր առանձնահատկություններ կան:

Եթե դատելու լինենք դիտարկման քանակական արդյունքներով, կտեսնենք, որ «Ռեսպուբլիկա Արմենիան» իր ուշադրությունը քաղաքական գործիչների միջեւ բաշխելիս կողմնորոշվում է նախ եւ առաջ իշխանական կառույցներում նրանց պաշտոնական դիրքով: Նախագահն ու վարչապետը, անկախ անձերից, այստեղ առաջատար են թե՛ հիշատակումների, թե՛ հայացքներին/կարծիքներին տրվող մակերեսի առումով. մինչեւ ընտրությունները դրանք Քոչարյանն ու Արմեն Դարբինյանն էին, ընտրություններից հետո վերջինիս փոխարինեց նոր վարչապետը: Մինչդեռ մյուս պաշտոնաթերթում՝ «Հայաստանի Հանրապետութիւնում», էական դեր է խաղում գործչի անձը եւ բարձրագույն ղեկավարների հանդեպ համահավասար վերաբերմունք չկա: Այստեղ Վազգեն Սարգսյանն առաջատար է ոչ միայն հիշատակումներով, նա զգալիորեն առաջ է անցել երկրորդ տեղում գտնվող Ռոբերտ Քոչարյանից նաեւ կարծիքներին տրվող թերթային մակերեսի առումով (գրեթե երեք անգամ ավելի), ինչպես նաեւ մրցակցությունից դուրս է նշանային հիշատակումների հաշվեկշռով (9 դրական եւ 0 բացասական): «Ազգը», «Հայոց աշխարհը» եւ «Երկիրը» շարունակում են առավելագույն ուշադրություն դարձնել նախագահին: Վազգեն Սարգսյանը, որի քաղաքական կշիռը ընտրություններից հետո զգալիորեն աճել է, չնայած բարելավել է իր դիրքերն այս թերթերում, այնուամենայնիվ դեռեւս զիջում է Քոչարյանին:

«Հայկական ժամանակի» եւ «Առավոտի» ընդդիմադիր լինելը որքան որ ակնհայտ է (միայն նրանց մոտ է, որ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ ՀՀԾ առաջնորդ Վանո Սիրադեղյանը նշանային հիշատակումների դրական կամ գրոյական հաշվեկշիռ ունեն, իսկ թերթային մակերեսը բավականին հաճախ է տրամադրվում նախկին ղեկավարության ներկայացուցիչների կարծիքներին), նույնքան էլ յուրօրինակ է: Նախկին նախագահին գերադասելով ներկայիս նախագահից՝ նրանք միանգամայն դրական վերաբերմունք ունեն (դատելով հիշատակումների բնույթից) ներկայիս

վարչապետի նկատմամբ: «Առավուտը» «Հայկական ժամանակից» տարբերվում է նրանով, որ առաջինը, կոնկրետ դիրքորոշում ունենալով, ձգտում է իր էջերը քաղաքական բազմազան հայացքների տրամադրել: Այս թերթում ավանդաբար առավել շատ տարածք են ստանում այն գործիչները, որոնք պատրաստակամություն են հայտնում հանդես գալ որպես հոդվածների հեղինակ: Այսպիսով դիտարկման նախորդ փուլերում մի անգամ չէ, որ առաջին տեղում է եղել 80-ականների դարաբաղյան շարժման նախածեռնողներից մեկը՝ Իգոր Մուրադյանը, իսկ հուլիս-օգոստոսին՝ Աշոտ Բլեյանը, որ հոդվածներ է ուղարկում քննչական մեկուսարանից: Մինչդեռ, այս երկու քաղաքական գործիչները վերջին տասից ավելի տարիների ընթացքում միմյանց հակոտնյա են եղել:

Երկու ճամբարների միջև քաղաքական պայքարի սրացմամբ նույնպես կարող է բացատրվել Քոչարյանի նշանային հիշատակումների հաշվեկշռի կտրուկ բարելավումը: Դիրքորոշումների բեւեռացումը հանգեցրել է այն բանին, որ առաջին ճամբարին պատկանող թերթերի քննադատության գլխավոր օբյեկտը դարձել են «Նախկինները», իսկ ներկա նախագահի նկատմամբ վերաբերմունքն ավելի մեղմ է: Իր հերթին Վազգեն Սարգսյանը երկու ճամբարների լրատվամիջոցներում էլ հիշատակումների դրական հաշվեկշիռ ունի այնքանով, որքանով որ ընդդիմադիր ճամբարը հավանաբար հրաժարվում է նրան որպես ուղղակի հակառակորդ դիտարկել՝ գերադասելով կրակը կենտրոնացնել նախագահի անձի եւ նրա՝ առավել մերձավոր գործընկերների վրա:

Հատուկ խումբ են կազմում «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա» եւ «Իրավունք» թերթերը: Նրանց դժվար է վերոհիշյալ ճամբարներից որեւէ մեկին դասել: Քննադատելով ՀՀ ներկա ղեկավարությանը՝ նրանք էլ ավելի անհանդուրժող են ՀՀԸ-ական ղեկավարների հանդեպ (դա էլ հենց միավորում է նրանց). բավական է համեմատել նշանային հիշատակումների հաշվեկշիռները: Այդուհանդերձ այս թերթերից յուրաքանչյուրն իր առանձնահատկությունն ունի: «Գոլոս Արմենիին» ավանդաբար առաջատար է նշանային (հիմնականում՝ բացասական) հիշատակումներով: Հուլիս-օգոստոսին թերթն աննախադեպ անողորմ է եղել Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ՝ 25 բացասական (ընդհանուր հիշատակումների կեսից ավելին) եւ ոչ մի դրական հիշատակում: Դարձյալ խիստ բացասական հաշվեկշիռ ունի Վանո Սիրադեղյանը (1 դրական եւ 15 բացասական): Բացի այդ, «ԳԱ»-ն դիտարկվող թերթերի եւ էլեկտրոնային լրատվամիջոցների մեջ ամենից շատն է ուշադրություն դարձնում դարաբաղյան քաղաքական գործիչներին: Առավել հաճախ հիշատակված քաղաքական 20 գործիչների շարքում են եւ Լեւոնային Դարաբաղի նախագահ Արկադի Դուկասյանը, եւ վարչապետ Անուշավան Դանիելյանը (այս նոր քաղաքական գործիչն ընդհանուր առմամբ բավականին ակտիվորեն եւ նշանային հիշատակումների դրական հաշվեկշռով ներխուժեց հայկական ՁԼՄ-ների գլխավոր հերոսների շարքը), եւ ԼՂ բանակի գլխավոր հրամանատար Սամվել Բաբայանը: «Նովոյե վրեմյան» քննադատաբար է վերաբերում նախագահին (0 դրական, 2 բացասական), բայց համեմատաբար լոյալ է վարչապետի (4 դրական, 1 բացասական) եւ ԱԺ խոսնակի նկատմամբ (2 դրական եւ 1 բացասական): Ի դեպ, «ՆՎ»-ի դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում առաջին անգամ թերթի հիմնադիր Արկադի Վարդանյանը՝ որպես հեղինակ ակտիվություն չի ցուցաբերել եւ զրկվել է հայացքների/կարծիքների տրվող տարածքի առումով առաջնությունից: «Իրավունքը», լինելով կուսակցական թերթ, այս խմբում առավել չեզոք է նշանային հիշատակումների առումով եւ մյուս երկուսից ավելի մոտ է «լոյալների» ճամբարին:

Ընդհանուր առմամբ, ինչպես երեւում է դիտարկման միացյալ աղյուսակից, նախկին (ՀՀԸ-ական) իշխանության ներկայացուցիչները տվյալ փուլում պարտություն են կրում տեղեկատվական պատերազմում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետություն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝

«ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Ծավալը՝ 4 տպ. մանուկ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 39 համար:

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 32 համար: Օգոստոսի 1-17-ը թերթը լույս չի տեսել:

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն մարմին: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 2.500 օրինակ: Գինը՝ 50 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 33 համար: Օգոստոսի 1-17-ը թերթը լույս չի տեսել:

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ «Առավոտ» թերթի խմբագրական խորհուրդ: Սովորական ծավալը՝ 4 տպ. մանուկ (A3 չափի 16 էջ): Հուլիսի 31-ի համարը լույս է տեսել 5 տպ. մանուկ ծավալով (A3 չափի 20 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 37 համար: Օգոստոսի 20-30-ը թերթը լույս չի տեսել:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Ծավալը՝ 4 տպ. մանուկ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 29 համար: Հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 16-ը թերթը լույս չի տեսել:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Տեղեկանք. «Հայկական ժամանակ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրներ՝ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցությունը եւ «Ստավորական Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպությունը: 1998թ. մարտի 30-ից թերթը դադարել է լույս տեսնել եւ վերսկսվել է 1999թ. հուլիսի 13-ից: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 2.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 31 համար: Օգոստոսի 15-23-ը թերթը լույս չի տեսել:

«ԳՈՒՆՍ ԱՐՄԵՆԻԻ»

Տեղեկանք. «Գուլոս Արմենիի» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ խմբագրության աշխատանքային կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 27 համար, որից 9 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ):

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ»

Տեղեկանք. «Նովոյե վրեմյա» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1992թ.: Հիմնադիր՝ «21-րդ դար» միջազգային անկախ ընկերակցություն: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ, «Էլիտարնայա գազետա» ներդիրը չի հաշվարկվում): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 19 համար, որից 1 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ) եւ 1 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ): Հուլիսի 4-19-ը թերթը լույս չի տեսել:

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք» - լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Հայտարարված տպաքանակը՝ 10.000-18.000 օրինակ: Գինը՝ 60-90 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 18 համար. 3 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ), 6 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 12 էջ) եւ 9 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ):

«ՀԱՅԼՈՒՐ»

Տեղեկանք. «Հայլուր» - Հայաստանի ազգային հեռուստատեսության լրատվական ծրագիր: Շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) եթեր է թողարկվում օրական 3 անգամ, շաբաթ օրերին՝ 4 անգամ: Դիտարկվել են 21.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 53 թողարկում:

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 9 անգամ: Դիտարկվել են 21.45-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 53 թողարկում:

«ՍՈՒՐՅԱՆԴԱԿ»

Տեղեկանք. «Սուրհանդակ» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 4 անգամ: Դիտարկվել են 23.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 53 թողարկում:

«ԺԱՄ»

Տեղեկանք. «Ժամ» - «Արմենիա» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 4 անգամ: Դիտարկվել են 19.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

«ԼՈՒՐԵՐ» («ԱՅԳ»)

Տեղեկանք. «Լուրեր» - «Այգ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 5 անգամ: Դիտարկվել են 22.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

«ԼՐԱՔԵՐ»

Տեղեկանք. «Լրաքեր» - «Մշակույթ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվում է օրական 2 անգամ: Դիտարկվել են 20.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 53 թողարկում:

«ԼՈՒՐԵՐ» (ՀԱՌ)

Տեղեկանք. «Լուրեր» - Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Շաբաթը հինգ օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվում է օրական 16 անգամ, շաբաթ օրերին՝ 11 անգամ, կիրակի օրերին՝ 8 անգամ: Դիտարկվել են 23.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1 սեպտեմբերի - 31 հոկտեմբերի, 1999

Սեպտեմբեր-հոկտեմբերին ԵՄԱ դիտարկող խումբը շարունակել է առաջատար հայկական լրատվամիջոցների ուսումնասիրությունը: Հետազոտության առարկան այս կան այն լրատվամիջոցի կողմից հայ քաղաքական գործիչների եւ քաղաքական կուսակցությունների նկատմամբ ուշադրության բաշխումն էր: Ուսումնասիրվել են 10 թերթ, ինչպես նաեւ 6 հեռուստատեսային եւ 1 ռադիոկայանների գլխավոր լրատվական թողարկումները:

Դիտարկման արդյունքները հաստատում են այն միտքը, որը Հայաստանում կրկնում են գրեթե բոլորը. ՀՀ խորհրդարանում հոկտեմբերի 27-ի ահաբեկչությանը նախորդած ժամանակաշրջանում երկրի քաղաքական դաշտում անդորր էր տիրում: Այս տրամադրությունը զգալիորեն փոխանցվել էր նաեւ զանգվածային լրատվամիջոցներին: Հայկական ՁԼՄ-ներն աննախադեպ համերաշխ էին այն հարցում, թե քաղաքական գործիչներից ո՞վ է առավել ուշադրության ու բարեհաճության արժանի:

Քաղաքական գործիչների հիշատակումների աղյուսակները լրատվամիջոցների մեծ մասի համար բավականին միօրինակ են: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս պայմանական մի լրատվամիջոց դուրս բերել, որտեղ պատկերն այսպիսի տեսք կունենա: Անվիճելի առաջատարներն են երկրի նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ սպանված վարչապետ Վազգեն Սարգսյանը: Առաջին եւ երկրորդ տեղերի տարբերությունն աննշան է: Նրանցից մի քիչ էտ է մնում Ազգային ժողովի սպանված նախագահ Կարեն Դեմիրճյանը: Այսինքն՝ երկրի բարձրագույն ղեկավարներն առավելագույն ուշադրության են արժանացել գրեթե բոլոր առաջատար ՁԼՄ-ներում:

Այդուհանդերձ հիշատակումների բնույթի առումով (դրական/բացասական) Քոչարյանի նկատմամբ վերաբերմունքը պակաս բարեհաճ է, քան Սարգսյանի ու Դեմիրճյանի նկատմամբ, թեեւ նախագահին այս անգամ դիտարկման նախորդ փուլերի համար սովորական քննադատական զանգվածային հարձակման չէր ենթարկվում:

1998թ. մայիսից ի վեր երրորդ անգամ է պատահում, որ Քոչարյանը երկամսյակի արդյունքներով նշանային հիշատակումների դրական հաշվեկշիռ ունի:

Հիշատակումների քանակով սեպտեմբեր-հոկտեմբերին չորրորդ տեղում է ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը: Առաջին եռյակից նրան տարբերում է այն, որ գրեթե լիովին բացակայում են նշանային հիշատակումները:

Առաջատար պետական գործիչների այսպիսի դիրքավորումը միանգամայն օրինաչափ է թվում: Նրանցից յուրաքանչյուրը ակտիվություն է հանդես բերել համապատասխան ոլորտում: Նախագահը մասնակցել է բազմաթիվ հանդիպումների, այդ թվում նաեւ՝ Ադրբեջանի նախագահ Յեյդար Ալիևի հետ առանց միջնորդների նախիջեւանյան հանդիպմանը, ուղեւորությունների, արարողակարգային հանդիպումների: Վարչապետն ակտիվ բանակցություններ է վարել տնտեսական, այդ թվում նաեւ բյուջետային հարցերով: Խորհրդարանի նախագահը հեշտ ու արագ մտավ իր համար նոր՝ օրենսդրական մարմնի ղեկավարի դերի մեջ: (Ընդ որում, հարկ կա նշելու, որ երեք առաջնորդների հիշատակումների զգալի մասը հոկտեմբերի 27-ի ողբերգությունից հետո ընկած ժամանակում է եղել:) Արտաքին գործերի նախարարն ուշադրության կենտրոնում էր ԵԱՀԿ ստամբուլյան գագաթաժողովի նախապատրաստման առիթով:

Այս քառյակին աղյուսակում հետեւում են նախկին իշխանությունները խորհրդանշող երկու քաղաքական դեմք. նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ Հայոց համազգային շարժման վարչության նախագահ Վանո Սիրադեղյանը: Լրատվամիջոցների մի մասում պահպանվում է նրանց նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքը. նրանք առավել հաճախ են հիշատակվել բացասական համատեքստում, եւ նշանային հիշատակումների ամենից անբարենպաստ հաշվեկշիռն ունեն:

Լրատվամիջոցների կողմից քաղաքական գործիչներին՝ իրենց կարծիքները/հայացքներն արտահայտելու համար տրամադրված թերթային մակերեսի/եթերային ժամանակի ծավալի առումով նույնպես մրցակցությունից դուրս են Ռոբերտ Քոչարյանն ու Վազգեն Սարգսյանը: Սակայն, ի տարբերություն հիշատակումների աղյուսակի, սույն ցուցանիշի առումով հայկական առաջատար լրատվամիջոցներն այնքան էլ միակարծիք չեն: Նախագահից եւ վարչապետից բացի ոչ ոք այստեղ կայուն տեղ չի ստացել, այդ թվում նաեւ Կարեն Դեմիրճյանը՝ թերեւս հրապարակային ելույթներ ու կարծիքներ արտահայտելու նկատմամբ ձգտման պակասի հետեւանքով:

Ներկայացվածը ոչ միայն համահավաք պատկեր է, այլ նաեւ՝ բնութագրական, որ այս կամ այն կարգի շեղումներով կրկնվում է գրեթե բոլոր ՁԼՄ-ներում:

Միեւնույն ժամանակ հետաքրքրական է ուշադրության առնել ոչ միայն առանձին լրատվամիջոցներում հայ առաջատար քաղաքական գործիչների գործունեության լուսաբանման նմանությունները, այլ նաեւ որոշ տարբերություններն ու առանձնահատկությունները:

Միայն «Իրավունք» թերթում է Վազգեն Սարգսյանը հիշատակումների քանակով գերազանցել Ռոբերտ Քոչարյանին: Դիտարկվող 17 լրատվամիջոցներից 5-ում Կարեն Դեմիրճյանը հիշատակումների առումով զիջել է երրորդ տեղը. «Գոլոս Արմենիի»-ում՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին, իսկ «Ազգ» թերթում, ինչպես նաեւ «Ժամ» («Արմենիա» հեռուստաընկերություն), «Լուրեր» («Այգ») եւ «Լրաբեր» («Մշակույթ») լրատվական ծրագրերում՝ Վարդան Օսկանյանին: Միայն «Գոլոս Արմենիի» թերթում է, որ

առաջատարների եռյակը՝ Քոչարյան, Սարգսյան, Դեմիրճյան, բոլորն էլ նշանային հիշատակումների բացասական հաշվեկշիռ ունեն։ Նախագահը բացասական հաշվեկշիռ ունի նաեւ «Իրավունքում» եւ «Հայկական ժամանակում»։ «Առավոտ» թերթում նախկին իշխանությունները խորհրդանշող քաղաքական գործիչները մոտավորապես նույնքան բարեհաճություն են վայելում (դատելով նշանային հիշատակումների հաշվեկշիռը), ինչ եւ նրանց հաջորդները, իսկ «Հայկական ժամանակում» այս ցուցանիշի առումով դեռ մի քիչ էլ առավելություն ունեն։

Թերթերից չորսում հայացքների/կարծիքների արտացոլման համար տրամադրված թերթային մակերեսի առումով առաջատար են այն քաղաքական գործիչները, որոնք առաջին տեղի են արժանացել ոչ թե այն պատճառով, որ լրագրողները նրանց ելույթներն ու կարծիքներն են մեջբերել, այլ այն բանի շնորհիվ, որ իրենք են հոդվածներ գրում։ Դա 80-ականների դարաբաղյան շարժման նախածեռնողներից մեկը՝ Իգոր Մուրադյանն է «Հայոց աշխարհ» եւ «Գոլոս Արմենիի» թերթերում, «21-րդ դար» ընկերակցության նախագահ Արկադի Վարդանյանը՝ «Նովոյե վրեմյա»-ում եւ «Նոր ուղի» կուսակցության նախագահ Աշոտ Բլեյանը՝ «Առավոտում»։ «Ռեսպուբլիկա Արմենիան» մյուսներից ավելի շատ է ուշադրություն դարձնում դարաբաղյան կարգավորման շուրջ բանակցություններին, եւ պատահական չէ, որ այստեղ կարծիքների/հայացքների տրված մակերեսի առումով նախագահին ու վարչապետին հետեւում են երկու արտգործնախարարները՝ Լեռնային Ղարաբաղի՝ Նաիրա Մելքունյանը եւ Հայաստանի՝ Վարդան Օսկանյանը։

Ընդհանուր առմամբ դիտարկվող տպագիր լրատվամիջոցները կարելի է պայմանական հինգ խմբի բաժանել։ «Երկիրը», «Հայոց աշխարհը» եւ «Ազգը» առաջվա պես ներկա իշխանությունների կողմնակիցներն են եւ նախկինների քննադատները։ «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթերը, բնականաբար, նույնպես պաշտպանում են ներկա իշխանություններին, բայց, այդուհանդերձ, նախկիններին քննադատելուց ձեռնպահ են մնում։ «Նովոյե վրեմյան» հիմնականում չեզոք է «Ներկաների» եւ բացասաբար է տրամադրված «Նախկինների» նկատմամբ։ «Իրավունքն» ու «Գոլոս Արմենիին» քննադատաբար են տրամադրված թե՛ «Նախկինների» (ավելի շատ), թե՛ «Ներկաների» (ավելի քիչ) նկատմամբ։ Ընդ որում, «Իրավունքն» ավելի զուսպ է։ «Առավոտն» ու «Հայկական ժամանակը» ընդհանուր առմամբ պահպանում են համակրանքը «Նախկինների» նկատմամբ, բայց առաջինը, այդուհանդերձ, առավելագույնս չեզոքության է ձգտում, իսկ երկրորդը՝ «Ներկաների» համեմատ բացահայտ առավելություն է տալիս «Նախկիններին»։

Հեռուստատեսային եւ ռադիոալիքների լրատվական ծրագրերը պահպանում են վերջին ամիսներին ձեւավորված ավանդույթը, այն է՝ կողմնորոշվել լուսաբանվող իրադարձությունների հրատապությամբ, ոչ թե իրենց քաղաքական համակրանքներով։ Օրինաչափ է, որ ինչպես հիշատակումների, այնպես էլ եթերային ժամանակի բաշխման առումով միաբանությունն այստեղ ավելի նկատելի է, քան տպագիր լրատվամիջոցներում։ Դիտարկվող բոլոր 7 ծրագրերում ընդամենը 3 բացասական հիշատակում է եղել, իսկ դրական հիշատակման արժանացել են միայն երկրի երեք բարձրագույն ղեկավարները (նախագահը եւ սպանված վարչապետն ու խորհրդարանի ղեկավարը), ինչպես նաեւ ահաբեկչության զոհ դարձած մյուս քաղաքական գործիչները (այդ թվում՝ մահախոսականների հրապարակման ժամանակ)։

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետություն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ)։ Հիմնադրվել է 1990թ.։ Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ։ Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ)։

Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար, որից 1 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ), 1 համար՝ 6 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 12 էջ):

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար. 22 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ) եւ 22 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ): «Սվորթոդնայա Գրուզիա» (30.09.1999) եւ շաբաթ օրերին լույս տեսնող «Ապոգեյ» ներդիրները չեն հաշվարկվել:

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար, որից 1 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 12 էջ) եւ 1 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ):

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն մարմին: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 2.500 օրինակ: Գինը՝ 50 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 42 համար:

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ «Առավոտ» թերթի խմբագրական խորհուրդ: Հայտարարված տպաքանակը՝ 5.000 - 6.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար. 20 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ) եւ 23 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ):

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Ծավալը՝ 4 տպ. մամուլ (A3 չափի 16 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 3.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Տեղեկանք. «Հայկական ժամանակ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրներ՝ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցություն եւ «Մտավորական Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպություն: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 2.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 38 համար:

«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻ»

Տեղեկանք. «Գոլոս Արմենի» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ խմբագրության աշխատանքային կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 26 համար, որից 9 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ):

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ»

Տեղեկանք. «Նովոյե վրեմյա» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1992թ.: Հիմնադիր՝ «21-րդ դար» միջազգային անկախ ընկերակցություն: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ, «Էլիտարնայա գազետա» ներդիրը չի հաշվարկվում): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 25 համար, որից 1 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ):

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք» - լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Հայտարարված տպաքանակը՝ 10.000-17.000 օրինակ: Գինը՝ 60-90 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 17 համար, 1 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ), 8 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 12 էջ) եւ 8 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ):

«ՀԱՅԼՈՒՐ»

Տեղեկանք. «Հայլուր» - Հայաստանի ազգային հեռուստատեսության լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) եթեր է թողարկվել օրական 3 անգամ: Դիտարկվել են 21.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվել է օրական 9 անգամ: Դիտարկվել են 01.45-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ»

Տեղեկանք. «Սուրհանդակ» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվել է օրական 4 անգամ: Դիտարկվել են 23.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

«ԺԱՍ»

Տեղեկանք. «Ժամ» - «Արմենիա» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվել է օրական 4 անգամ: Դիտարկվել են 21.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում տեխնիկական պատճառներով 51 թողարկումից դիտարկվել է 48-ը:

«ԼՈՒՐԵՐ» («ԱՅԳ»)

Տեղեկանք. «Լուրեր» - «Այգ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվել է օրական 5 անգամ: Դիտարկվել են 22.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

«ԼՐԱՔԵՐ»

Տեղեկանք. «Լրաքեր» - «Մշակույթ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվել է օրական 2 անգամ: Դիտարկվել են 20.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

«ԼՈՒՐԵՐ» (ՅԱՌ)

Տեղեկանք. «Լուրեր» - Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Շաբաթը հինգ օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվել է օրական 16 անգամ, շաբաթ օրերին՝ 11 անգամ, կիրակի օրերին՝ 8 անգամ: Դիտարկվել են 23.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 50 թողարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԼՄ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ՀԵՏՈ

1 նոյեմբերի - 31 դեկտեմբերի, 1999

ՀԱՅԿԱԿԱՆ լրատվամիջոցների դիտարկումը 1999թ. նոյեմբեր-դեկտեմբերին նախ եւ առաջ հետաքրիր էր այն տեսակետից, թե հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունից ու պետության ճանաչված առաջնորդների մահից հետո մամուլի ուշադրությունն առաջատար քաղաքական գործիչների նկատմամբ ի՞նչ չափով էր վերաբաշխվել:

Պատկերն ընդհանուր առմամբ էական փոփոխություններ չէր կրել. վարչապետ Արամ Սարգսյանը եւ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը դիտարկման աղյուսակներում գրեթե նույն տեղերը զբաղեցրին, ինչ ահաբեկիչների զոհ դարձած իրենց նախորդները՝ Վազգեն Սարգսյանն ու Կարեն Դեմիրճյանը: Նախորդ երկամսյակների նման այս անգամ էլ նախկին իշխանություններին մարմնավորող քաղաքական գործիչները՝ Հայոց համազգային շարժման նախագահ Վանո Սիրադեղյանը եւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, բոլորից հաճախ են հիշատակվել բացասական համատեքստում: Հիշատակումների առումով առաջատարների շարքում իր կայուն տեղն ունի ՀՀ արտաքին գործերի նախագահ Վարդան Օսկանյանը, ընդ որում, ի տարբերություն աղյուսակի վերին հորիզոնականներում գտնվող իր հարեւանների՝ նա նվազագույն նշանային (դրական/բացասական) հիշատակումներ ունի:

Այդուհանդերձ, նոյեմբեր-դեկտեմբերի դիտարկման արդյունքներում որոշ մասնավոր բնույթի փոփոխություններ են եղել: Հակառակ տարածված այն կարծիքին, թե նախագահ Ռոբերտ Քոչարյանի դիրքերը թուլացել են, եւ որ նա լուրջ քաղաքական հենարան չունի, ՁԼՄ-ներում հիշատակումների քանակով նա ոչ միայն պահպանել է իր առաջատար դիրքը, այլ նաեւ ամրապնդել այն: Ընդ որում, Քոչարյանի նշանային հիշատակումների ընդհանուր հաշվեկշիռը դրական է, մի բան, որ դիտարկման նախորդ փուլերի արդյունքներում այնքան էլ հաճախ չէր պատահում: Տարեվերջյան սուր քաղաքական իրավիճակում հատկապես ակնհայտորեն դրսևորվեցին տարբեր ՁԼՄ-ների՝ միմյանցից

տրամագծորեն հակառակ վերաբերմունքը նախագահի նկատմամբ: Իրենց որպես նախագահի տեղեկատվական հեռարան դրսևորեցին նախ եւ առաջ «Ռեսպուբլիկա Արմենիան» (նշանային հիշատակումների հաշվեկշիռն է՝ 17 դրական, 2 բացասական) եւ «Հայոց աշխարհը» (13-3), ինչպես նաեւ Ազգային հեռուստատեսությունը՝ ի դեմս դիտարկվող «Հայլուր» լրատվական ծրագրի (5-0): Նախագահի դեմ ուղղված գլխավոր տեղեկատվական զեմքը դարձյալ մնում է «Հայկական ժամանակ» թերթը (նշանային հիշատակումների հաշվեկշիռը՝ 1-14): Հեռուստաալիքներից Քոչարյանն առավել անբարենպաստ լույսի տակ է ներկայացվել «Ա1+»-ում («Այբ-Ֆե» լրատվական ծրագրում՝ 0-3):

Արամ Սարգսյանը նախագահից շատ ավելի է ետ մնացել, քան ետ էր մնում նրա եղբայրն ու նախորդը կառավարության ղեկավարի պաշտոնում: Սակայն Վազգեն Սարգսյանի պես ներկա վարչապետն էլ Քոչարյանին գերազանցում է նշանային հիշատակումների միագումար հաշվեկշռով: Տարբեր ՁԼՄ-ների վերաբերմունքը Ա.Սարգսյանի նկատմամբ նախագահի համեմատ ավելի համաչափ է: Նոյեմբեր-դեկտեմբերին դիտարկվող 18 լրատվամիջոցներից 8-ում վարչապետը նշանային հիշատակումների չեզոք կամ նվազագույն բացասական հաշվեկշիռ է ունեցել: Մնացած 10-ում նա, չնայած համեստ, բայց, այնուամենայնիվ, դրական հաշվեկշիռ է ունեցել, այդ թվում նաեւ ավանդաբար ընդդիմադրի համարում ունեցող «Հայկական ժամանակ» եւ «Առավոտ» թերթերում:

Խորհրդարանի նոր խոսնակ Արմեն Խաչատրյանը լրատվամիջոցներում հեռու է իր նախորդի՝ Կարեն Դեմիրճյանի պես հնայիչ երեւալուց: Նա զգալիորեն ետ է մնում նախագահից ու վարչապետից հիշատակումների եւ ընդհանուր թվով, եւ նշանայինների հաշվեկշռով (4-6): Թեեւ թե՛ Խաչատրյանը, թե՛ Դեմիրճյանը օրենսդիր իշխանության ղեկավար էին առաջադրվել նույն քաղաքական կուսակցության, խորհրդարանական նույն խմբակցության կողմից, սակայն նրանց քաղաքական կշիռն ու լրատվամիջոցների վերաբերմունքը նրանց նկատմամբ էականորեն տարբերվում են:

ՔԱՂԱՔԱԿԱՆ գործիչներին նոյեմբեր-դեկտեմբերին տրամադրված մակերեսի առումով ուսումնասիրվող թերթերի մեծ մասը, պայմանականորեն ասած, բացահայտ «կուսակցական» մոտեցում են հանդես բերել, այսինքն՝ նրանց ամբիոնից, որպես կանոն, առավել ակտիվորեն են օգտվել այն քաղաքական գործիչները կամ քաղաքական ուժերի ներկայացուցիչները, ում շահերը պաշտպանում են այդ թերթերը: «Առավոտում» բոլորից անհամեմատ առաջ են անցել Վիգեն Խաչատրյանը եւ Դավիթ Շահնազարյանը, որոնք ազատական կողմնորոշման կուսակցություններ են ղեկավարում եւ խիստ ընդդիմադիր են նախագահ Քոչարյանին: «Երկիրը» ամենաշատ մակերես տրամադրել է ՀՀԴ առաջնորդ Վահան Հովհաննիսյանին (մյուս դաշնակցականամետ թերթում՝ «Հայոց աշխարհում», նա այդ ցուցանիշով երրորդն է), «Նորաթերթն» ու «Նովոյե վրեմյա»-ն՝ «21-րդ դար» ընկերակցության նախագահ Արկադի Վարդանյանին՝ իրենց թերթերի հովանավորին, «Իրավունքը»՝ «Իրավունք եւ միաբանություն» խորհրդարանական խմբակցության առաջնորդներ Արտաշես Գեղամյանին եւ Հրանտ Խաչատրյանին: «Ազգում» տրամադրված մակերեսով երրորդ տեղում է հայտնվել թերթի հիմնադիր-կուսակցության՝ ՀՈԱԿ-ի առաջնորդ Ռուբեն Միրզախանյանը, մի բան, որն արդեն հատկանշական է, քանի որ ուսումնասիրված ժամանակաշրջանում ընդհանուր առմամբ այս քաղաքական գործիչն ակտիվությամբ աչքի չի ընկել: (Իսկ «Ազգի» ամբիոնից լավագույնս է օգտվել արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, որի հանդեպ թերթն ավանդաբար բարեհաճ է):

Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ Վիգեն Խաչատրյանը, Դավիթ Շահնազարյանը եւ Արկադի Վարդանյանն իրենց քառակուսի սանտիմետրերը հիմնականում սեփական հողվածների հաշվին են վաստակել: Նշված մյուս բոլոր դեպքերում քաղաքական գործիչների հետ հարցազրույցներ են վարել, մեջբերել կամ որել է այլ ձեւով վերարտադրել նրանց հայացքներն ու կարծիքները: Ի դեպ, «Հայոց աշխարհում» նույնպես կարծիքներ

րին տրամադրված մակերեսի առունով առաջատար քաղաքական գործիչը՝ Իգոր Մուրադյանը, ակտիվորեն է հանդես եկել սեփական հողվածներով:

Պաշտոնաթերթեր «Հայաստանի Հանրապետությունը» եւ «Ռեսպուբլիկա Արմենիան» բոլորից ավելի հաճախ են իրենց ամբիոնը տրամադրել երկրի ղեկավարության իշխանական եռյակին՝ նախագահին, վարչապետին եւ ԱԺ նախագահին: Դիտարկված մյուս թերթերից այս ցուցանիշի՝ կարծիքներին ու հայացքներին տրամադրված մակերեսի առունով իրենց «կուսակցական» հակումները չեն դրսևորել միայն «Հայկական ժամանակն» ու «Գոլոս Արմենիի»-ն, թեև նրանց հակումների մասին բացահայտ խոսում է մեկ այլ ցուցանիշ՝ նշանային հիշատակումները (առաջինի հականախագահական ուղղվածությունը եւ երկրորդի անփոփոխ անհանդուրժողականությունը նախորդ իշխանությունների նկատմամբ):

Այս պատկերը վկայում է հոկտեմբերի 27-ից հետո ներքաղաքական պայքարի կտրուկ սրացման եւ այդ պայքարում ՋԼՄ-ների նպատակասլաց օգտագործման մասին: Յուրաքանչյուր կողմը ձգտում է այս իրավիճակում առավելագույնս համախմբել իր տեղեկատվական-քարոզչական հնարավորությունները:

Հեռուստատեսային եւ ռադիոէթերում, ավելի ճիշտ՝ նրանց լրատվական ծրագրերում, ինչպես բազմիցս նշել ենք արդեն դիտարկման նախորդ հաշվետվություններում, քաղաքական բացահայտ հակումներն ավելի պակաս են դրսևորվում, քան տպագիր լրատվամիջոցներում: Պաշտոնական մամուլի նման էլեկտրոնային լրատվամիջոցներն էլ հայացքների/կարծիքների արտահայտման համար առավելագույն եթերային ժամանակ են տրամադրել նրանց, ովքեր պաշտոնի բերումով առավել ակտիվ են քաղաքական ասպարեզում՝ Ռոբերտ Քոչարյանին, Արամ Սարգսյանին եւ Արմեն Խաչատրյանին:

Միակ բացառությունը «Պրոմեթեոս» հեռուստաալիքի «Լուրեր» ծրագիրն էր, որտեղ եթերային առաջատար է դարձել «Միասնություն» խորհրդարանական խմբակցության առաջնորդ Անդրանիկ Մարգարյանը: Մինչդեռ այս պարագայում էլ «կուսակցական» մոտեցման դրսևորում տեսնելը հապճեպ եզրահանգում կլիներ, քանի որ այս քաղաքական գործիչը վայելում է գրեթե բոլոր լրատվամիջոցների ուշադրությունը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետություն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6.000 օրինակ: Գինը՝ 75 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար, որից 1 համար՝ 5 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 10 էջ):

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 43 համար: Շաբաթ օրերին լույս տեսնող «Ապոգեյ» հավելվածը եւ բանկային հավելվածը (04.12.99թ.) չեն հաշվարկվել:

«ԱԶԳ»

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 40 համար, որից 1 համար՝ 4 տպ. մանուկ ծավալով (A3 չափի 16 էջ):

«ԵՐԿԻՐ»

Տեղեկանք. «Երկիր» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ ՀՀԴ Հայաստանի Գերագույն մարմին: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 2.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 36 համար:

«ԱՌԱՎՈՏ»

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ «Առավոտ» թերթի խմբագրական խորհուրդ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 40 համար, որից 5-ը՝ 4 տպ. մանուկ ծավալով (A3 չափի 16 էջ):

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը մասնավոր անձ է: Հայտարարված տպաքանակը՝ 3.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 42 համար. 30 համար՝ 2 տպ. մանուկ ծավալով (A3 չափի 8 էջ) եւ 12 համար՝ 4 տպ. մանուկ ծավալով (A3 չափի 16 էջ):

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Տեղեկանք. «Հայկական ժամանակ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրներ՝ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցություն եւ «Ստավորական Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպություն: Ծավալը՝ 2 տպ. մանուկ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 2.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 39 համար:

«ՆՈՐԱԹԵՐԹ»

Տեղեկանք. «Նորաթերթ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1999թ.: Հիմնադիր՝ «Նորաթերթ» ՍՊԸ: Հայտարարված տպաքանակը՝ 5.575 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 44 համար. 36 համար՝ 4 տպ. մանուկ ծավալով (A3 չափի 16 էջ) եւ 8 համար՝ 6 տպ. մանուկ ծավալով (A3 չափի 24 էջ):

«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ»

Տեղեկանք. «Գոլոս Արմենիի» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ խմբագրության աշխատանքային կոլեկտիվ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մանուկ (A2 չափի 4 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5230 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 25 համար, որից 8 համար՝ 3 տպ. մանուկ ծավալով (A2 չափի 6 էջ):

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ»

Տեղեկանք. «Նովոյե վրեմյա» - լույս է տեսնում շաբաթը 3 անգամ: Հիմնադրվել է 1992թ.: Հիմնադիր՝ «21-րդ դար» միջազգային անկախ ընկերակցություն: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ, «Էլիտարնայա գազետա» ներդիրը չի հաշվարկվում): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 80 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 24 համար, որից 1 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ):

«ԻՐԱՎՈՒՆՔ»

Տեղեկանք. «Իրավունք» - լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: Հիմնադրվել է 1989թ.: Հիմնադիր՝ «Սահմանադրական իրավունք» միություն: Հայտարարված տպաքանակը՝ 10.000-17.000 օրինակ: Գինը՝ 60-90 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 17 համար, 8 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ) եւ 9 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 12 էջ):

«ՀԱՅԼՈՒՐ»

Տեղեկանք. «Հայլուր» - Հայաստանի ազգային հեռուստատեսության լրատվական ծրագիր: Նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 18-ը եթեր է թողարկվել շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) օրական 3 անգամ: Դեկտեմբերի 20-ից եթեր է թողարկվել շաբաթը 5 օր (երկուշաբթի-ուրբաթ) օրական 5 անգամ, շաբաթ օրերին՝ 4 անգամ: Դիտարկվել են 21.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 53 թողարկում:

«ԱՅԲ-ՖԵ»

Տեղեկանք. «Այբ-Ֆե» - «Ա1+» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվել է օրական 9 անգամ: Դիտարկվել են 01.45-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 50 թողարկում:

«ՍՈՒՐՉԱՆԴԱԿ»

Տեղեկանք. «Սուրհանդակ» - «ԱՐ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվել է օրական 4 անգամ: Դիտարկվել են 23.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

«ԺԱՄ»

Տեղեկանք. «Ժամ» - «Արմենիա» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Թողարկվել է մինչեւ դեկտեմբերի 25-ը, շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) օրական 4 անգամ: Դիտարկվել են 19.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 48 թողարկում:

«ԼՈՒՐԵՐ» («ԱՅԳ»)

Տեղեկանք. «Լուրեր» - «Այգ» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Թողարկվել է մինչեւ նոյեմբերի 30-ը, շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ), օրական 5 անգամ: Դիտարկվել են 22.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 29 թողարկում:

«ԼՈՒՐԵՐ» («ՊՐՈՍԵԹԵՄ»)

Տեղեկանք. «Լուրեր» - «Պրոմթեբես» հեռուստաալիքի լրատվական ծրագիր: Շաբաթը 6 օր (երկուշաբթի-շաբաթ) թողարկվել է օրական 2 անգամ: Դիտարկվել են 20.30-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 53 թողարկում:

«ԼՈՒՐԵՐ» (ՀԱՌ)

Տեղեկանք. «Լուրեր» - Հայաստանի ազգային ռադիոյի լրատվական ծրագիր: Շաբաթը հինգ օր (երկուշաբթի-ուրբաթ) թողարկվել է օրական 16 անգամ, շաբաթ օրերին՝ 11 անգամ, կիրակի օրերին՝ 8 անգամ: Դիտարկվել են 23.00-ի թողարկումները: Դիտարկված ժամանակամիջոցում եղել է 52 թողարկում:

ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1 հունվարի - 31 դեկտեմբերի, 1999

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ՝ 1999թ. ամփոփիչ աղյուսակներն ուսումնասիրելիս պետք է նկատի առնել, որ այստեղ ընդգրկված են միայն այն քաղաքական գործիչների տվյալները, որոնք ցուցակներում են եղել դիտարկման բոլոր 12 ամիսների ընթացքում: Մասնավորապես այդ աղյուսակներում չեն ընդգրկվել Վազգեն Սարգսյանի, Կարեն Դեմիրճյանի եւ հոկտեմբերի 27-ին կյանքից հեռացած մյուս հայ առաջատար քաղաքական գործիչների ցուցանիշները:

Նախկին վարչապետի եւ խորհրդարանի նախկին խոսնակի բացակայության պայմաններում աղյուսակներում գլխավոր գործող անձինք են դարձել նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀԾ նախագահ Վանո Սիրադեղյանը եւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ընդ որում, Քոչարյանը տարվա ընթացքում դիտարկման մյուս գործող անձանց համեմատ հիշատակումների քանակով հսկայական առավելություն է ամբարել:

Քոչարյանն անվերապահ առաջատար է նաեւ դրական համատեքստում հիշատակումների առումով: Սակայն այս առաջատարությունն այնքան էլ լավատեսական չէ, քանի որ արդյունք է հիշատակումների այնպիսի ընդհանուր քանակի, որն անհամեմատելի է մյուս քաղաքական գործիչների հետ (193 դրական հիշատակում՝ 10.749-ից): Թե՛ նախագահը, թե՛ այս ցուցանիշով աղյուսակում նրանից հետո եկող ութ քաղաքական գործիչները նշանային հիշատակումների բացասական հաշվեկշիռ ունեն:

ԶԼՄ-ներն ընդհանուր առմամբ բավականին քննադատաբար են մոտենում հայ առաջատար քաղաքական գործիչներին: Ամփոփիչ աղյուսակում ընդգրկված գործիչների մեկ երրորդն է միայն (33-ից 11-ը), որ նշանային հիշատակումների դրական հաշվեկշիռ ունի: Ընդ որում՝ ամենաբարենպաստ հաշվեկշիռ ունի Երեւանի նախկին քաղաքապետ եւ ներքին գործերի նախկին նախարար Սուրեն Աբրահամյանը (+23), իսկ ամենաանբարենպաստը Վանո Սիրադեղյանին է (-575): Այս դժվար համադրելի թվերը մի անգամ եւս վկայում են, թե քաղաքական լրատվության մեջ ինչ մեծ տեղ է գրավում բացասական համատեքստը: ԶԼՄ-ներն առավել քննադատաբար էին տրամադրված նախկին իշխանությունները խորհրդանշող քաղաքական գործիչների՝ Սիրադեղյանի եւ Տեր-Պետրոսյանի նկատմամբ: Ավելի քան չորս անգամ պակաս հիշատակումներ ունենալու պարագայում բացասական հիշատակումների քանակով նրանք երկուսն էլ գերազանցել են Քոչարյանին: Եթե վերջինիս մոտ դրական եւ բացասական հիշատակումների հարաբերությունը մոտավորապես 1:2 է, ապա Սիրադեղյանի ու Տեր-Պետրոսյանի մոտ՝ 1:13 (˘):

Հետաքրքրական է, որ ԶԼՄ-ների առավել աչառու վերաբերմունքին է արժանացել «Նոր ուղի» կուսակցության՝ դատաքննության մեջ գտնվող առաջնորդ Աշոտ Բլեյանը:

նրա 668 հիշատակումներից 159-ը նշանային են: Ընդհանուր հիշատակումների քանակով 18-րդ տեղում գտնվող Բլեյանը դրական հիշատակումների աղյուսակում 3-րդն է (44), իսկ բացասականում՝ 5-րդը (115):

Արդեն բազմիցս նշել ենք այն մասին, որ նախ եւ առաջ տպագիր լրատվամիջոցներին են յուրահատուկ ի վնաս տեղեկատվական հագեցվածության գնահատումը եւ ընդգծված կողմնորոշումը դեպի որոշակի քաղաքական ուժեր: Այստեղ նշանային հիշատակումներն ավելի շատ են, քան էլեկտրոնայիններում: Վերջիններս ավելի շատ են հակված անաչառության, իսկ իրադարձությունների եւ քաղաքական գործիչների գործունեության լուսաբանմանը նրանց մոտեցումը համապատասխանում է վերջիններիս հասարակական արժեքավորությանը: Այդուհանդերձ, եթե դիտարկման առանձին երկամսյա շրջանները հեռարձակող լրատվական ծրագրերին համակրանքներ ու հակակրանքներ ունենալու մեջ կասկածելու գրեթե ոչ մի հիմք չեն տալիս, ապա քաղաքական հիշատակների տարրերը տարվա կտրվածքով այստեղ էլ են երեւան գալիս: Ստորեւ ներկայացված են որոշ լրատվամիջոցների համառոտ բնութագրերն այդ տեսանկյունից:

«Հայլուր» լրատվական ծրագրում (ՀԱՀ) բոլոր մյուս էլեկտրոնային լրատվամիջոցների համեմատ նշանային հիշատակումների ամենաբարենպաստ հաշվեկշիռն ունի Ռոբերտ Քոչարյանը (10-4):

«Այբ-Ֆե»-ում («Ա1+» հեռուստաալիք) նախագահը խիստ բացասական հաշվեկշիռ ունի (2-16): Մինչդեռ Աշոտ Բլեյանի՝ նախագահի հետեւողական ընդդիմախոսներից մեկի հաշվեկշիռը դրական է (6-0):

«Սուրհանդակում» («ԱՐ» հեռուստաալիք) նախագահի հաշվեկշիռը զրոյական է (8-8): Այս կայանում ընդհանուր առմամբ նշանային հիշատակումներն ավելի շատ են, քան մյուսներում:

«Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի կողմնորոշումը տվյալ պահին իշխանության ղեկի մոտ գտնվողների կողմն է, ընդ որում՝ հակումը հատկապես պաշտոնի, ոչ թե անձանց կողմն է: Թերթը ծայրահեղ քննադատաբար է տրամադրված նախկին՝ ՀՀԾ-ական իշխանության ներկայացուցիչների հանդեպ:

Մյուս պաշտոնաթերթը՝ «Հայաստանի Հանրապետությունը», նախագահի նկատմամբ ավելի զուսպ է (հաշվեկշիռը՝ 11-10), քան «ՌԱ»-ն (հաշվեկշիռը՝ 42-8), մինչդեռ պակաս հարձակողական է նախկին իշխանությունների նկատմամբ:

«Երկիրն» աչքի է ընկնում նախ եւ առաջ նախկին իշխանությունների նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքով: Որքան էլ տարօրինակ է, այս բացահայտորեն կուսակցական թերթն ավելի քիչ է քաղաքականացված, քան 1999թ. ուսումնասիրված մյուս թերթերը (քաղաքական գործիչներն ամենաքիչ հիշատակումներն ունեն):

Խորապես կուսակցական ավանդույթներ ունեցող մյուս թերթը՝ «Ազգը» (թեւեւ հիմա փոխել է իր կարգավիճակը), նվազագույն քաղաքականացվածության ցուցանիշով երկրորդն է «Երկիրից» հետո: Սա նույնպես անսպասելի էր:

«Հայոց աշխարհն» առավել խիստ է քննադատում նախկին իշխանություններին (Սիրադեղյանի նշանային հիշատակումների հաշվեկշիռը 3-101 է, իսկ Տեր-Պետրոսյանինը՝ 3-84) եւ սատարում է ներկա նախագահին (30-17):

«Հայկական ժամանակ»/«Օրագիրը» «Հայոց աշխարհի» հակոտնյան է: Հետեւողական հակաքոչարյանական արշավ է վարում (նախագահի նշանային հիշատակումների

հաշվեկշիռն է 7-114), որը տարածվում է նաեւ նախագահին մերձավոր մարդկանց վրա, եւ ցուցադրում է նախկին իշխանությունների նկատմամբ իր համակրանքը: Հաշվի առնելով, թե թեմատիկ ինչ համատեքստում են հիշատակվում Սիրադեղյանն ու Տեր-Պետրոսյանը (դատաքննություն, մեղադրող կողմի վկաների ցուցմունքներ եւ այլն), այս քաղաքական գործիչների հաշվեկշիռը (համապատասխանաբար՝ 9-19 եւ 4-20) այնքան էլ անբարենպաստ չէ: Իսկ Քոչարյանի մյուս ընդդիմախոսը՝ Աշոտ Բլեյանը «Հայկական ժամանակի»/«Օրագրի» առանձնահատուկ բարեհաճությունն է վայելում (15-2):

«Առավոտն» իր քաղաքական հակումներով շատ մոտ է «Հայկական ժամանակ»/«Օրագիր» թերթին. Քոչարյան՝ 17-62, Սիրադեղյան՝ 17-35, Տեր-Պետրոսյան՝ 11-28, Բլեյան՝ 17-4:

«Գոլոս Արմենիին», «Նովոյե վրեմյան» եւ «Իրավունքը» ամբողջ տարվա ընթացքում քննադատաբար են վերաբերվել հայկական քաղաքականության առաջատար դեմքերի նկատմամբ, հատկապես նրանց, ովքեր մարմնավորում են նախորդ իշխանությունները: Ընդ որում, այս հրատարակություններից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններն է ունեցել: Այսպես օրինակ. «ԳԱ»-ն զգալիորեն գերազանցում է մյուս երկուսին նշանային հիշատակումների քանակով: «Իրավունքը» քաղաքական վերնախավից առանձնացրել է ընդգծված դրական է վերաբերել թերթի հիմնադիր-կուսակցության՝ «Սահմանադրական իրավունք» միության առաջնորդ Հրանտ Խաչատրյանին, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախկին նախարար Սամվել Բաբայանին (նշանային հիշատակումների հաշվեկշիռը երկուսի մոտ էլ 10-0 է), ինչպես նաեւ խորհրդարանական «Իրավունք եւ միաբանություն» դաշինքում Խաչատրյանի գործընկերոջը՝ Արտաշես Գեղամյանին (9-2):

ԹԵՐԹԱՅԻՆ մակերեսի եւ եթերային ժամանակի առումով, որ հայացքների/կարծիքների արտահայտման համար ընդհանուր առմամբ տրամադրել են դիտարկված բոլոր լրատվամիջոցները, մրցակցությունից դուրս է Ռոբերտ Քոչարյանը: Հատկանշական է, որ քաղաքական առօրյային անմիջականորեն չմասնակցող Իզոր Մուրադյանը թերթերում իրեն տրամադրված միագումար մակերեսի առումով առաջատարների շարքում է (4-րդ տեղում): Նա այս արդյունքին է հասել ակտիվ հրապարակախոսական գործունեության եւ տարբեր հրատարակությունների էջերում հաճախակի հայտնվելու հաշվին:

Քաղաքական գործիչ-հեղինակներ ունենալու հարցում ամենամեծ շահագրգռությունը հանդես է բերել «Առավոտը»: Հայացքների/կարծիքներին տրամադրված մակերեսի առումով առաջին չորս տեղերն այստեղ գրավել են հատկապես այն գործիչները, որոնք թերթում սեփական հոդվածներն են հրապարակել: Մյուսներից մեծապես առաջ է անցել վերոհիշյալ Իզոր Մուրադյանը (նա «Առավոտում» ակտիվորեն տպագրվել է առաջին կիսամյակում): Նրան հաջորդում է Աշոտ Բլեյանը, որ տարվա կեսերին քննչական մեկուսարանից թերթին էր ուղարկում իր հոդվածները, այնուհետեւ՝ Վիգեն Խաչատրյանն ու Դավիթ Շահնազարյանն են, որ «Առավոտի» հեղինակի կարգավիճակում ակտիվորեն են աշխատել 1999թ. վերջերին:

Նույն ցուցանիշով Իզոր Մուրադյանն առաջատար է նաեւ «Գոլոս Արմենիի»-ում, իսկ «Հայոց աշխարհում», որը նա երկրորդ կիսամյակում գերադասել էր «Առավոտից», մակերեսի առումով գրավում է երրորդ տեղը:

«Հայկական ժամանակ»/«Օրագիր» թերթում է նաեւ, որ այդ ցուցանիշով առաջատարը քաղաքական գործիչ է՝ Աշոտ Բլեյանը:

Մի շարք թերթեր տարվա արդյունքներով նույնպես բացահայտ «կուսակցական» մոտեցում են դրսևորել: ՀՀԴ առաջնորդ Վահան Հովհաննիսյանն իր կուսակցության հո-

վանու տակ լույս տեսնող երկու թերթերում էլ՝ «Երկիրում» եւ «Հայոց աշխարհում», ամենաշատ մակերեսն է ստացել: «Իրավունքում» այդ ցուցանիշով մրցակցությունից դուրս են Հրանտ Խաչատրյանն ու Արտաշես Գեղամյանը: ՀՀՇ պաշտոնաթերթ «Հայքում» (լույս է տեսել մինչեւ մայիսի վերջը) մակերեսի առումով առաջատարը Վանո Սիրադեղյանն է:

Կայուն հակումներ ունի «Ազգը»: Տեւական ժամանակ նրա սիրելիները նախագահն ու արտաքին գործերի նախարարն են: Ընդ որում, տարվա արդյունքներով Քոչարյանն ու Օսկանյանն առաջատար են թե՛ հիշատակումների քանակով, թե՛ հայացքներին/կարծիքներին տրված մակերեսով: Բացի այդ, երկուսն էլ նշանային հիշատակումների դրական հաշվեկշիռ ունեն:

Նույնն է 1999թ. առավելագույն մակերես ստացած քաղաքական գործիչների խումբը «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթերում. Ռոբերտ Քոչարյան, խորհրդարանի նախկին խոսնակ Խոսրով Հարությունյան, Վարդան Օսկանյան, նախկին վարչապետ Արմեն Դարբինյան եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետության նախագահ Արկարի Դուկասյան: Ընդ որում, երկու թերթերում էլ Քոչարյանը զգալիորեն առաջ է անցել իրեն հաջորդողներից:

Պետական հեռուստատեսային եւ ռադիոկայաններում նույնպես նույն քաղաքական գործիչներն են առաջատարների խմբում, ինչ եւ պաշտոնաթերթերում: Առավել էական առանձնահատկությունը, որ «Հայլուրին» (Ազգային հեռուստատեսություն) տարբերում է «Լուրերից» (Ազգային ռադիո), այն է, որ առաջատարը եթերային ժամանակի առումով անհամեմատ առաջ է անցել իրեն հաջորդող գործիչներից: «Հայլուրում» Ռոբերտ Քոչարյանը (9.902 վրկ.) երկրորդ տեղում գտնվողից առաջ է անցել ավելի քան 7.000 վրկ.-ով, իսկ «Լուրերում» նախագահի (4.965 վրկ.) առավելությունը երկրորդ տեղից 2500 վրկ.-ից պակաս է:

Լրատվական հեռուստածրագրերից տարվա արդյունքներով «կուսակցականության» տարրն աչքի է ընկել «Մշակույթ»/«Պրոմթեսլսի» «Լուրեր»/«Լրաբեր» ծրագրում (դիտարկվել է հուլիսի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը) եւ «Այգ» հեռուստաալիքի «Լուրեր» ծրագրում (դիտարկվել է հուլիսի 1-ից մինչեւ նոյեմբերի 29-ը): Առաջինն առանձնապես հաճույքով է ամբիոն տրամադրում հանրապետական կուսակցության ներկայացուցիչներին, երկրորդը՝ «Օրինաց երկիր» կուսակցությանը: Մասնավորապես «Պրոմթեսլս»/«Մշակույթ»-ում եթերային ժամանակի առումով Ռոբերտ Քոչարյանից հետո երկրորդ տեղում է հանրապետական կուսակցության եւ խորհրդարանական «Միասնություն» խմբակցության առաջնորդ Անդրանիկ Մարգարյանը: Իսկ «Այգում» Քոչարյանից, Վարդան Օսկանյանից եւ Արմեն Խաչատրյանից հետո չորրորդ տեղը գրավել է «Օրինաց երկիր» կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանը: Եթե մի երկամսյա փուլի արդյունքներով բավարար հիմքեր չկային նման եզրահանգումների համար, ապա կիսամյակը դրա համար բավականին լուրջ ժամանակաշրջան է:

Ի վերջո, անբացատրելի միահամուռություն են դրսևորել «Սուրհանդակ» («ԱՐ» հեռուստաալիք) եւ «Այբ-Ֆե» («Ա1+» հեռուստաալիք) լրատվական ծրագրերը: Տրամադրված եթերային ժամանակի ծավալով առաջատարների եռյակը երկուսի մոտ էլ նույնն է՝ Ռոբերտ Քոչարյան, «Ինքնորոշում» միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյան, ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մանուկյան: Ջարմանալին այստեղ ոչ թե ընդհանրապես համընկնումն է, այլ այսքան ոչ օրինաչափ համադրության համընկնումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՍ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1 հունվարի - 31 մարտի, 2000

ԱՅՍ ՓՈՒԼՈՒՄ Երեւանի մամուլի ակումբի դիտարկող խումբն ուսումնասիրել է Հայաստանի առաջատար լրատվամիջոցներում թեմաների առաջնայնությունը: Այդ նպատակով հաշվարկվել է առաջին (A2 չափի թերթերի համար) եւ առաջին երեք (A3 չափի թերթերի համար) էջերում այս կամ այն թեմայով հրապարակումների թիվը:

Ուսումնասիրվող մակերեսը առաջին էջերով սահմանափակելը պայմանավորված է դիտարկման նախորդ փուլերի փորձով: 1998թ. մայիս-դեկտեմբերին, որոշելով հայկական թերթերի թեմատիկ հակումները (ամբողջ ծավալով), դիտարկող խումբը եկավ այն եզրակացության, որ թերթերի ներքին էջերը բավականին հաճախ լցվում են պատահական, ոչ պարտադիր նյութերով: Այդ պատճառով էլ հրատարակության թեմատիկ քաղաքականության որոշման ժամանակ դրանց հաշվառումը հանգեցնում է պատկերի որոշակի խեղաթյուրման: Բացի այդ, ընթերցողները նույնպես բավականաչափ ուշադիր չեն այդ էջերի նկատմամբ, ինչն էլ իր հերթին նվազեցնում է դրանց նշանակությունն ու դրանց նկատմամբ հետազոտական հետաքրքրությունը: Ինչ վերաբերում է վերջին էջերին, դրանց բովանդակությունը (սպորտ, զվարճալի նյութեր) հրատարակության պատկերը պարզելու համար նվազագույն նշանակություն ունի: Ելնելով դրանից՝ նեղացվել է ստորեւ ներկայացվող ուսումնասիրության առարկան:

Բնական է, որ ցանկացած ընտրողական մոտեցում իր թերությունները կարող է ունենալ: Սակայն դիտարկման տարբեր մեթոդիկաների կիրառումը եւ դրանց արդյունքների հետագա համադրումը հնարավորություն են տալիս հետազոտողներին՝ առավելագույնս մոտենալ օբյեկտիվ պատկերին: Տարբեր թեմաներով հրապարակումների քանակից բացի, այս տարվա հունվար-մարտ ամիսներին արձանագրվել է նաեւ վերնագրերի բառային կազմը, որ հնարավորություն է տալիս բացահայտել, թե ինչ շեշտադրությամբ են ԶԼՍ-ները լուսաբանել այս կամ այն թեման

ԴԻՏԱՐԿՄԱՆ արդյունքների համաձայն՝ հայկական օրաթերթերում հունվար-մարտ ամիսներին գլխավոր **ընդհանուր** թեման ներքաղաքական իրադրությունն էր: Սա բնական է, եթե հաշվի առնենք, թե այս տարվա առաջին եռամսյակում ինչ կտրուկ փոփոխություններ էին տեղի ունեցել իշխանության եւ ազդեցության գոտիների համար պայքարում: Միայն խորհրդարանական պաշտոնաթերթերը՝ «Հայաստանի Հանրապետություն» ու «Ռեսպուբլիկա Արմենիան» էին, որ ուշադրություն չէին բեւեռում այդ պայքարին՝ գերադասելով պահպանել երկրի առաջնորդների «ջայլամային» վարքագիծը, որոնք մինչեւ վերջին պահը (հերթական պարտվածի հրաժարականը) պնդում էին, թե ղեկավարության ներսում ոչ մի լուրջ հակասություն չկա: Եւ «ՀՀ»-ի, եւ «ՌԱ»-ի առաջին էջերում առավել հաճախ հանդիպող ընդհանուր թեման էր՝ «Հայաստանի տնտեսական համագործակցությունը այլ երկրների հետ»: Պաշտոնաթերթերի՝ ամեն ինչին «վարդագույն ակնոցով» նայելու եւ գոյություն չունեցող նվաճումների մասին խոսելու միտումն այստեղ էլ է դրսևորվել:

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետություն» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՀՀ» օրաթերթի խմբագրակազմ: Սովորական ծավալը՝ 4 տպ. մամուլ (A2 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: 12.01.2000-ի համարը լույս է տեսել 5.500 օրինակ տպաքանակով: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 59 համար, որից 1 համար՝ 5 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 10 էջ):

Տեղեկանք. «Ռեսպուբլիկա Արմենիա» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1990թ.: Հիմնադիր՝ ՀՀ Գերագույն Խորհուրդ, համահիմնադիր՝ «ՌԱ» լրագրողական կոլեկտիվ: Հայտարարված տպաքանակը՝ 3.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 52 համար. 22 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ), 6 համար՝ 3տպ. մամուլ ծավալով (A3 չափի 12 էջ), 23 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 4 էջ) եւ 1 համար՝ 3 տպ. մամուլ ծավալով (A2 չափի 6 էջ):

Իսկ ամենաքաղաքականացված հրատարակությունների իրենց համբավը հաստատել են **«Առավոտը»** (ներքաղաքական թեմաներին նվիրված ընդհանուր բնույթի 91 հրապարակում՝ առաջին երեք էջերում), **«Հայոց աշխարհը»** (70) եւ **«Հայկական ժամանակը»** (69): Բացի այդ, «Առավոտն» ու «Հայկական ժամանակը» համապատասխանաբար 83 եւ 80 հրապարակում են ունեցել քաղաքական կուսակցությունների գործունեության վերաբերյալ («Հայոց աշխարհը»՝ ընդամենը 17), սակայն այստեղ հարկ է հաշվի առնել, որ առաջին երկու թերթերն ավանդաբար առաջին էջերում փոքրածավալ ակնարկներ են տպագրում, ինչի հաշվին հրապարակումների ընդհանուր թիվը նրանց մոտ ավելի մեծ է:

Տեղեկանք. «Ազգ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1991թ.: Հիմնադիր՝ հիմնադիրների խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 59 համար:

Տեղեկանք. «Առավոտ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1994թ.: Հիմնադիր՝ «Առավոտ» թերթի խմբագրական խորհուրդ: Սովորական ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5.000 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 59 համար, որից 3-ը՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ):

Տեղեկանք. «Հայոց աշխարհ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրը՝ մասնավոր անձ է: Հայտարարված տպաքանակը՝ 3.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 59 համար. 44 համար՝ 2 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 8 էջ) եւ 15 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ):

Ուսումնասիրված թերթերի մեծ մասում առավել հաճախ լուսաբանված իրադարձություններից են քրեական հետաքննություններն ու աղմկահարույց դատաքննությունները: **«Առավոտում»** Հայոց համազգային շարժման առաջնորդ Վանո Սիրադեղյանի գործով (մեղադրվում է սպանությունների ու մահափորձերի կազմակերպման մեջ) 58 հրապարակում է եղել, 1999-ի հոկտեմբերի 27-ին խորհրդարանում տեղի ունեցած ահաբեկչության մասին՝ 50, «Նոր ուղի» կուսակցության առաջնորդ Աշոտ Բլեյանի գործով (մեղադրվում է ֆինանսական չարաշահումների մեջ)՝ 20: **«Հայկական ժամանակում».** «հոկտեմբերի 27»-ի գործով՝ 50, Բլեյանի գործով՝ 38, Սիրադեղյանի գործով՝ 26: **«Հայոց աշխարհում».** Սիրադեղյանի գործով՝ 44, «հոկտեմբերի 27»-ի գործով՝ 41, Արմեն Տեր-Սահակյանի եւ մյուսների գործով (մեղադրվում են Սիրադեղյանի գործին առնչվող քաղաքական սպանությունների եւ մահափորձերի մեջ)՝ 11: **«Նորաթերթում».** «հոկտեմբերի 27»-ի գործով՝ 37, Սիրադեղյանի գործով՝ 18, Տեր-Սահակյանի գործով՝ 12: **«Ազգում».** «հոկտեմբերի 27»-ի գործով՝ 26, Սիրադեղյանի գործով՝ 23, Բլեյանի եւ Տեր-Սահակյանի գործով՝ 5-ական: **«Ժամանակում».** «հոկտեմբերի 27»-ի գործով՝ 24, Սիրադեղյանի գործով՝ 17, Բլեյանի գործով՝ 5: **«Ռեսպուբլիկա Արմենիայում».** «հոկտեմբերի 27»-ի գործով՝ 28, Սիրադեղյանի գործով՝ 15, Տեր-Սահակյանի գործով՝ 8:

Տեղեկանք. «Հայկական ժամանակ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1997թ.: Հիմնադիրներ՝ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցություն եւ «Մտավորական Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպություն: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 2.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 58 համար:

Տեղեկանք. «Ժամանակ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1998թ.: Հիմնադիր եւ հրատարակիչ՝ թերթի հիմնադիր խորհուրդ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ (A3 չափի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 1.500 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 59 համար:

Տեղեկանք. «Նորաթերթ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթը 5 անգամ): Հիմնադրվել է 1999թ.: Հիմնադիր՝ «Նորաթերթ» ՍՊԸ: Հայտարարված տպաքանակը՝ 2.550 օրինակ: Գինը՝ 100 դրամ: Դիտարկված ժամանակամիջոցում լույս է տեսել 59 համար. 48 համար՝ 4 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 16 էջ) եւ 11 համար՝ 6 տպ. մամուլ ծավալով (A3 չափի 24 էջ):

«Հայաստանի Հանրապետություն» այս առումով զգալիորեն տարբերվում էր մյուս ուսումնասիրվող թերթերից: «ՀՀ»-ն երբեք ոչ մի աղմկահարույց գործի չի անդրադարձել առաջին էջում, բացառությամբ «հոկտեմբերի 27-ից» (14 հրապարակում):

Նույնիսկ 2000 թվականի սկզբի համար այնպիսի հրատապ թեմաներ, ինչպիսիք էին ՀՀ սահմանադրության՝ նախագահի իրավասությունները նվազեցնելու միտում ունեցող ուղղումները կամ նախարարների կաբինետում արմատական կառուցվածքային փոփոխությունները, առաջնությունը զիջել են հետաքննություններին եւ դատաքննություններին:

Հրապարակումների «քաղաքական-քրեական» ուղղվածությունը պահպանվում է նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցում: ԼՂՀ նախագահի դեմ մարտի 22-ին տեղի ունեցած մահափորձի՝ մի շաբաթից քիչ ավելի տեւող լուսաբանումը բական եղավ, որ ուսումնասիրվող 8 ՁԼՄ-ներից 3-ում այս թեման հրապարակումների թվով գերազանցի դարաբայան հակամարտության կարգավորման հարցը: Մինչդեռ վերջինս արդեն ավելի քան մեկ տասնամյակ է, բնականաբար, նաեւ դիտարկման այս փուլի բոլոր երեք ամիսներին, հայկական մամուլի ուշադրության կենտրոնում է գտնվում: Ավելին, երկու թերթում (**«Առավոտ»** եւ **«Նորաթերթ»**) հակամարտության հիմնախնդիրը նահանջել է նույնիսկ երրորդ տեղ՝ առաջ թողնելով նաեւ ԼՂՀ ներքաղաքական հակասությունների թեման (**«Առավոտում»** վերջինս առաջին տեղում է (75):

Հայկական լրատվամիջոցներում տնտեսական հիմնահարցերը զգալիորեն զիջում են քաղաքականությանը: Եզակի հրապարակումներ էին միայն նվիրված կաշառակերությանը, որն այսօր երկրի զարգացման գրեթե գլխավոր խոչընդոտն է համարվում: Մի քիչ ավելի ուշադրության են արժանացել նաեւ մյուս սոցիալ-տնտեսական թեմաները: Միայն **«Ժամանակ»**-ն է, որ քիչ թե շատ պարբերաբար է անդրադարձել արդյունաբերության ու գյուղատնտեսության խնդիրներին:

Մի քիչ անսպասելի էին այս տարվա առաջին եռամսյակում հայկական օրաթերթերի արտաքին քաղաքական նախապատվությունները: Եթե հայ-ռուսական հարաբերություններին տրված առավելագույն ուշադրությունը, հաշվի առնելով մեր երկրի քաղաքական ավանդույթները, հասկանալի ու օրինաչափ է թվում (բոլորից շատ հրապարակումներ ունի **«Հայկական ժամանակը»**՝ 23, բոլորից քիչ՝ **«Հայոց աշխարհը»**՝ 12), ապա Հայաստանի՝ Եւ անդամության հարցին հազվադեպ անդրադարձը դժվար է բացատրել: Բոլորից հաճախ իր առաջին էջերն այդ թեմային նվիրել է **«Ռեսպուբլիկա Արմենիան»**՝ 12 հրապարակում, բոլորից հազվադեպ՝ **«Ազգը»**՝ 1: Թեեւ, հակառակ այս ցուցանիշի, վերջինիս ընդհանրապես բնորոշ է արտաքին քաղաքական եւ միջազգային թեմաներին թե՛ ուշադրություն եւ թե՛ կարեւոր տեղ հատկացնելը: **«Ազգը»** թերեւս միակ թերթն է Հայաստանում, որն առաջին էջերում պարբերաբար լուսաբանում է արտասահմանյան երկրներում եւ սփյուռքում կատարվող իրադարձությունները:

Մյուս երկրներից հաճախ հայկական թերթերի առաջին էջերում դարձյալ Ռուսաստանն է հայտնվում, ընդ որում՝ չէջենական թեման գերակշռում էր այս տարվա առաջին եռամսյակում՝ բոլոր թերթերում հրապարակումների միագումար թվով զգալիորեն գերազանցելով նախագահական ընտրարշավը եւ հենց ՌԴ նախագահի ընտրությունները: Այս թեմաներով հրապարակումների հարաբերակցությունը բավականին խոսուն է. **«Ազգում»** (38 եւ 5), **«Հայոց աշխարհում»** (26 եւ 5), **«Հայաստանի Հանրապետությունում»** (19 եւ 0): Այդուհանդերձ առանձին թերթերում (**«Ժամանակ»**, **«Ռեսպուբլիկա Արմենիա»**, **«Հայկական ժամանակ»**, **«Առավոտ»**, **«Նորաթերթ»**) նախագահական ընտրարշավը, թեեւ անցան, բայց գերազանցել է չէջենական պատերազմը:

Հայկական տպագիր պարբերականների ուշադրությունը գրավող երկրորդ երկիրը, ուսումնասիրվող բոլոր թերթերի միագումար ցուցանիշով, Թուրքիան է: Դրանց, գրեթե հավասար ցուցանիշներով, հետեւում են ԱՄՆ-ն եւ Հայաստանի երեք հարեւանները՝ Ադրբեջանը, Իրանն ու Վրաստանը:

ՎԵՐՆԱԳՐԵՐՈՒՄ օգտագործված բառերը որոշակի առումով բնութագրում են ՁԼՄ-ների վերաբերմունքը լուսաբանվող թեմային: **«Հայաստանի Հանրապետությունում»** առաջին էջերի վերնագրերում առավել հաճախ օգտագործվել են «Հայաստան» բառի ածանցյալները եւ «ՀՀ» հապավումը: Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ տարբեր տարբերակներով այստեղ վերնագրերում ավելի հաճախ է հիշատակվել, քան ցանկացած այլ թերթում՝ 55 անգամ, վարչապետ Արամ Սարգսյանը՝ 22, իսկ խորհրդարանի խոսնակ Արմեն Խաչատրյանը՝ 13 անգամ (այստեղ եւ այսուհետ արձանագրվել են միայն այն դեպքերը, երբ համապատասխան անձը միանշանակորեն ճանաչվում է, ասենք՝ ՀՀ նախագահ կամ Ռոբերտ Քոչարյան, ՀՀ վարչապետ կամ Արամ Սարգսյան եւ այլն, բայց ոչ՝ պարզապես «նախագահ» կամ «վարչապետ»): **«Ռեսպուբլիկա Արմենիայում»** նույնպես առավել գործածական են «Հայաստան»-ից ածանցված բառերը, երկրորդ տեղում են «Ղարաբաղ» կամ «Արցախ» արմատ ունեցող բառերը, իսկ երրորդում «խորհրդարան» արմատով բառերը: Երկրի ղեկավար եռյակը վերնագրերում հիշատակվում է հետեւյալ հաճախականությամբ՝ նախագահ՝ 14, խոսնակ՝ 5, վարչապետ՝ 3: Կարելի է նշել նաեւ, որ «ՀՀ»-ն եւ «ՌԱ»-ն վերնագրերի ավանդական, պաշտոնաթերթերին հատուկ ոճ են կիրառում, հետեւաբար այդպիսին են նաեւ առաջին էջերի նյութերի շեշտադրումները:

«Ազգը» ձգտում է վերնագրերը դարձնել հնարավորինս տեղեկատվական, հրապարակման բովանդակությանը համահունչ: Պատահական չէ, որ այս կամ այն էական բառերի կիրառման հաճախականությունն այստեղ համապատասխանում է այն նյութերի քանակին, որտեղ այդ բառերն առանցքային են, բնորոշում են թեման: Այսպես՝ Հայ Առաքելական եկեղեցին եւ իր առաջնորդը հիշատակվում են 21 անգամ, իսկ այդ թեմայով հրապարակումները՝ 16-ն են, «եղեռն» բառը վերնագրերում հիշատակվում է 24 անգամ, իսկ այդ թեմայով նյութերը 48-ն են: Մյուս օրաթերթերի համեմատությամբ սա հարաբերակցության շատ բարձր աստիճան է:

Հատկապես հատկանշական է «Ազգ» եւ **«Հայկական ժամանակ»** թերթերի վերնագրերի տարբերությունը: Վերջինում վերնագրերի մեջ օգտագործված բառերն ավելի հաճախ ցույց են տալիս հրապարակման նկատմամբ վերաբերմունքը, քան՝ արտացոլում են բովանդակությունը: Այստեղ շատ են օժանդակ, վերացական իմաստ ունեցող բառերը:

«Նորաթերթի» վերնագրերում առավել հաճախ օգտագործվել են «Ղարաբաղ» եւ «Արցախ» բառերից ածանցվածները (73 անգամ), 17 անգամ հիշատակվել է ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանը, 5 անգամ՝ ԼՂՀ բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանը, ինչը վկայում է ղարաբաղյան հիմնահարցի նկատմամբ թերթի ընդգծված ուշադրության մասին:

Ուսումնասիրված մյուս թերթերի վերնագրերում օգտագործված բառերի կոնկրետ առանձնահատկությունը կարող է բացահայտվել ավելի մանրակրկիտ վերլուծության արդյունքում:

Ինչ վերաբերում է ՀՀ ղեկավար եռյակին, ապա ոչ պաշտոնական թերթերում նրանց հիշատակումների հաճախականությունը էապես տարբերվում է: «Նորաթերթում» վարչապետը (21 անգամ) առաջ է անցել նախագահից (12 անգամ), իսկ խոսնակը հիշատակվել է 6 վերնագրերում: «Ազգում» նախագահը վստահ առաջատարն է (29)՝ զգալիորեն առաջ անցնելով իրենից հետո եկող վարչապետից (4): Պատկերը նման է նաեւ «Հայկական ժամանակում». նախագահը՝ 23, վարչապետը՝ 2: «Հայոց աշխարհ»-ը առաջին դեմքերին այնքան էլ հաճախ չի հիշատակում (նախագահը՝ 9, վարչապետը՝ 3), «Առավոտը» (նախագահ՝ 7) եւ «Ժամանակը» (նախագահ՝ 7)՝ շատ ավելի քիչ: